Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի
Վանաձորի գրասենյակ

Իրավապաշտպանների վիճակը Հայաստանում 2013 թ.

Զեկույց

SIGRID RAUSING TRUST

Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի
Վանաձորի գրասենյակ

Իրավապաշտպանների վիճակը Հայաստանում 2013թ.

Զեկույց

Վանաձոր 2014

Հեղինակներ՝ Արթուր Սաքունց
Վարդինե Գրիգորյան

Սույն տպագրությունն իրականացվել է Սիգրիդ Ռոզինգ Թրասթ հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ՝ ՀՔԱ Վանաձորի գրասենյակի ընդհանուր աջակցության դրամաշնորհի շրջանակներում:

Սույն զեկույցի բովանդակությունն արտացոլում է հեղինակների կարծիքը և կարող է չհամապատասխանել ֆինանսավորող կազմակերպության տեսակետներին:

Բովանդակություն

Ներածություն 7
Ընդհանուր համատեքստ 10
Մարդու իրավունքների պաշտպանության վիճակի ընդհանուր նկարագիրը..... 19
ՄԱԿ-ի Իրավապաշտպանների վիճակի հարցերով հատուկ զեկուցողի Հայաստանի վերաբերյալ առաջարկությունների կատարումը 35
Կառավարությանը ներկայացված առաջարկների իրագործում.....35
Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ ներկայացված առաջարկների իրագործում.....48
Իրավապաշտպաններին ներկայացված առաջարկների իրագործում54
ՀՔԱ Վանաձորի գրասենյակի առաջարկությունները Հայաստանի կառավարությանը..... 59
Լրացուցիչ տեղեկություններ 2011-2012թթ. արձանագրված դեպքերի վերաբերյալ 61
«Դիայվայ» («D.I.Y») ակումբի պայթեցում.....61
Արման Վեզիրյան 61
2013 թ. դեպքեր..... 63
Դեպք 1. Խաղաղասիրության թեմայով դասընթաց ուսուցիչների համար 63
Դեպք 2. Նարինե Իսմայիլի և Արտակ Համբարձումյան 63
Դեպք 3. Մարինե Պետրոսյան և Նուլնե Արևշատյան 65
Դեպք 4. Մարինե Խառատյան և Գայանե Սարիբեկյան 66
Դեպք 5. Մարինե Մարտիրոսյան և Հռիփսիմե Ջեբեջյան 66
Դեպք 6. Ծովինար Նազարյան 67
Դեպք 7. Ուսանողների դասադուլ 68
Դեպք 8. Երդմնակալության օր.....69
Դեպք 9. Վարդգես Գասպարի, Ոստիկանապետ 1.....70
Դեպք 10. Հակոբ Կարապետյան 70
Դեպք 11. Թամարա Յայլոյան.....72
Դեպք 12. Կարեն Հարությունյան և Ռուզան Գրիգորյան.....72
Դեպք 13. Հռիփսիմե Ջեբեջյան, ավագանու ընտրություններ 73
Դեպք 14. Լյուքս Ստեփանյան 73
Դեպք 15. Վարդգես Գասպարի, Հարսնաքար.....75
Դեպք 16. Վարդգես Գասպարի, Ոստիկանապետ 2.....75
Դեպք 17. Վարդգես Գասպարիի տուն 76
Դեպք 18. Միսակ Համբարձումյան 77
Դեպք 19. Հենրիկ Նավասարդյան 78
Դեպք 20. Լայնածավալ ակցիա քաղաքապետարանի դիմաց.....78
Դեպք 21. Վրաններ.....79
Դեպք 22. Ընդդեմ վճարովի կայանատեղերի 80
Դեպք 23. Կարեն Հարությունյանի ավտոմեքենան.....82
Դեպք 24. Ծողիկ Մելքոնյան.....82
Դեպք 25. Կանանց ռեսուրսային կենտրոն.....84

Դեպք 26. Տիգրան Խզմալյան և Անուշավան Գրիգորյան 85
Դեպք 27. Անուշավան Գրիգորյան 85
Դեպք 28. Ֆլեշմոբ՝ առաջին փորձ 86
Դեպք 29. Կոմիտաս 5. Արգիշտի Կիվիրյան 87
Դեպք 30. Ֆլեշմոբ՝ երկրորդ փորձ 90
Դեպք 31. Միհրան Մարգարյան և Բաբկեն Տեր-Գրիգորյան 92
Դեպք 32. Մկրտիչ Տոնոյան 92
Դեպք 33. Քնելու համար բերման ենթարկում 93
Դեպք 34. Արթուր Սաքունց 94
Դեպք 35. Վարդգես Գասպարիի բջջային հեռախոսը 94
Դեպք 36. Բողոքի ակցիա Մաքսային միության դեմ 95
Դեպք 37. Արման Ալեքսանյան 96
Դեպք 38. Տուժած տարեց կին 96
Դեպք 39. Հայկակ Արշամյան և Սուրեն Սաղաթելյան 97
Դեպք 40. Ավագանու նիստի մասնակցությունը խոչընդոտվել է 98
Դեպք 41. Ակտիվիստների մեքենաները վնասվել են 98
Դեպք 42. Վոլոդյա Ավետիսյան 99
Դեպք 43. Փակ շուկա 101
Դեպք 44. Մահացած զինծառայողների մայրեր 102
Դեպք 45. Ակտիվիստներին չեն թույլատրել մասնակցել ավագանու նիստին 102
Դեպք 46. Շանթ Հարությունյան և մյուսներ 103
Դեպք 47. Խուդոյանների ընտանիքը 105
Դեպք 48. Պուտինի այցը 106
Դեպք 49. Գոռ Առաքելյան 109
Դեպք 50. Ամանորյա լույսեր 109
Դեպք 51. Գազի գործարքն օրակարգում 110
Դեպք 52. Գազի գործարքի ընդունում 111
Դեպք 53. Զրպարտության մեղադրանք Վարդգես Գասպարիի դեմ 112
Դեպք 54. Տարոն Մարգարյանի դոկտորական թեզի պաշտպանությունը 113
Ինդեքս 115
Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակի մասին 116

Ներածություն

2013 թվականին Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակը (ՀՔԱ Վանաձորի գրասենյակը) Հարավային Կովկասի իրավապաշտպանների ցանցի Հայաստանյան անդամների հետ համատեղ հրապարակեց զեկույց 2011-2012թթ. Հայաստանում իրավապաշտպանների վիճակի մասին[1]: Զեկույցում ամփոփվել են իրավապաշտպանների նկատմամբ ճնշումների և հետապնդումների դեպքերը:

Ներկայացվող զեկույցն ամփոփում է 2013 թվականին իրավապաշտպանների պաշտպանության վիճակի վերաբերյալ տեղեկատվությունը ինչպես նաև 2011-2012թթ. զեկույցում ընդգրկված որոշ դեպքերի լրացուցիչ ուսումնասիրություն: Զեկույցում նաև գնահատվել է Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնած պարտավորությունների, այդ թվում՝ Իրավապաշտպանների վիճակի հարցերով ՄԱԿ-ի հատուկ զեկուցողի (ՀԶ) 2010թ. Հայաստանի վերաբերյալ առաջարկությունների կատարումը:

2013 թվականը նշանավորվեց Հայաստանի Հանրապետության կողմից Եվրամիության հետ ասոցացման համաձայնագրի ստորագրումից հրաժարվելու և Մաքսային միությանը անդամագրվելու մասին Սերժ Սարգսյանի միանձնյա որոշմամբ:

Ասոցացման համաձայնագրի ստորագրումից հրաժարվելը կասեցրեց Հայաստանի Հանրապետությունում մարդու իրավունքների և ժողովրդավարության բնագավառներում բարեփոխումների գործընթացը, ստեղծեց անորոշություն

[1] Իրավապաշտպանների վիճակը Հայաստանում 2011 - 2012 թթ. http://hcav.am/wp-content/uploads/2013/02/Report-Armenian1.pdf

քաղաքացիական հասարակության շրջանում՝ իրադարձությունների հետագա ընթացքի վերաբերյալ: Թե ինչպես կզարգանան ժողովրդավարական գործընթացները, ինչպիսի արժեհամակարգ կհաստատվի իշխանությունների նոր օրակարգով, և ինչպիսի ազդեցություն կունենա այդ ամենը որոշումների կայացման գործընթացում քաղաքացիական հասարակության մասնակցության վրա՝ դեռևս հայտնի չէ: Մաքսային միության անդամ երկրներում՝ Ռուսաստանում, Բելառուսում և Ղազախստանում, քաղաքացիական հասարակության իրավունքների սահմանափակման և ճնշումների ընդունված գործելակերպը պետական քաղաքականություն է դարձել: Միաժամանակ Հայաստանի Հանրապետությունում իրավապաշտպան ակտիվիստների նկատմամբ ոտնձգությունների աճը ուրվագծում է քաղաքացիական հասարակության նկատմամբ նմանատիպ դիրքորոշման որդեգրումը Հայաստանի Հանրապետության իշխանությունների կողմից:

2013 թվականին Հայաստանում իրավապաշտպանների նկատմամբ արձանագրված խախտումների առանձնահատկությունների բերումով այս զեկույցը կարող է հետաքրքրություն ներկայացնել ոչ միայն Իրավապաշտպանների վիճակի հարցերով ՄԱԿ-ի հատուկ զեկուցողի, այլև Հավաքների և միավորումների ազատության հարցերով ՄԱԿ-ի հատուկ զեկուցողի համար: Սույն զեկույցի որոշ հատվածներ Նորվեգիայի հելսինկյան կոմիտեի և «Գործընկերություն հանուն բաց հասարակության» նախաձեռնության հետ համատեղ ներկայացվել են ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հարցերով խորհրդի Համընդհանուր պարբերական վերանայման 2015 թ. 21-րդ նստաշրջանին:

Զեկույցը պետք է հետաքրքրի նաև Հայաստանի Հանրապետության իշխանություններին և ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանին, ովքեր պատասխանատու են Իրավապաշտպանների վիճակի հարցերով ՄԱԿ-ի հատուկ զեկուցողի, միջազգային և տարածաշրջանային

կազմակերպությունների հանձնարարականների, ինչպես նաև մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում Հայաստանի Հանրապետության ստանձնած այլ պարտավորությունների իրագործման համար:

Զեկույցի հիմքում ընկած են 2013 - 2014թթ. լրատվամիջոցների հրապարակած տեղեկություններ, գործընկերներների կողմից տրամադրված և այլ նյութեր, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին ուղղված հարցումների արդյունքում ստացված տեղեկությունները:

ՀՔԱ Վանաձորի գրասենյակը շնորհակալություն է հայտնում այն գործընկերներին, ովքեր աջակցել են զեկույցում ընգրկված տեղեկատվության հավաքմանը և ներողամտություն է հայցում, եթե որևէ միջադեպ զեկույցի տեսադաշտից դուրս է մնացել, և հայտնում է իր պատրաստակամությունը, նկատված բացթողումները ընգրկելու վերաբերյալ:

Սույն զեկույցի իմաստով իրավապաշտպան են համարվում նրանք, ովքեր անհատական կամ խմբային գործունեությամբ պաշտպանում են մարդու իրավունքները[2]: Նման խմբերը ներառում, սակայն չեն սահմանափակվում հետևյալով՝ ՀԿ-ներ, ակտիվիստներ, փաստաբաններ, իրավաբաններ, իրավունքների խախտումների մասին իրազեկողներ և լրագրողներ[3]:

[2] Իրավապաշտպանների վիճակի հարցերով ՄԱԿ-ի հատուկ զեկուցող (ՀԶ) «Who is a defender» («Ով է իրավապաշտպանը»), http://www.ohchr.org/EN/Issues/SRHRDefenders/Pages/Defender.aspx

[3] Սույն զեկույցում ընդգրկվել են լրագրողների իրավունքների խախտման այն դեպքերը, որոնք տեղի են ունեցել մարդու իրավունքների պաշտպանության համատեքստում, իսկ մյուս դեպքերին կարելի է ծանոթանալ Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի տարեկան զեկույցում, որին հաճախ ենք անդրադարձել սույն զեկույցի պատրաստման ընթացքում:

Ընդհանուր համատեքստ

Հանդիսանալով Միացյալ ազգերի կազմակերպության, Եվրոպայի խորհրդի և Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության անդամ պետություն՝ Հայաստանի Հանրապետությունը պետք է առաջնորդվի նշված կազմակերպությունների կողմից հաստատված միջազգային չափանիշներով և մարդու իրավունքների վերաբերյալ փաստաթղթերի դրույթներով: Մյուս կողմից, Հայաստանի Հանրապետության իշխանությունների կողմից իրականացվող քաղաքականության վրա իրենց ազդեցությունը ունեն Անկախ պետությունների համագործակցությանը և Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպությանը Հայաստանի անդամակցությունը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքում ռուսական ռազմաբազայի առկայությունը:

2012թ. փետրվարին ՀԱՊԿ գլխավոր քարտուղար Նիկոլայ Բորդյուժան հայտարարել է, որ 2011 թվականին ՀԱՊԿ անդամ պետությունների նախագահները ոչ պաշտոնական հանդիպման ժամանակ համաձայնության են եկել օգտագործել ՀԱՊԿ ընդհանուր ռեսուրսները անդամ երկրներից որևէ մեկում քաոսային իրավիճակի առաջացման պարագայում[4]: Այլ կերպ ասած՝ Հայաստանը, որպես ՀԱՊԿ անդամ երկիր, ընդունել է ներքին խնդիրները կարգավորելու համար արտաքին ռազմական միջամտության հնարավորությունը:

ՀԱՊԿ անդամ պետությունների նախագահները քննարկելով «Արաբական գարուն» հեղափոխական ալիքից քաղված դասերը՝ ըստ երևույթին՝ պլանավորում են տեղեկատվության ազատության սահմանափակման և սոցիալական լրատվամիջոցների ավելի խիստ վերահսկման

[4] Փաստաթղթի հետքերը չեն գտնվում, «Հայկական ժամանակ», 02.23.2012թ. https://armtimes.com/hy/read/31757

մեխանիզմներ մշակել:[5] Հատկապես Բելառուսի նախագահը պնդել է, որ պետք է խստացնել ՀԱՊԿ անդամ երկրներում գործող միջազգային կազմակերպությունների և օտարերկրյա պետությունների գործունեությունը կարգավորող կանոնները[6]: Այս նախաձեռնության առումով Բորդյուժան նշել է. «Նկատելի են որոշ երկրների կամ երկրների խմբերի կողմից ՀԱՊԿ անդամ երկրների ներպետական հարցերին ուղղակի և անուղղակի միջամտության շարունակական փորձեր, ի թիվս այլոց՝ միջազգային կազմակերպությունների և նոր գործիքների միջոցով, ինչպես նաև արտաքին քաղաքականության որոշ սկզբունքներ պարտադրելու փորձեր: Նման փորձերին հակառակվելը հանգեցնում է մարդու իրավունքների և ժողովրդավարության պաշտպանությամբ սքողված քաղաքական պատժամիջոցների, բացահայտ քաղաքական ճնշումների, ինչպես նաև տնտեսական և այլ սահմանափակումների»:[7] Նման հռետորաբանությունը շարունակվել և նոր թափ է ստացել 2013 թվականի նոյեմբերին՝ Վիլնյուսում կայանալիք Արևելյան գործընկերության (ԱԼԳ) գագաթաժողովին ընդառաջ, որտեղ նախատեսված էր ԵՄ-ի հետ Ասոցացման համաձայնագրի կնքումը ԱԼԳ երկրների հետ:

2013 թ. փետրվարի 18-ին կայացան Հայաստանի Հանրապետության նախագահի ընտրությունները: Գործող նախագահ Սերժ Սարգսյանը, համարվում էր անմրցակից, քանի որ հիմնական ընդդիմադիր կուսակցություններից (ԱԺ-ում 37 պատգամավորով ներկայացված «Բարգավաճ Հայաստան», 7 պատգամավորով ներկայացված «Հայ ազգային կոնգրես», 6 պատգամավորով ներկայացված «Հայ հեղափոխական

---

[5] «CSTO Moves Into the Information Age. Radio Free Europe, Radio Liberty» McDermott, Roger, 2011թ. սեպտեմբերի 4, http://www.rferl.org/content/commentary_csto_moves_into_information_age/24317363.html

[6] «Security is collective matter», *«Բելառուս» ամսագիր,* Վոլյանյուկ Վիտալի, 2011թ.., http://www.belarus-magazine.by/en.php?subaction=showfull&id=1249722641&archive=1316587328&start_from=&ucat=2&

[7] «Բելտա» լրատվական գործակալություն. «CSTO to show solidarity in case of political pressure on its members» *Բելառուսական «Թելեգրաֆ» գործակալություն,* 2012թ. ապրիլի 12, http://news.belta.by/en/news/politics?id=67928

դաշնակցություն») ոչ մեկը թեկնածու չէր առաջադրել[8]: Նախընտրական քարոզարշավն ընթացավ արդեն «սովորական դարձած» վարչական ռեսուրսների չարաշահումներով, համատարած ընտրակաշառքներով և գործող նախագահի հանրահավաքներին ընտրողների պարտադրված մասնակցությամբ: Միևնույն ժամանակ ընտրողների հետ նախագահի այլ թեկնածուների հանդիպումներն ու հանրահավաքները սակավամարդ էին:

2013 թ. փետրվարի 1-ին նախագահի թեկնածու Պարույր Հայրիկյանի դեմ մահափորձ կատարվեց: Մեկ այլ թեկնածու՝ Վարդան Սեդրակյանը, մեղավոր ճանաչվեց մահափորձը պատվիրելու համար և դատապարտվեց 14 տարվա ազատազրկման: Իսկ նախագահի թեկնածու Անդրեաս Ղուկասյանը ամբողջ նախընտրական քարոզարշավի ընթացքում գտնվում էր հացադուլի մեջ՝ պահանջելով անվավեր ճանաչել գործող նախագահ Սերժ Սարգսյանի թեկնածության գրանցումը՝ նրա ղեկավարած Հանրապետական կուսակցության կատարած խախտումների պատճառով:

Քվեարկության օրն անցավ բազմաթիվ խախտումներով, ներառյալ՝ լցոնումներ, բազմակի քվեարկություն, ընտրակաշառք, քվեարկության գաղտնիության սկզբունքի խախտում և ընտրական գործընթացի մասնակիցների, այդ թվում՝ ընտրողների, վստահված անձանց, դիտորդների և լրագրողների նկատմամբ ճնշումներ:

Նախագահական ընտրությունների նախնական արդյունքներն անակնկալի բերեցին իշխող կուսակցությանը, քանի որ «Ժառանգություն» կուսակցության ղեկավար Ռաֆֆի Հովհաննիսյանը հաղթել էր մի շարք խոշոր քաղաքներում: Այդուհանդերձ, Հանրապետական կուսակցությանը հաջողվեց

[8] ԱԼԳ ՔՀՖ Հայաստանի ազգային պլատֆորմի զեկույց. «Presidential Elections in Armenia in 2013», http://www.eap-csf.eu/assets/files/Documents/ANP%20report%20on%20elections%202013.pdf

«շտկել իրավիճակը», և ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի հրապարակած վերջնական արդյունքների համաձայն՝ Սերժ Սարգսյանը վերընտրվել է իր պաշտոնում՝ ստանալով ձայների ավելի քան 58 %ը:

Ընտրությունների արդյունքների կեղծման մասին ակնհայտորեն վկայում է մոնիթորինգի ենթարկված և չենթարկված ընտրատեղամասերի արդյունքների միջև արձանագրված 5-10% տարբերությունը: Բազում անկախ փորձագետների և դիտորդական կազմակերպությունների կողմից արձանագրվեց տարօրինակ օրինաչափություն, ըստ որի՝ Սերժ Սարգսյանի առավելությունն ակնհայտ էր այն տեղամասերում, որտեղ ընտրողների մասնակցության անհամեմատ բարձր ցուցանիշ էր գրանցվել, մինչդեռ Ռաֆֆի Հովհաննիսյանն առաջատար էր համեմատաբար քիչ մասնակցության ցուցանիշով տեղամասերում: Այս ամենը ենթադրաբար վկայում է զանգվածային լցոնումների և ընտրողների մասնակցության ուռճացված ցուցանիշների մասին: Ընտրական գործընթացի արդարությունը կասկածելի է համարել նաև ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի ընտրությունների դիտորդական առաքելությունը:[9]

Չնայած ակնհայտ կեղծիքներին՝ հետընտրական բողոքի ակցիաները հիմնականում բազմակենտրոն էին և ծավալով զիջում էին 2008 թվականի հետընտրական բողոքի ակցիաներին: Ռաֆֆի Հովհաննիսյանը խիստ քննադատության էր արժանանում թե՛ ընդդիմության և թե՛ իշխող կուսակցության կողմից՝ իր անվճռականության և հստակ գործողությունների պլանի բացակայության պատճառով: Բողոքի ակցիան ավարտվեց ապրիլի 9-ին՝ Սերժ Սարգսյանի երդմնակալության արարողության օրը՝ Երևանի Ազատության հրապարակում Ռաֆֆի Հովհաննիսյանի՝ կողմնակիցների նախաձեռնած այլընտրանքային երդմնակալությունից հետո ցուցարարների նկատմամբ ոստիկանության բռնի գործողություններով:

[9] «Հայաստանի Հանրապետություն, Նախագահի ընտրություններ, 2013թ. փետրվարի 18», ԵԱՀԿ ԺՀՄԻԳ ընտրությունների դիտորդական առաքելություն վերջնական զեկույց, http://www.osce.org/hy/odihr/elections/101982?download=true

Ոստիկանության աշխատակիցները դաժան ծեծի ենթարկեցին «Ժառանգություն» կուսակցությունից ԱԺ նախկին պատգամավոր Արմեն Մարտիրոսյանին: Ստեղծված իրավիճակի լարվածությունը թուլացնելու և հետագա բռնությունից խուսափելու նպատակով՝ Ռաֆֆի Հովհաննիսյանը ՀՀ ոստիկանապետի հետ գնաց Եռաբլուր մոմ վառելու: Այդ քայլը դիտարկվեց որպես թուլության նշան և վերջ դրեց բողոքի ալիքին:

Ի տարբերություն նախագահական ընտրությունների՝ 2013 թվականի մայիսին կայացած Երևանի ավագանու ընտրություններին մասնակցեցին բոլոր հիմնական քաղաքական կուսակցությունները: Այս ընտրությունները նույնպես անցան բազում խախտումներով, առավելապես նախընտրական «նախապատրաստական աշխատանքների» և ընտրակաշառքի միջոցով:Հանրապետական կուսակցությունը պահպանեց Երևանի ավագանու կազմում իր մեծամասնությունը, իսկ Տարոն Մարգարյանը վերանշանակվեց Երևանի քաղաքապետի պաշտոնում:

2013 թվականի մայիսի վերջերին «Hetq.am»-ը («Հետաքննող լրագրողներ» ՀԿ) հետաքննական հոդված հրապարակեց խարդախության դեպքի մասին, որում ներգրավված են հայ գործարար Աշոտ Սուքիասյանը, նրա կնքահայր՝ Հայ Առաքելական եկեղեցու Արարատյան հայրապետական թեմի առաջնորդ Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանը և Հայաստանի արդեն նախկին վարչապետ Տիգրան Սարգսյանը:[10] Չնայած նրան, որ թե՛ վարչապետը[11] և թե՛ արքեպիսկոպոսը[12] հերքեցին մեղադրանքները, հետաքննությամբ

[10]«Ովքե՞ր են Փայլակ Հայրապետյանի ունեզրկման հեղինակները. օֆշորային եռյակը», http://hetq.am/arm/news/26891/ovqer-en-paylak-hayrapetyani-unezrkman-hexinaknery-ofshorayin-eryaky.html
[11]«Վարչապետը դիմել է դատախազություն», http://hetq.am/arm/news/27012/varchapety-dimel-e-datakhazutyun.html
[12]«Նավասարդ արք. Կճոյանի արձագանքը՝ իր անվան շուրջ տարածվող տեղեկությունների վերաբերյալ», http://hetq.am/arm/news/27360/navasard-arq%E2%80%A4-ktchoyani-ardzaganqy-ir-anvan-shurj-taratsvox-texekutyunneri-veraberyal.html

պարզվեց խարդախ գործարքի հետ նրանց ուղղակի առնչությունը: Այդուհանդերձ, հաշվետու ժամանակահատվածում նրանցից ոչ մեկը անգամ չի հարցաքննվել: 2014 թ. ապրիլին Տիգրան Սարսգյանը հրաժարականի դիմում է ներկայացրել, իսկ 2014 թ. հունիսին նշանակվել է ԱՄՆ-ում Հայաստանի Հանրապետության դեսպան[13]:

2013թ. հունիսի 2-ի ուշ գիշերը Սյունիքի մարզի տխրահռչակ մարզպետի առանձնատան մոտ արձակված կրակոցների հետևանքով Գորիսի քաղաքապետի նախկին թեկնածու Ավետիք Բուդաղյանը տեղում մահացավ, իսկ նրա եղբայր, գնդապետ Արտակ Բուդաղյանը և մարզպետ Սուրիկ Խաչատրյանի թիկնապահը ծանր վիրավորում ստացան: Հարկ է նշել, որ 2012 թվականի հունիսին ՀՀ ԱԺ նախկին պատգամավոր, ՀՀ Ֆուտբոլի ֆեդերացիայի նախագահ, խոշոր բիզնեսմեն Ռուբեն Հայրապետյանին պատկանող ռեստորանի տարածքում նրա թիկնապահների կողմից դաժան ծեծի ենթարկված և դրա հետևանքով մահացած ռազմական բժշկի գործը քննվել էր ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչությունում: Ի տարբերություն դրա, այս գործի քննությունը հանձնարարվեց ՀՀ Պաշտպանության նախարարության քննչական վարչությանը՝ առանց որևէ կերպ հիմնավորելու զինվորականների հետ կապված հանցագործությունների քննության պրակտիկայում առկա նման անհետևողականությունը: Մարզպետ Սուրիկ Խաչատրյանը ստիպված էր հրաժարական տալ: Սակայն ՀՀ զինվորական դատախազ Գևորգ Կոստանյանն, ըստ էության, հովանավորության տակ վերցրեց վերջինիս՝ անմիջապես բացառելով Սուրիկ Խաչատրյանի մասնակցությունը միջադեպին և պնդելով, որ Սուրիկ Խաչատրյանը քնած է եղել: Դեպքից կարճ ժամանակ անց ոստիկանությունը սպանության մեղադրանքով ձերբակալեց Խաչատրյանի որդուն և թիկնապահներից մեկին և մարզպետի տնից առգրավեց մեծ քանակությամբ ապօրինի զենք ու զինամթերք: Այնուամենայնիվ 2013 թ. սեպտեմբերի 7-ին ՀՀ զինդատախազ Գևորգ Կոստանյանը հայտարարեց, որ Ս.

[13] ՀՀ Նախագահի հրամանագիր, http://www.president.am/hy/decrees/item/1200/

Խաչատրյանի որդուն և թիկնապահին առաջադրված բոլոր մեղադրանքները հանվել են, քանի որ նրանց գործողությունները հանդիսացել են ինքնապաշտպանություն: Իսկ գնդապետ Արտակ Բուդաղյանի նկատմամբ առաջադրվեց մեղադրանք՝ սպանության, առողջությանը ծանր վնաս պատճառելու կամ գույք ոչնչացնելու սպառնալիքի հիմքով:[14] Զինդատախազի այդ որոշման հետևանքով երկրում տիրող անպատժելիության մթնոլորտն էլ ավելի սրվեց: Ավելին, չնայած այս բացահայտ անարդար որոշմանը, գրեթե մեկ ամիս անց՝ Գ. Կոստանյանը նշանակվեց ՀՀ գլխավոր դատախազ:

2013 թվականի գարնան ավարտը և ամառը նշանավորեցին քաղաքացիական ակտիվության ալիքի նոր «զարթոնքը»: Կառավարության գործողությունների և անգործության դեմ Երևանում և մայրաքաղաքից դուրս ծավալվեցին բողոքի ակցիաներ, այդ թվում՝

- ուժեղ կարկուտի հետևանքով պատճառված վնասի, ծիրանի գնման ցածր գների և դեպի Վրաստան ծիրանի արտահանման դժվարությունների հետ կապված լիարժեք փոխհատուցում պահանջող գյուղացիների բողոքը,
- Լոռու մարզի Մարց գյուղում նոր ՀԷԿ-ի կառուցման դեմ ուղղված բողոքը,
- սպանված զինծառայող Լյուքս Ստեփանյանի ընտանիքի՝ նրա դին Երևան՝ Կառավարության շենքի մոտ բերելու և հրապարակավ արդար դատաքննություն պահանջելու փորձը,
- Երևանում տրանսպորտային ուղեվարձի կտրուկ բարձրացման դեմ ուղղված բողոքի ակցիաները,
- իրավահավասարություն և սոցիալական նպաստների բարձրացում պահանջող Արցախյան պատերազմի վետերանների բողոքի ակցիան,

[14] «2013թ. մարդու իրավունքների մասին զեկույցներ. Հայաստան», ԱՄՆ պետդեպարտամենտ, http://www.state.gov/j/drl/rls/hrrpt/2013/eur/220251.htm

- ≈ Երևանում ապօրինի շինարարության դեմ ուղղված ակցիան,
- ≈ գազի սակագնի բարձրացման և դրանից հետո կառավարությանը պատկանող «ՀայՌուսգազարդի» բաժնետոմսերի մնացած 20 տոկոսը ռուսական «Գազպրոմին» փոխանցելու,
- ≈ կենսաթոշակային բարեփոխումների շրջանակներում պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգի ներմուծման դեմ ուղղված բողոքի ակցիաները:

Այս ակցիաներից մեծ մասի ընթացքում ոստիկանները ֆիզիկական ուժ և ապօրինի սահմանափակումներ են կիրառել մասնակիցների նկատմամբ:[15]

ՀՀ նախագահի՝ Ռուսաստանի, Բելառուսի և Ղազախստանի հետ Մաքսային միությանը անդամակցելու պատրաստակամության մասին միանձնյա որոշման հրապարակմանը և ԵՄ հետ Ասոցացման համաձայնագրի ձախողմանը հաջորդեցին մի շարք բողոքի ակցիաներ: Մաքսային միությանը միանալու դեմ ամենազանգվածային հանրահավաքը տեղի ունեցավ 2013թ. դեկտեմբերի 2-ին՝ Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինի՝ Հայաստան կատարած այցի օրը, երբ ոստիկաններն ապօրինի բերման ենթարկեցին առնվազն 110 ցուցարարների և ձեռնարկեցին անվտանգության չափազանց խիստ միջոցառումներ՝ խախտելով Հայաստանի քաղաքացիների ազատ տեղաշարժի, հավաքների ազատության, անձի ազատության և անձեռնմխելիության իրավունքները:

2013թ. տարեվերջին ոչ իշխանական քաղաքական կուսակցությունները միավորվեցին հիմնականում սոցիալ-տնտեսական հարցերի, ներառյալ՝ Ռուսաստանի հետ կնքած գազի գործարքի և կենսաթոշակային բարեփոխումների հետ կապված խնդիրների լուծումը գտնելու համար:

---

[15]«Մարդու իրավունքները Հայաստանում 2013 թվականին» զեկույց, Հայաստանի Հելսինկյան կոմիտե, http://armhels.com/wp-content/uploads/2014/01/Ditord-2014-01armNew.pdf

2013թ. դեկտեմբերին ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանը հրապարակեց Արդար դատաքննության իրավունքի վերաբերյալ արտահերթ զեկույց[16]՝ բացահայտելով համակարգում արձանագրված աստիճանակարգային չարաշահումները և ղեկավարների կողմից ստորադասների լիակատար հսկողությունը, երկակի ստանդարտների կիրառումը ՀՀ Վճռաբեկ դատարանի և դրա նախագահի կողմից որդեգրված կոռուպցիոն գործելաոճը: ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի զեկույցում ներկայացվում են տարբեր դատարանների կողմից ստացվող կաշառքի չափերը, ինչպես նաև առանց Վճռաբեկ դատարանի հավանության որոշումներ կայացնելու համարձակություն դրսևորած ստորադաս ատյանների դատավորներին սանձելու նպատակով կարգապահական միջոցների կամայական կիրառումը: Ինչպես և ակնկալվում էր, զեկույցը բուռն քննարկումների տեղիք տվեց: Այդուհանդերձ, ՀՀ Դատական դեպարտամենտը և ՀՀ Վճռաբեկ դատարանը պարզապես քննադատեցին զեկույցը՝ առանց հաշվի առնելու այդտեղ ներկայացված փաստերից որևէ մեկը (զեկույցում հղում է կատարվում որոշ կասկածելի դատական գործերի): ՀՀ գլխավոր դատախազ Գևորգ Կոստանյանը, ով նաև հանդիսանում է Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչը Մարդու իրավունքների եվրոպական դատարանում, պնդում է, որ զեկույցը բացարձակապես անհիմն է: Ուշագրավ է նաև, որ նշված զեկույցը, որն ուղարկվել էր Հայաստանի բոլոր դատավորներին, անմիջապես հետ է վերադարձվել նրանց կողմից: Նման նույնական վարքագիծը ևս մեկ անգամ վկայում է ՀՀ Վճռաբեկ դատարանի և դրա նախագահի կողմից իրականացվող բռնապետական և կենտրոնացված վերահսկողության մասին:[17]

---

[16] ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի արտահերթ զեկույց արդար դատաքննության իրավունքի վերաբերյալ,
http://ombuds.am/library/library/page/101/type/3

[17] « Armenia, Follow Up Report », ՀՔԱ Վանաձորի գրասենյակ, CCPR/C/ARM/CO/2
http://hcav.am/wp-content/uploads/2014/05/3.INT_CCPR_NGS_ARM_16205_E.pdf

Մարդու իրավունքների պաշտպանության վիճակի ընդհանուր նկարագիրը

Իրավապաշտպանների վիճակի հարցերով ՄԱԿ-ի հատուկ զեկուցողը Հայաստանի վերաբերյալ 2010 թվականի իր զեկույցում մասնավորապես անդրադարձել է Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագրի մշակման գործընթացում քաղաքացիական հասարակության ինստիտուտների (այսուհետ՝ ՔՀԿ-ներին) և իրավապաշտպանների ոչ պատշաճ ներգրավման հարցին: Բացի այդ, ՄԱԿ-ի հատուկ զեկուցողը հանձնարարել է Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագրում հաշվի առնել իրավապաշտպանների, այդ թվում՝ կանանց և ԼԳԲՏԻ անձանց իրավունքների պաշտպանների հատուկ կարիքները:[18] Զեկույցի համաձայն՝ միջոցառումների ծրագրի նախագիծը պետք է պատրաստվեր կառավարության և ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի համատեղ աշխատանքի արդյունքում մինչև 2010 թվականի տարեվերջ: Միջոցառումների ծրագիրն ընդունվել է միայն 2014թ. փետրվարին և պաշտոնապես մեկնարկեց 2014 թ. հունիսին:

2011 թվականի տարեվերջին մի շարք ՔՀԿ-ներին խնդրել են խիստ սեղմ ժամկետներում առաջարկություններ ներկայացնել Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարության վերաբերյալ: «Գործընկերություն հանուն բաց հասարակության» նախաձեռնության ներքո համախմբված ՀԿ-ները ներկայացրել են իրենց առաջարկությունները, որոնց, սակայն, որևէ անդրադարձ չի կատարվել ռազմավարության վերջնական տարբերակում, որը ՀՀ նախագահը հաստատել է

[18] Իրավապաշտպանների վիճակի հարցերով հատուկ զեկուցող Մարգարեթ Սեկագիայի զեկույցը, հայաստանյան գրասենյակ, http://www2.ohchr.org/english/issues/defenders/docs/A-HRC-16-44-Add2.pdf

միայն մեկ տարի անց՝ 2012թ. հոկտեմբերի 29-ին: Փաստաթղթում հատուկ շեշտվել է Ռազմավարության իրականացումից բխող միջոցառումների ծրագրի իրականացման և մոնիթորինգի գործընթացում ՔՀԿ-ների ներգրավելը և նշվել է, որ Ազգային ռազմավարության նպատակներից է մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտի, ինչպես նաև իրավապաշտպան կազմակերպությունների կարողությունների հզորացումը, մարդու իրավունքների պաշտպանության ազգային այլ ինստիտուտների հիմնումն ու ամրապնդումը:[19] ՔՀԿ-ները քննադատել են ռազմավարությունը՝ այն համարելով անորոշ, առկա խնդիրներին չառնչվող և անհետևողական՝ դրանց լուծման ուղիները գտնելու տեսակետից:[20] 2012թ. դեկտեմբերից մինչև 2013թ. փետրվարը ՔՀԿ-ները ներկայացրել են իրենց առաջարկությունները Մարդու իրավունքների ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագրի վերաբերյալ: Հաշվի առնելով իրավապաշտպան կազմակերպությունների կարողությունների ամրապնդման վերոնշյալ նպատակը՝ ՀՔԱ Վանաձորի գրասենյակը ներկայացրել է առաջարկություններ մի շարք ոլորտների, այդ թվում՝ իրավապաշտպանների կարողությունների զարգացմանը նվիրված առանձին գլուխ ավելացնելու վերաբերյալ:[21]

Այնուամենայնիվ, իրավապաշտպանների կարողությունների զարգացմանն ուղղված որևէ գործողություն չի ընդգրկվել ՀՀ Կառավարության կողմից 2014թ. փետրվարին ընդունված միջոցառումների ծրագրի վերջնական տարբերակում, այլ ընդգծվել է ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի

---

[19] ՀՀ նախագահի կարգադրությունը ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունը հաստատելու մասին, http://www.president.am/hy/Directives/item/838/

[20] «Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարություն. քննարկումներ բացթողումների և բարեփոխումների անհրաժեշտության շուրջ», http://hcav.am/events/«մարդու-իրավունքների-պաշտպանության/

[21] «ՀՔԱՎ-ի առաջարկությունները Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարության միջոցառումների ցանկի վերաբերյալ», http://hcav.am/activities/հքավ-ի-առաջարկությունները-մարդու-իրա/

հզորացումը՝ որպես մարդու իրավունքների պաշտպանության միակ մեխանիզմ:

Ըստ ՄԻ ազգային ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագրի՝ Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանության «մենաշնորհը» տրվում է ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանին, մինչդեռ ՔՀԿ-ների և իրավապաշտպանների դերն անտեսվում է, և նախատեսվում են միայն համապատասխան կառույցների հետ ՔՀԿ-ների տարեկան հանդիպում-քննարկումներ, ինչպես նաև նրանց մասնակցությունը ծրագրի իրականացման մոնիթորինգին:

Ընդհանուր առմամբ, միջոցառումների ծրագրի նպատակը, կարծեք թե, դրա իրականացման հետ կապված բոլոր ծախսերի և գործողությունների նվազեցումն է և մարդու իրավունքների առավել զգայուն հարցերից (օրինակ՝ խտրականության արգելում) խուսափելը: Ըստ ծրագրի՝ ընդհանուր թվով 119 գործողություններից 72-ը (60%) ֆինանսավորման կարիք չունեն: Չնայած ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի դերի մեծացման մասին հավաստիացումներին՝ ՀՀ պետական բյուջեից ՄԻՊ-ին հատկացվող գումարները նվազել են, որի հետևանքով ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի մարզային գրասենյակների նախնական թիվը նվազեցվել է՝ 6-ից 3-ի:

Փակ հաստատությունների, այն է՝ ազատազրկման վայրերի՝ կալանավայրերի, ձերբակալված անձանց պահման վայրերի և հատուկ դպրոցների հասարակական վերահսկողություն իրականացնող դիտորդական խմբերում Կանխարգելման ազգային մեխանիզմի (ՀՀ Մարդու իրավունքների պաշտպան) Փորձագիտական խորհրդում ընդգրկված են մի շարք հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, և այդ խմբերը որոշ հաջողությունների են հասել համապատասխան հաստատություններում մարդու իրավունքների խախտումների վերաբերյալ իրենց մտահոգությունը բարձրաձայնելու հարցում: Սակայն կառավարության կողմից ոչ համարժեք արձագանքը և համագործակցության պակասը արժեզրկում է հասարակական

վերահսկողության ինստիտուտը և նվազեցնում այն արժեքավոր ներդրումը, որը նշված խմբերը կարող են ունենալ նման հաստատություններում մարդու իրավունքների պաշտպանության հետ կապված իրավիճակը բարելավելու գործում:

Հայաստանի Հանրապետության իշխանությունների կողմից՝ ՔՀԿ-ների և իրավապաշտպանների կարծիքները հաշվի առնելու և համագործակցելու դժկամությունն արտահայտվում է նաև պետական քարոզչության մեջ, որի թիրախում 2013 թվականին առավելապես հայտնվել էին կանանց և ԼԳԲՏԻ անձանց իրավունքները պաշտպանող ՀԿ-ները և Հայաստանի եվրաինտեգրման ջատագովները: Սև քարոզչությունը հատկապես մեծ թափ էր ստանում հանրության համար կարևոր նշանակություն ունեցող աղմկահարույց տեղեկությունների արտահոսքից հետո: Դրա նպատակն էր շեղել հանրության ուշադրությունը և նվազեցնել իրավապաշտպանների արծարծած հարցերի կարևորությունը: Օրինակ, հանրության ընկալման տեսակետից զգայուն հարցերի՝ օր. գենդերային հավասարության խնդրի բարձրացմամբ ակնհայտորեն փորձ է արվել շեղել հանրության ուշադրությունը օֆշորային սկանդալից, որում ներգրավված էին վարչապետը և Արարատյան թեմի առաջնորդը:[22]

Թեև հասարակության լայն զանգվածների աջակցությունը վայելող որոշ հարցերի շուրջ կառավարության հետ համագործակցության մեջ որոշ առաջընթաց է արձանագրվել, համագործակցությունը ձախողվել է բոլոր այն դեպքերում, երբ խոսք է գնացել առավել խոցելի խմբերի (մասնավորապես՝ ԼԳԲՏԻ անձանց և կրոնական փոքրամասնությունների իրավապաշտպանների) պաշտպանության մասին, ում իրավունքները հաճախ խախտվել են պետական պաշտոնյաների կողմից: ԼԳԲՏԻ անձինք և նրանց պաշտպանները հատկապես խոցելի են դարձել 2013 թվականին, որը պայմանավորված է

[22]«Ովքե՞ր են Փայլակ Հայրապետյանի ունեզրկման հեղինակները. օֆշորային եռյակը», http://hetq.am/arm/news/26891/ovqer-en-paylak-hayrapetyani-unezrkman-hexinaknery-ofshorayin-eryaky.html

միտումնավոր ապատեղեկատվությամբ: Նման ապատեղեկատվության և սև քարոզչության հաջողությունը հիմնականում վերագրելի է անկախ հեռարձակող լրատվամիջոցների բացակայությանը, որոնց միջոցով իրավապաշտպանները և իրավապաշտպան կազմակերպությունները կկարողանային հրապարակավ ներկայացնել իրենց հայացքները և հակադարձել ապատեղեկատվությանը:[23]

2013 թվականին արձանագրվել է ԼԳԲՏԻ անձանց իրավունքները սահմանափակելու և նրանց դեմ դրսևորվող խտրականությունը որոշ չափով օրինականացնելու մի քանի փորձ: 2013 թվականին ՀՀ ոստիկանությունն առաջարկել է լրացումներ կատարել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում՝ պատասխանատվություն նախատեսելով «ոչ ավանդական սեռական հարաբերությունների քարոզչության» համար: Նշված լրացումներն արժանացել են խիստ քննադատության՝ ոչ հստակ սահմանումների, խտրականության դրսևորման նպատակների և Ռուսաստանում կատարված բացասական փոփոխությունների կրկնօրինակման համար: Ոստիկանությունը հետաձգել է առաջարկվող փոփոխությունները՝ հայտնելով, որ այդ հարցն իրենց

[23] Հեռարձակող լրատվամիջոցները շարունակում է այն նույն քաղաքականությունը, որին 2010 թվականին անդրադարձել էր Իրավապաշտպանների վիճակի հարցերով հատուկ զեկուցողը: «56. Հասարակական կազմակերպությունները, կարծեք թե, հնարավոր գործընկերներ չեն համարվում կառավարություն կողմից, ոչ էլ ընկալվում են որպես հասարակության ներկայացուցիչ: Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների գործունեության մասին իրազեկվածության մակարդակը նույնպես շատ ցածր է: Լրատվամիջոցները հաճախ չեն անդրադառնում ՀԿ-ների նախաձեռնություններին, զեկույցներին, մամուլի ասուլիսներին. ավելին, շատ դեպքերում լրատվամիջոցները հասանելի չեն ՀԿ-ների համար»: Հատուկ զեկուցողը խորը մտահոգությամբ նշում է, որ պետության կողմից վերահսկվող լրատվամիջոցները պարբերաբար աղավաղված ձևով են ներկայացնում մարդու իրավունքների պաշտպաններին և անգամ վարկաբեկում նրանց: Մարդու իրավունքների պաշտպանները կրկին ու կրկին պիտակավորվում են որպես օտարերկրյա գործակալներ, լրտեսներ, ավազակախմբեր և «հինգերորդ շարասյուն»:

քաղաքականության տեսանկյունից առաջնահերթություն չի հանդիսանում:[24]

Հայաստանի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանի կողմից 2012 թվականին ներկայացված «Խտրականության դեմ» օրինագծի նախնական տարբերակը ամրագրում էր սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով խտրականության արգելումը: Հետագայում, նշված արտահայտությունը հանվել է սահմանումից, իսկ օրինագծի ընդունման առումով հաշվետու ժամանակահատվածում առաջընթաց չի եղել: ԼԳԲՏԻ անձանց իրավունքների պաշտպանները նշում են նաև, որ ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանը հակված է զգուշավորություն պահպանել զգայուն հարցերում և այնքան էլ պատրաստակամ չէ խթանելու ԼԳԲՏԻ անձանց իրավունքների պաշտպանությունը: 2013թ. հոկտեմբերին արված հայտարարության մեջ ՀՀ Մարդու իրավունքների պաշտպան Կարեն Անդրեասյանն ասել է. «Կոմայգու այլասերվածության վերացումն անհրաժեշտ է, հնարավոր է, եվրոպական է: [...]Նման այլասերվածությունը անհրաժեշտ է վերացնել, քանի որ այն ոչ միայն անբարոյական է, այլև՝ անօրինական»:[25]

2013 թ. մայիսին ՀՀ Ազգային ժողովն ընդունեց «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների մասին» օրենքը: Օրենքի ընդունումից հետո քննադատության և բուռն բանավեճերի ալիք բարձրացավ հիմնականում «գենդեր» եզրույթի շուրջ, որն օրենքի 3-րդ հոդվածում սահմանվել էր որպես տարբեր սեռի անձանց ձեռքբերովի, սոցիալապես ամրագրված վարք: Հայ Առաքելական եկեղեցուն, տարբեր ազգայնական խմբերին և վերջերս հիմնված

[24] «ԼԳԲՏ անձանց իրավունքների իրավիճակը Հայաստանում 2013», «Փինք Արմենիա» ՀԿ, http://www.pinkarmenia.org/2014/04/lgbtreport2013/
[25] «ԼԳԲՏ անձանց իրավունքների իրավիճակը Հայաստանում 2013», էջ 10, «Փինք Արմենիա» ՀԿ, http://www.pinkarmenia.org/2014/04/lgbtreport2013/

Համահայկական ծնողական կոմիտեին[26] հաջողվեց ներկայացնել օրենքը և մասնավորապես «գենդերի» սահմանումը՝ որպես մանկապղծության, արյունապղծության և այլասերվածության օրինականացման գործընթացին կանաչ լույս տվող ազդանշան: Գենդերային հավասարության դեմ հմտորեն ծրագրված արշավի արդյունքում ԼԳԲՏԻ անձանց հանդեպ ատելությունը և խտրականությունը դարձավ ծայրահեղական խմբերի կողմից «հայրենասիրության» ինքնաարտահայտման ձև: Ինչպես նշում են «Փինք Արմենիա» ՀԿ-ի ներկայացուցիչները. «...«գենդեր» բառը դարձավ հոմանիշ տրանսգենդերին, նույնասեռականությանը, նաև այլասերվածությանը՝ սփռելով բարկություն հասարակության մեջ և ձեռք բերելով ոչ հայկական բոլոր իրողությունների սկզբնաղբյուրի հեղինակություն: Կանանց և ԼԳԲՏԻ անձանց իրավունքների պաշտպանները որակվեցին որպես «ազգի դավաճաններ», «ընտանիք քանդողներ» և «հայկական արժեքների համար վտանգ»: Ծայրահեղական խմբերը սկսեցին ապատեղեկատվության տարածումը տարբեր սոցիալական ցանցերում՝ թիրախավորելով կանանց հարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունները և գենդերային հավասարության ջատագովներին»:[27] 2013 թ. օգոստոսին քառասուն տեղական հասարակական կազմակերպություններ հայտարարություն տարածեցին՝ դատապարտելով կանանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող ամենաճանաչված կազմակերպություններից մեկի՝ Կանանց ռեսուրսային կենտրոնի նկատմամբ հնչեցված սպառնալիքները[28]:

Պետության հովանավորությամբ ԼԳԲՏԻ անձանց դեմ ուղղված ատելություն պարունակող խոսքի և ագրեսիայի սաստկացումն ուղղակիորեն հակասում է Քաղաքացիական և

---

[26] Կառույցը ենթադրաբար հիմնվել է ռուսական խմբերի կողմից Արևելյան գործընկերության գրեթե բոլոր մասնակից երկրներում գործող նույնանուն կազմակերպությունների կրկնօրինակմամբ: http://en.aravot.am/2013/12/25/163181/

[27] «ԼԳԲՏ անձանց իրավունքների իրավիճակը Հայաստանում 2013», էջ 9, «Փինք Արմենիա» ՀԿ, http://www.pinkarmenia.org/2014/04/lgbtreport2013/

[28] Հայտարարություն Կանանց ռեսուրսային կենտրոնի նկատմամբ սպառնալիքների առնչությամբ, http://hcav.am/events/հայտարարություն-կանանց-ռեսուրսային/

քաղաքական իրավունքների մասին դաշնագրի (ՔՔԻՄԴ) կատարման վերաբերյալ Հայաստանի երրորդ պարբերական զեկույցի դիտարկումից հետո 2012 թվականի հուլիսին ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեի հրապարակած հանձնարարականներին, մասնավորապես 10-րդ կետին:[29]

> *10. Անդամ պետությունը պետք է հստակ և պաշտոնապես հաստատի, որ այն չի հանդուրժում նույնասեռականության, բիսեքսուալության կամ տրանսսեքսուալության որևէ սոցիալական խարանում, մարդկանց նկատմամբ ոտնձգություն, խտրականություն կամ բռնություն նրանց սեռական կողմնորոշման ու գենդերային ինքնության հիմքերով: Անդամ պետությունը պետք է արգելի սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով խտրականությունը և ապահովի արդյունավետ պաշտպանություն ԼԳԲՏԻ անձանց համար:*

«Հավաքների ազատության մասին» օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ արգելվում է հավաքների ազատության օգտագործումը սահմանադրական կարգը բռնի տապալելու, ազգային, ռասայական, կրոնական ատելություն բորբոքելու, բռնություն կամ պատերազմ քարոզելու նպատակով: Այդուհանդերձ, 2013 թվականին մի քանի հանրահավաքներ և բողոքի ցույցեր են անցկացվել ընդդեմ «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների մասին» օրենքի և դրա ջատագովների: Նման հակազդման ակցիաները հիմնականում կազմակերպվել կամ ղեկավարվել են Հայ Առաքելական եկեղեցու սպասավորների

[29] Դաշնագրի 40-րդ հոդվածին համապատասխան անդամ պետությունների ներկայացրած զեկույցների դիտարկում, Մարդու իրավունքների կոմիտեի 105-րդ նիստում ընդունված եզրափակիչ դիտարկումներ, 2012թ. հուլիսի 9-27-ը, Հայաստան, Մարդու իրավունքների կոմիտե
http://www.unog.ch/unog/website/news_media.nsf
(httpNewsByYear_en)/3717C6911C621A9AC1257A3E0046D0CF?OpenDocument

կողմից[30]: Հնարավոր է, որ եկեղեցին այդչափ համառորեն էր խորացնում գենդերային ատելությունը, որպեսզի վերականգնի իր՝ բարոյական առաջնորդի դերը և հանրության ուշադրությունը շեղի վերոնշյալ օֆշորային սկանդալից, որտեղ ներգրավված է եղել նաև Արարատյան հայրապետական թեմի առաջնորդ Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանը:

Իրավապաշտպանների հանդեպ ատելություն պարունակող խոսքի և ագրեսիայի մի նոր ալիք բարձրացավ Հայաստանի՝ Մաքսային միությանը միանալու պատրաստակամության մասին Սերժ Սարգսյանի հայտարարությունից կարճ ժամանակ առաջ: Այդ ընթացքում առավել մեծ տարածում գտավ Արևմուտքի, մասնավորապես՝ եվրոպական ազատության արժեքների մերժողականությունը և ազգայնական մոտեցումների հաստատումը, որոնք ներկայացվեցին որպես եվրասիական երկրներին վերագրվող և ավանդական ընտանիքը կարևորող մշակույթ:[31]

2013 թվականի ընթացքում իրավապաշտպանների, ակտիվիստների և իրավապաշտպան կազմակերպությունների նկատմամբ ոտնձգություններն իրականացրել են ոչ միայն անմիջականորեն պետական պաշտոնյաները, այլև տարբեր խմբերը, բանդաները կամ արհեստածին «պետական ՀԿ-ները»՝ նպատակ ունենալով ահաբեկել նրանց և սահմանափակել նրանց գործունեությունը: Չնայած ահագնացող մարտահրավերներին՝ համացանցի և սոցիալական լրատվամիջոցների շնորհիվ մեծացել են իրավապաշտպանների և ՀԿ-ների գործունեության

[30] Սա երկունքն է որոշ անձանց, որոնց նպատակը ազգերի այլասերումն է. Կոմիտաս վարդապետը գենդերի դեմ երթի մասին (տեսանյութ), http://www.tert.am/am/news/2013/10/16/komitas-vardapet1/?sw

[31] Ծթ. 2014թ. մայիսին Հայաստանում Ռուսաստանի Դաշնության դեսպան Իվան Վոլինկինը հայտնել է. «Վստահ եմ, որ Ռուսաստանը պետք է ավելի ակտիվորեն հայտարարի Հայաստանի տեղեկատվական դաշտում իր ներկայության մասին: Այս առումով որևէ կասկած չկա: Սակայն պետք է նաև լրացուցիչ միջոցների դիմել Հայաստանում գործող այն հասարակական կազմակերպությունների չեզոքացման համար, որոնք փորձում են սեպ խրել ռուս-հայկական հարաբերություններում: Ռուսաստանում, օրինակ, օրենք է ընդունվել, որը շատ հստակ կարգավորում է ՀԿ-ների գործունեությունը»: http://en.aravot.am/2014/05/09/165117/

լուսաբանման ծավալները: Նման լուսաբանման կողմնակի ազդեցությունն իրավապաշտպանների դեմ ուղղված սպառնալիքների և վիրավորանքների աճն էր:

Որպես կանոն, հարձակումների և ճնշումների մասին իրավապաշտպան կազմակերպությունների և ակտիվիստների բողոքներն ու հաղորդումներն պատշաճ չեն քննվել: Արձանագրվել են դեպքեր, երբ ակտիվիստները ոստիկանությանը հաղորդել են ոստիկանների կողմից իրենց նկատմամբ գործադրված ֆիզիկական բռնության մասին, և ոստիկանությունում հենց իրենց դեմ են գործ հարուցել՝ սուտ մատնության, իշխանության ներկայացուցչի պահանջներին չենթարկվելու և իշխանության ներկայացուցչի նկատմամբ բռնության գործադրելու մեղադրանքով:[32] Որոշ դեպքերում դատարանում ցուցմունք տվող միակ վկաները ոստիկանության աշխատակիցներն են, ինչը կասկածների տեղիք է տալիս հետաքննության ընթացքի և առաջադրված մեղադրանքի հիմքերի արդարացիության վերաբերյալ[33]: Ոստիկանությունը հարձակումներ և բռնություններ է հրահրել և գործել ակտիվիստների և իրավապաշտպանների դեմ: Հաշվետու ժամանակահատվածում լրագրողները, քաղաքացիական ակտիվիստները, ԼԳԲՏԻ անձանց և կանանց իրավունքների պաշտպանները, իրավաբանները և բնապահպան ակտիվիստները ենթարկվել են ճնշումների և հետապնդումների:

Ըստ Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի (ԽԱՊԿ)՝ անցած տարին հատկապես լարված է անցել լրատվամիջոցների համար՝ սույն զեկույցի «Ընդհանուր համատեքստ» բաժնում նկարագրված իրադարձությունների պատճառով: 2013 թվականին ԽԱՊԿ-ն արձանագրել է

[32]«Արգիշտի Կիվիրյանին մեղադրանք է առաջադրվել», http://www.investigatory.am/am/news/item/427/

[33] Ծթ. «Վեհաժողովի 1609 (2008) բանաձևի կատարումը Հայաստանի կողմից» Բանաձև 1620 (2008) –ում Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովը նշե է «4.7.3. Ընդունելի չի կարող լինել այն դատավճիռը, որը հիմնված է բացառապես մեկ ոստիկանական ցուցմունքի վրա՝ առանց լրացուցիչ հիմնավորող ապացույցների:», ԵԽԽՎ http://www.coe.am/docs/pace/1620arm.pdf

լրագրողների նկատմամբ ֆիզիկական բռնության 10 դեպք, որից 3-ը՝ ընտրությունների ժամանակահատվածում, և ևս 3-ը՝ բողոքի ակցիաների ժամանակ: Արձանագրվել է լրագրողների ահաբեկման և մասնագիտական գործունեության խոչընդոտման 57 դեպք, որից 12-ը՝ ընտրությունների ժամանակ, իսկ 6-ը՝ բողոքի ակցիաների ժամանակ:[34]

ԶԼՄ-ների և լրագրողների դեմ վիրավորանքի և զրպարտության հիմքերով դատական հայցերի թիվը 2013 թվականին հասել է 24-ի՝ գերազանցելով 2012 թվականին արձանագրված ցուցանիշը (17):

Հաշվետու ժամանակահատվածում իրավապաշտպանների և ակտիվիստների դեմ ուղղված հարձակումները և ճնշումներն ուղեկցվել են հավաքների ազատության իրավունքի խախտմամբ: Իրավապաշտպանները և ակտիվիստներն առանց իրավական հիմքի և հարկադրաբար հավաքների անցկացման վայրերից բերման են ենթարկվել ոստիկանության բաժիններ: Նրանց դեմ հարուցվել են բազմաթիվ վարչական գործեր:

2011թ. ապրիլին ընդունված «Հավաքների ազատության մասին» նոր օրենքը դրական առաջընթաց է համարվում «Ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու մասին» նախկին օրենքի համեմատ: «Հավաքների ազատության մասին» օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ ոչ ոք իրավունք չունի պարտադրելու անձին մասնակցել որևէ հավաքի կամ խոչընդոտել նրա մասնակցությունը որևէ հավաքի: Այդուհանդերձ, 2013 թվականին արձանագրվել են քաղաքացիների հավաքների ազատության իրավունքի խախտման մի շարք դեպքեր, երբ նրանց ստիպել են մասնակցել հավաքների կամ ընդհակառակը՝ խոչընդոտել են նրանց մասնակցությունը այլ հավաքներին՝ կախված նրանից, թե այդ հավաքները կազմակերպում էին իշխանամետ թե՞ հակաիշխանական ուժերը: Իսկ ոստիկանությունը նման դեպքերում ոչ միայն անգործություն

[34] Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի (ԽԱՊԿ) 2013թ. տարեկան զեկույց, http://khosq.am/reports/2013-թ-տարեկան-զեկույց/

է ցուցաբերել, այլև հաճախ կատարել է գործնականում հավաքների մասնակցության արգելման կամ հարկադրման գործիքի դերը:

2013 թվականին արձանագրվել են նաև այնպիսի դեպքեր, երբ օլիգարխները կաշառել են իրենց կողմնակիցներին՝ բողոքի իրական ակցիաներին հակազդելու համար: Նման վառ օրինակներից է Երևանի Փակ շուկայի պատմական շենքն աղճատելու և սուպերմարկետի (որը պատկանում է իշխող Հանրապետական կուսակցությունից ԱԺ պատգամավոր գործարար Սամվել Ալեքսանյանին) վերածելու դեմ բողոքող ակտիվիստների ակցիաներին, ինչպես նաև հանքերի բաց շահագործման և սակավաջուր գետերի վրա նոր ՀԷԿ-եր կառուցելու դեմ ուղղված մի շարք բնապահպանական ակցիաներին հակազդելու նպատակով ձեռնարկված գործողությունները:

2013 թվականին Երևանի քաղաքապետարանը ստացել է հավաքների անցկացման մասին երկու հարյուր վաթսունչորս իրազեկում: Դիմումներից երկուսը վերադարձվել է սահմանված վերջնաժամկետից ուշ ներկայացվելու պատճառով, իսկ քսանի դեպքում քաղաքապետարանը սահմանափակել է հավաքների երթուղին: Հրատապ հավաքների վերաբերյալ հստակ տեղեկություններ չկան: 2013 թվականին, ընդհանուր առմամբ, միայն Երևան քաղաքում 246 օր տեղի են ունեցել հանրային միջոցառումներ, ընդ որում՝ երբեմն նույն օրն անցկացվել է մի քանի միջոցառում, ներառյալ՝ բողոքի ակցիաներ, այդ թվում՝ առանց քաղաքապետարանին ծանուցելու անցկացված մի քանի ավելի փոքրածավալ հավաքներ և ցույցեր:[35] Քաղաքացիների մի շարք խմբեր արդեն ավանդական դարձած փոքրաքանակ հավաքներ են անցկացնում Կառավարության շենքի դիմաց

[35] «Հավաքների ազատության մասին» օրենքի համաձայն՝ մինչև 100 մասնակից ունեցող հավաքների անցկացման մասին լիազոր մարմնին իրազեկելու կարիք չկա:

հինգշաբթի օրերին՝ Կառավարության շաբաթական նիստերի ժամանակ:

Երևանի քաղաքապետարանի տրամադրած տեղեկությունները վկայում են, որ նախքան 2011թ. ապրիլին «Հավաքների ազատության մասին» օրենքի ընդունումը հավաքների ազատության իրավունքը խիստ սահմանափակումների է ենթարկվել: 2008թ. մարտին խաղաղ ցույցերի բռնի ճնշումից հետո իշխանությունները շարունակաբար արգելել են հանրային հավաքներ անցկացնել Ազատության հրապարակում: Ազատության հրապարակում հանրահավաք անցկացնելու առաջին պաշտոնական թույլտվությունը ստացել է Հայ ազգային կոնգրեսը 2011թ. ապրիլի 28-ին: 2012 թվականին հավաքների անցկացման մասին իրազեկումների 10 տոկոսը վերադարձվել է կազմակերպիչներին՝ նոր օրենքի տեխնիկական պահանջներին չհամապատասխանելու հիմքով: Հավաքների մասին իրազեկումների և կայացած հավաքների թվի կտրուկ աճ է արձանագրվել 2013 թվականին:

Երևանում հավաքների անցկացման դիմում-իրազեկումներ	2010թ.	2011թ.	2012թ.	2013թ.
Ի գիտություն ընդունում	38	19	77	241
Հավաքների անցկացման վայրի կամ երթուղու փոփոխություն կամ սահմանափակում	46	55	3	20
Արգելում	3	0	0	0
Օրենքի պահանջներին չհամապատասխանելու պատճառով վերադարձված դիմումներ	0	0	12	3
Կազմակերպիչների կողմից դիմումները հետ վերցնելու դեպքեր	1	2	9	0
Ընդամենը	88	76	101	264

Թեև ընդամենը 20 հավաքի դեպքում է պաշտոնապես սահմանափակում ներկայացվել, ոստիկանները հաճախ կամայականորեն, անհարկի և առանց որևէ հիմքի սահմանափակումներ են կիրառել հանրահավաքների նկատմամբ՝

դրանց ցրելու նպատակով: 2013 թվականին անցկացված բողոքի ակցիաների ընթացքում ոստիկանները մեծամասամբ բռնություն են կիրառել ցուցարարների և լրագրողների նկատմամբ: Բազմաթիվ դեպքերում ցույցերի մասնակիցներին ձերբակալել են, բերման են ենթարկել և ահաբեկել: Շատ անգամ ցուցարարների նկատմամբ վարչական կամ քրեական պատասխանատվության հայց է ներկայացվել: Ակտիվիստները հաճախ նշել են, որ ցուցարարների շարքում կան ոստիկանների ծպտյալ սադրիչներ, ովքեր վիճաբանության մեջ են մտնում ոստիկանության աշխատակիցների կամ այլ ցուցարարների հետ և ոստիկանության համար հիմք նախապատրաստում հանրահավաքը ցրելու կամ մասնակիցներին ապօրինաբար ձերբակալելու համար:

Սույն զեկույցը ներառում է 54 միջադեպ, որոնց ընթացքում բազմաթիվ իրավունքներ են խախտվել: Վերաբերելի իրավունքների ինդեքսը ներառված է զեկույցում: Զեկույցում ներառված դեպքերը վերաբերում են հետևյալ իրավունքներին.

Վերաբերելի իրավունք	Առնչվող դեպքերի թիվը
Ընտրական իրավունքներ	5
Հավաքների և միավորումների ազատություն	26
Տեղեկատվության ազատություն	3
Ազատ տեղաշարժի իրավունք	6
Խոսքի և արտահայտման ազատություն	16
Սեփականության իրավունք	8
Խտրականությունից զերծ մնալու իրավունք	12
Խոշտանգումից և անմարդկային կամ նվաստացնող վեաբերմունքից ու պատժից զերծ մնալու իրավունք	10
Արդար դատաքննության իրավունք	32
Ազատության և անձեռնմխելիության իրավունք	24
Կյանքի իրավունք	10
Որոշումների կայացմանը մասնակցելու իրավունք	2
Անձնական կյանքը հարգելու իրավունք	8

Չնայած ոստիկանության կողմից իրականացվող բարեփոխումների ծրագրերի, այդ թվում՝ ոստիկանության աշխատակիցների վարքագծի ԵԱՀԿ չափանիշների շուրջ ոստիկանների շարունակական վերապատրաստման մասին հավաստիացումներին՝ իրավապահ մարմինների նկատմամբ վստահության ցածր տոկոսը[36], խաղաղ հավաքների ժամանակ ոստիկանների դրսևորած պահվածքը և հավաքների ազատության իրավունքի փաստացի խախտումները վկայում են, որ նշված բարեփոխումները ձևական բնույթ են կրում: Հավաքների ընթացքում ոստիկանները շարունակաբար հղում են կատարել այլ՝ ենթադրյալ քաղաքացիների իրավունքների և ազատությունների պաշտպանությանը՝ խաղաղ հավաքների երթուղու և տևողության հաշվին: Ոստիկանության՝ հավաքների ազատության իրավունքի իրացումն ապահովելու դժկամությունն արտացոլում է նաև այն հանգամանքը, որ ոստիկանությունը կտրականապես հրաժարվում է թույլատրել երկարաժամկետ ցույցերի անցկացման համար նվազագույն հարմարանքների (օրինակ՝ վրանների) օգտագործումը: Ոստիկանության այս վարքագիծը քննադատել է ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանը՝ փաստելով, որ առնվազն մեկ վրան տեղադրելու ցուցարարների պահանջն իրավաչափ է: Սակայն ոստիկանության վարքագիծը մնացել է անփոփոխ:[37] 2013թ. նոյեմբերին ՀՀ ոստիկանության պետ Վլադիմիր Գասպարյանը, խոսելով ոստիկանության բարեփոխումների մասին, հայտարարել է, որ ոստիկանության հակառակորդներն են հանցագործները, քաղաքական ընդդիմությունը և քաղաքական-հասարակական կազմակերպությունները, որոնք ընդդիմադիր են:[38] Այս

36 Իրավապահ մարմինների կամայականության համաթիվը հհ հյուսիսային մարզերում, ՀՔԱ Վանաձորի գրասենյակ, http://hcav.am/wp-content/uploads/2014/04/ԻՐԱՎԱՊԱՀ-ՄԱՐՄԻՆՆԵՐԻ-ԿԱՄԱՅԱԿԱՆՈՒԹՅԱՆ-ՀԱՄԱԹԻՎԸ.pdf

[37] Ոստիկանության գործողություններում խախտում հայտնաբերելու և այն կատարած պաշտոնատար անձին պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ Մարդու իրավունքների պաշտպանի որոշում, http://www.ombuds.am/this_time/view/article/230

[38] Վովա Գասպարյան. Մեր հակառակորդներն են հանցագործները եւ քաղաքական ընդդիմությունը - http://www.ilur.am/news/view/21601.html#sthash.nmq6gRKP.dpuf

հայտարարությունից պարզ է դառնում իրավապաշտպանների և մասնավորապես՝ ակտիվիստների նկատմամբ ոստիկանության անհանդուրժողականությունը:

Հայաստանում իրավապաշտպանների վիճակի վերլուծությունից պարզ է դառնում, որ ՀՀ կառավարությունը ոչ միայն իրավապաշտպանների համար հնարավորություն չի ստեղծել մարդու իրավունքների պաշտպանության գործում արդյունավետ ներգրավվելու համար, այլև մեծապես օգտագործել է ոստիկանության ռեսուրսները որպես քաղաքական լծակ: Ոստիկանության աշխատակիցները բազմիցս խախտել են հավաքների ազատության և ազատ տեղաշարժի իրավունքը, ինչպես նաև անձի ազատության և անձեռնմխելիության իրավունքը: Չնայած այդ մասին վկայող փաստաթղթերով հիմնավորված բազում ապացույցների առկայությանը՝ որևէ կանխարգելիչ միջոցառում այդպես էլ չի ձեռնարկվել քաղաքացիների՝ իրենց և այլոց իրավունքները պաշտպանելու սահմանադրական իրավունքի կենսագործումն ազգային և միջազգային օրենսդրությամբ նախատեսված միջոցներով ապահովելու համար:

2014 թ. մի շարք ակտիվիստներ հակընդդեմ հայց են ներկայացել ոստիկանության դեմ՝ պահանջելով ճանաչել իրենց արտահայտման, հավաքների, տեղաշարժման ազատության, անձի ազատության և անձեռնմխելիության իրավունքների խախտման փաստը, ինչպես նաև գնահատել ոստիկանների գործողությունների իրավաչափությունը: Թեև որոշ դեպքերում դատարանը ճանաչել է խախտումը, նմանատիպ այլ դեպքեում կամ նույն միջադեպին առնչվող այլ մարդկանց դեպքերում նույն խախտումը չի ճանաչվել: Միաժամանակ ոստիկանության վարքը նույնպես մնացել է կամայական և անկանխատեսելի:

ՄԱԿ-ի Իրավապաշտպանների վիճակի հարցերով հատուկ զեկուցողի Հայաստանի վերաբերյալ առաջարկությունների կատարումը

2006 թվականին Հայաստանի Հանրապետությունը անժամկետ հրավեր է ուղարկել բոլոր հատուկ ընթացակարգերով ՄԱԿ-ի լիազոր մարմիններին: 2010 թվականին հսկողական այցով Հայաստան են ժամանել Իրավապաշտպանների վիճակի հարցերով հատուկ զեկուցողը և Կամայական կալանավորման հարցերով աշխատանքային խումբը:

2010 թվականի այցից հետո Իրավապաշտպանների վիճակի հարցերով հատուկ զեկուցողը ներկայացրել է 34 առաջարկություն, այդ թվում՝ 23-ը՝ կառավարությանը, 4-ը՝ Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակին, 5-ը՝ միջազգային հանրությանը և նվիրատու կազմակերպություններին, և 2-ը՝ իրավապաշտպաններին:

Առաջարկությունների կատարումը գնահատվել է ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից ըստ սույն զեկույցում ներկայացված ընդհանուր դիտարկումների և տիրապետած տեղեկատվության:

Կառավարությանը ներկայացված առաջարկությունների իրագործում

Ըստ ՀՔԱ Վանաձորի գրասենյակի գնահատման՝ ՀՀ Կառավարությանը ներկայացված առաջարկություններից՝

- Կատարվել է – 2 առաջարկություն
- Կատարվել է մասնակի – 10 առաջարկություն
- Չի կատարվել – 11 առաջարկություն

- *Հրապարակավ ընդունել բարգավաճ, բազմակարծիք և ժողովրդավարական հասարակության կառուցման գործում իրավապաշտպանների դերն ու նշանակությունը*: - Չի կատարվել
- *Իրագործել քաղաքացիական իրազեկության և մարդու իրավունքների կրթական ծրագրեր՝ նպատակ ունենալով խթանել հանդուրժողականությունը և հարգանքը մարդու իրավունքների հանդեպ, ինչպես նաև՝ երաշխավորել անձի արժանապատվությունը և հարգանքը նրա հանդեպ:* - Չի կատարվել

Թեև հասարակության լայն զանգվածների աջակցությունը վայելող որոշ հարցերի շուրջ կառավարության հետ համագործակցության մեջ որոշ առաջընթաց է արձանագրվել, համագործակցությունը ձախողվել է բոլոր այն դեպքերում, երբ խոսք է գնացել առավել խոցելի խմբերի (մասնավորապես՝ ԼԳԲՏԻ անձանց և կրոնական փոքրամասնությունների իրավապաշտպանների) պաշտպանության մասին: Ավելին, Հայաստանի կառավարության՝ ՔՀԿ-ների և իրավապաշտպանների հետ հաշվի նստելու և համագործակցելու դժկամությունն ակնհայտ էր դառնում նաև պետական քարոզչության մեջ, որի թիրախում 2013 թվականին առավելապես հայտնվել էին կանանց և ԼԳԲՏԻ անձանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող ՀԿ-ները և Հայաստանի եվրաինտեգրման ջատագովները: Իշխող վարչակարգի ցանկացած քննադատություն ընդունվում է ագրեսիվ մերժողականությամբ: Որոշ պաշտոնատար անձինք նսեմացուցիչ արտահայտություններ էին թույլ տալիս իրավապաշտպանների հասցեին՝ նպատակ ունենալով նրանց ներկայացնել պետության թշնամու կերպարով:[39]

- *Կառուցել վստահություն և խթանել երկխոսություն բոլոր շահագրգիռ կողմերի համագործակցության և փոխադարձ հարգանքի հիման վրա՝ հանուն քաղաքացիական հասարակության և ՀԼՄ-ների*

[39] Տե՛ս՝ նախորդ նշումը

հզորացման, որպեսզի վերջիններս իմաստալից դեր խաղան ժողովրդավարական գործընթացում: - Չի կատարվել

- *Երաշխավորել ոչ խտրական հիմքերով արդյունավետ մասնակցություն պետական գործերին, որը ներառում է քննադատություն արտահայտելու և առաջարկներ ներկայացնելու իրավունքը՝ հանուն պետական մարմինների, գերատեսչությունների և հանրային գործերով զբաղվող այլ հաստատությունների աշխատանքի բարելավման:* - Կատարվել է մասնակի
- *Լիարժեք խորհրդակցել և հաշվի առնել քաղաքացիական հասարակության և իրավապաշտպանների տեսակետները որոշումների կայացման գործընթացում, ներառյալ՝ օրենսդիր և պետական քաղաքականության մշակման գործընթացում, ինչպես նաև տարածաշրջանային ու միջազգային իրավապաշտպան կազմակերպություններին զեկույցներ ներկայացնելու գործում:* - Չի կատարվել

Համագործակցության մեջ նկատելի է որոշակի առաջընթաց հանրային լսումների և քննարկումների անցկացման հաճախականության առումով, այդուհանդերձ, համագործակցությունը հիմնականում իրականացվում է անհատական մակարդակով, մինչդեռ պետական մարմինները շարունակում են անհաղորդ մնալ քաղաքացիական հասարակությանը՝ միայն բացառիկ դեպքերում հաստատելով իրական երկխոսություն: Ավելին, իրավապաշտպանները չեն ներգրավվում մարդու իրավունքների զգայուն հարցերով որոշումների կայացման գործընթացում: Օրինակ, 2014թ. փետրվարին ՀՀ կառավարության ընդունած ՄԻ ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագրի վերջնական տարբերակը չի ներառում առավել զգայուն հարցերը և իրավապաշտպանների կարողությունների զարգացմանն ուղղված որևէ միջոցառում, բացի՝ համապատասխան մարմինների հետ ՔՀԿ-ների տարեկան հանդիպում-քննարկումները, ինչպես նաև նրանց մասնակցությունը միջոցառումների ծրագրի իրագործման մոնիթորինգին:

- *Լիարժեք կատարել Մարդու իրավունքների խորհրդի համընդհանուր պարբերական դիտարկման աշխատանքային խմբի հանձնարարականները և լրամշակել օրենսդրությունը՝ Հայաստանի ընդունած ՀՊԴ առաջարկներին համապատասխան:* - Կատարվել է մասնակի
- *Քաղաքացիական հասարակությունը ներգրավել համընդհանուր պարբերական դիտարկման գործընթացում Հայաստանի գնահատման շրջանակներում կատարված առաջարկների իրագործմանը հետևելու շարունակական և կայուն գործընթացում:* - Կատարվել է մասնակի

Ըստ Միջնաժամկետ գնահատման արդյունքների վերաբերյալ զեկույցի՝ 2013թ. մարտի դրությամբ 42 հանձնարարական չի իրականացվել, 78 հանձնարարական իրականացվել է մասնակիորեն, իսկ լիովին իրականացվել է 43 հանձնարարական: 166 հանձնարարականներից և կամավոր պարտավորություններից անպատասխան է մնացել մեկը:[40]

Կառավարությունը երկօրյա հանդիպում է անցկացրել սահմանափակ թվով ՔՀԿ-ների հետ 2011թ. դեկտեմբերին՝ միջնաժամկետ գնահատման ժամանակահատվածում: ՀՊԴ հարցերով 21-րդ նիստի համար պատրաստվող զեկույցները կներկայացվեն 2014թ. հունիսին: 2014թ. հունիսի դրությամբ՝ ՀՊԴ երկրորդ շրջափուլը գնահատելու հարցով ՔՀԿ-ներին չեն դիմել:

- *Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագրում հաշվի առնել իրավապաշտպանների, այդ թվում՝ կանանց և ԼԳԲՏԻ անձանց իրավունքների պաշտպանների հատուկ կարիքները:* - Չի կատարվել

Ինչպես արդեն նշվել է, ՀՀ Կառավարության կողմից 2014թ. փետրվարին ընդունված միջոցառումների ծրագրի վերջնական

[40]Հայաստանի միջնաժամկետ գնահատման արդյունքների վերաբերյալ զեկույց http://www.upr-info.org/followup/assessments/session21/armenia/MIA-Armenia.pdf

տարբերակում չի ընդգրկվել իրավապաշտպանների կարողությունների զարգացմանն ուղղված որևէ գործողություն, մինչդեռ ընդգծվել է ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի կարողությունների ամրապնդումը՝ որպես մարդու իրավունքների պաշտպանության միակ մեխանիզմ: Միջոցառումների ծրագրում անդրադարձ չի կատարվում մարդու իրավունքների պաշտպանության հետ կապված առավել զգայուն հարցերին, օրինակ՝ խտրականության արգելմանը:

- *Երաշխավորել, որ գործող օրենքները, կանոնակարգերը և որոշումներն իրագործվեն լիակատար, ժամանակին և արդյունավետ՝ Հայաստանի ստանձնած միջազգային պարտավորություններին համապատասխան:* - Կատարվել է մասնակի
- *Երաշխավորել, որ նոր օրենքները և գործող օրենսդրության լրացումները համապատասխանեն միջազգային չափանիշներին և Հայաստանի կողմից վավերացրած մարդու իրավունքների վերաբերյալ փաստաթղթերին:* - Կատարվել է մասնակի

Ինչպես արդեն նշվել է, Հայաստանի կառավարությունը պատրաստակամ չէ ընդունել խտրականությունն արգելող օրենքներ: Ավելին, 2013 թվականին արձանագրվել է ԼԳԲՏԻ անձանց իրավունքները սահմանափակելու և նրանց դեմ դրսևորվող խտրականությունը որոշ չափով օրինականացնելու մի քանի փորձ: 2013 թվականի օգոստոսին ՀՀ ոստիկանությունը հանդես է եկել մի անհաջող առաջարկով, այն է՝ լրացումներ կատարել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում՝ պատասխանատվություն նախատեսելով «ոչ ավանդական սեռական հարաբերությունների քարոզչության» համար:[41]

[41] «ԼԳԲՏ անձանց իրավունքների իրավիճակը Հայաստանում 2013», «Փինք Արմենիա» ՀԿ, http://www.pinkarmenia.org/2014/04/lgbtreport2013/

Հայաստանի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանի կողմից 2012 թվականին ներկայացված «Խտրականության դեմ» օրինագծի նախնական տարբերակով արգելվում է խտրականությունը սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով: Հետագայում նշված արտահայտությունը հանվել է սահմանումից, իսկ օրինագծի ընթացքը մնացել է առկախված:

2013թ. մայիսին ՀՀ Ազգային ժողովն ընդունել է «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների մասին» օրենքը: Օրենքի ընդունումից հետո քննադատության և բուռն բանավեճերի ալիք է բարձրացել, հիմնականում «գենդեր» եզրույթի շուրջ, որն օրենքի 3-րդ հոդվածում սահմանվել է որպես տարբեր սեռի անձանց ձեռքբերովի, սոցիալապես ամրագրված վարք: Հայ Առաքելական եկեղեցուն, տարբեր ազգայնական խմբերին և վերջերս հիմնված Համահայկական ծնողական կոմիտեին հաջողվել է ներկայացնել օրենքը և մասնավորապես «գենդերի» սահմանումը՝ որպես մանկապղծության, արյունապղծության և այլասերվածության օրինականացման գործընթացին կանաչ լույս տվող ազդանշան:

Մտահոգության տեղիք է տալիս նաև այն հանգամանքը, որ ազգային օրենսդրությամբ ընդունված խոշտանգման սահմանումը չի համապատասխանում խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ ՄԱԿ-ի կոնվենցիայի 1-ին հոդվածի պահանջներին: Սա մեծապես խոչընդոտում է խոշտանգումներից տուժած անձանց իրավական պաշտպանության արդյունավետ միջոցներին, այդ թվում՝ փոխհատուցման տրամադրմանը:

- *Ապահովել բոլորի համար խաղաղ, բաց և հրապարակային ցույցերի իրավունքի լիարժեք հասանելիությունը՝ առանց անհարկի սահմանափակումների:* - Կատարվել է մասնակի

2011 թվականին ընդունված «Հավաքների ազատության մասին» նոր օրենքը նշանակալի առաջընթաց քայլ է հավաքների ազատության իրավունքի ապահովման համար: Այդուհանդերձ, ոստիկանները հաճախ կամայականորեն անհարկի սահմանափակումներ են կիրառել հանրահավաքների մասնակիցների նկատմամբ՝ նրանց առանց որևէ հիմքի ցրելու նպատակով:[42]

- *Անցկացնել մարդու իրավունքների խախտման բոլոր դեպքերի, մասնավորապես՝ լրագրողների վրա հարձակումների արագ, մանրակրկիտ և թափանցիկ հետաքննություն՝ նպատակ ունենալով ստեղծել ապահով և բարենպաստ միջավայր, որտեղ իրավապաշտպանները կծավալեն իրենց գործունեությունը՝ զերծ մնալով սահմանափակումներից, այդ թվում՝ ճնշումներից և դատական հետապնդումից:* - Չի կատարվել
- *Ապահովել, որ նման հետաքննությունն ուղղված լինի դատական հետապնդման իմաստավորմանը և արդյունավետությանը՝ միջազգային իրավական չափանիշներին, ներառյալ՝ Իրավապաշտպանների վերաբերյալ ՄԱԿ-ի հռչակագրին համապատասխան:* - Չի կատարվել

Որպես կանոն, հարձակումների և ահաբեկման մասին իրավապաշտպան կազմակերպությունների և ակտիվիստների բողոքներն ու հաղորդումներն ըստ հարկի չեն քննվել: Իրավապաշտպանների դեմ ուղղված հարձակումների քննությունն անհարկի ձգձգվում է. քրեական գործեր չեն հարուցվում կամ կասեցվում են՝ անհետևանք անցնելով իրավախախտների համար:[43]

Արձանագրվել է մի քանի դեպք, երբ ակտիվիստները ոստիկանությանը հաղորդել են ոստիկանների կողմից իրենց նկատմամբ գործադրված ֆիզիկական բռնության մասին, և ոստիկանությունում հենց իրենց դեմ են գործ հարուցել՝ կեղծ

[42] Տե՛ս՝ Դեպք 48. Պուտինի այցը
[43] Տե՛ս Դեպք 31. Մկրտիչ Տոնոյան

հայտարարության, իշխանության ներկայացուցչի պահանջներին չենթարկվելու և իշխանության ներկայացուցչի նկատմամբ բռնության գործադրելու մեղադրանքով:[44] Որոշ դեպքերում դատարանում ցուցմունք տվող միակ վկաները ոստիկանության աշխատակիցներն են, ինչը կասկածների տեղիք է տալիս հետաքննության ընթացքի և առաջադրված մեղադրանքի հիմքերի արդարացիության վերաբերյալ: Հաշվետու ժամանակահատվածում լրագրողները, քաղաքացիական ակտիվիստները, ԼԳԲՏԻ անձանց և կանանց իրավունքների պաշտպանները, իրավաբանները և բնապահպանական ակտիվիստները ենթարկվել են ճնշումների և հետապնդումների:

- *Իրականացնել ոստիկանական ծառայության բարեփոխումների համապարփակ ծրագիր, անմիջապես քայլեր ձեռնարկել դատահիրավական համակարգի լիակատար անկախությունն ապահովելու ուղղությամբ և բարեփոխել արդարադատության իրականացման գործելակերպը՝ պետական կառույցներում հաշվետվողականության ապահովմանն ուղղված հակակոռուպցիոն ծավալուն ռազմավարության իրականացմանը զուգընթաց:* - Կատարվել է մասնակի

ՔՔԻՄԴ-ի հարցերով Մարդու իրավունքների կոմիտեին ներկայացված զեկույցի համաձայն՝ Հայաստանի կառավարությունը հայտնել է, որ Հայաստանի Հանրապետության իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագրի և ծրագրից բխող միջոցառումների ցանկում ամրագրվել են դատահիրավական անկախության խթանմանն ուղղված մի շարք օրենսդրական փոփոխություններ: Այդուհանդերձ, որևէ հիմք չկա հավատալու, որ առաջարկվող փոփոխությունները կնպաստեն դատական համակարգի անկախությանը, մասնավորապես՝ դատավորներին նշանակելու և աշխատանքից ազատելու հարցերում Հայաստանի

[44] Տե՛ս Դեպք 29. Կոմիտաս 5. Արգիշտի Կիվիրյան

նախագահին վերապահված վճռական և բացառիկ դերի (առանց որոշումը հիմնավորելու պարտավորության), ինչպես նաև բարձր ատյանների, մասնավորապես՝ Վճռաբեկ դատարանի կողմից այլ՝ ոչ պաշտոնական ներքին լծակների չարաշահման անազնիվ գործելակերպի առումով:

Ըստ Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոնների՝ 2012 թվականին Հայաստանի դատարանների նկատմամբ հանրության վստահությունը նվազել է 2011 թվականի համեմատ: Եթե 2011 թվականին ՀՀ դատարաններին լիովին վստահել է բնակչության 6 տոկոսը, իսկ որոշ չափով վստահել է բնակչության 16 տոկոսը, ապա 2012 թվականին այդ ցուցիչները կրճատվել են, համապատասխանաբար նվազելով 4 տոկոսի և 13 տոկոսի: Ըստ «Թրանսփերենսի ինթերնեյշնլ» ՀԿ-ի՝ Հայաստանի բնակչության 67 տոկոսի կարծիքով դատական համակարգը կոռումպացված է:

2013թ. դեկտեմբերին ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանը հրապարակել է Արդար դատաքննության իրավունքի վերաբերյալ արտահերթ զեկույցը[45]՝ բացահայտելով համակարգում արձանագրված աստիճանակարգային չարաշահումները և ղեկավարների կողմից ստորադասների լիակատար հսկողությունը, երկակի ստանդարտների կիրառումը և մասնավորապես՝ Վճռաբեկ դատարանի և դրա նախագահի կողմից որդեգրված կոռուպցիոն գործելաոճը: ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի զեկույցում ներկայացվում են տարբեր դատարանների կողմից ստացվող կաշառքի չափերը, ինչպես նաև առանց Վճռաբեկ դատարանի հավանության որոշումներ կայացնելու համարձակություն դրսևորած ստորադաս ատյանների դատավորներին սանձելու նպատակով կարգապահական միջոցների կամայական ձեռնարկումը: Վճռաբեկ դատարանին առընթեր Դատական դեպարտամենտը և գլխավոր դատախազը խստիվ քննադատել են զեկույցը՝ առանց հաշվի առնելու կամ

[45] ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի արտահերթ զեկույց արդար դատաքննության իրավունքի վերաբերյալ, http://ombuds.am/library/library/page/101/type/3

հետաքննելու այդտեղ ներկայացված կոնկրետ փաստերից որևէ մեկը:

Ընթացիկ բարեփոխումների ծրագրին նախորդել է Ոստիկանության գործունեության ոլորտում 2010-2011 թվականների բարեփոխումների ծրագիրը, որը շատ ավելի ծավալուն էր: Ընթացիկ ծրագրի նմանությամբ նախորդ ծրագիրը նույնպես ներառել է կառուցվածքային և կազմակերպչական բարեփոխումներ, ոստիկանության նկատմամբ վստահության աստիճանի բարձրացմանն ուղղված բարեփոխումներ, ոստիկանության աշխատակիցների իրավական և սոցիալական պաշտպանությանն ուղղված բարեփոխումներ: 2010-2011թթ. բարեփոխումների ծրագրի շրջանակներում մեկնարկել է համայնքային ոստիկանության մոդելի ներմուծումը: ՀՀ ոստիկանության գործունեության ոլորտում 2010-2011թթ. բարեփոխումների ծրագրի վերլուծության համաձայն՝ նախատեսված աշխատանքների 49 %-ը չի իրականացվել, իսկ լիովին իրականացվել է միայն 37 %-ը:[46] Ծրագրի իրագործման վերաբերյալ ՀՀ ոստիկանության զեկույցը խիստ ընդհանուր էր և հակիրճ, իսկ ծրագրային միջոցառումների իրականացման համար ընդունված իրավական ակտերը, այդ թվում՝ ՀՀ ոստիկանապետի որոշումներն անգամ չեն տեղադրվել ՀՀ ոստիկանության պաշտոնական կայքում: Ի պատասխան ՀՔԱ Վանաձորի գրասենյակի հարցմանը «Հասարակական կարգի պահպանության մեջ ներգրավված ոստիկանության ստորաբաժանումների ծառայողների գործողությունների, զանգվածային անկարգությունների ժամանակ նրանց կողմից ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և զենքի գործադրման ուղեցույցի», «Հասարակական կարգը պահպանելիս և հասարակական անվտանգությունն ապահովելիս բանակցություններ վարելու մասին ուղեցույցի» և մի շարք այլ փաստաթղթերի վերաբերյալ՝ ՀՀ ոստիկանությունից հայտնել են, որ ՀՀ ոստիկանապետի

[46]ՀՀ ոստիկանության գործունեության ոլորտում 2010-2011 թվականների բարեփոխումների ծրագրի իրականացման վերլուծություն, ՀՔԱ Վանաձոր, http://hcav.am/wp-content/uploads/uploads/2012/04/Զեկույց.pdf

հրամանով հաստատված ուղեցույցները հասանելի են ԵԱՀԿ երևանյան գրասենյակի պաշտոնական կայքում: Այսինքն, ԵԱՀԿ երևանյան գրասենյակի աջակցությամբ կազմված ՀՀ ոստիկանապետի պաշտոնական հրամանները հասանելի էին միայն ԵԱՀԿ երևանյան գրասենյակի կայքում և ոչ թե ՀՀ ոստիկանության կայքում: 2013-2014թթ. ՀՀ ոստիկանությունը պարտավորվել է իրականացնել ինչպես անմիջապես ՀՀ ոստիկանության աշխատանքի բարելավմանն ուղղված համակարգային բարեփոխումներ, այնպես էլ տարբեր ոլորտներում ՀՀ ոստիկանության կողմից ձեռնարկվող գործողությունների արդյունավետությունը մեծացնող բարեփոխումներ: Քաղաքացիական հասարակության կազմակերպությունները 2013-2014թթ. բարեփոխումների ծրագրի մշակման գործընթացում չեն ներգրավվել: Ավելին, ծրագրի վերաբերյալ ՀՔԱ Վանաձորի հարցմանն ի պատասխան՝ ՀՀ ոստիկանությունից հայտնել են, որ ծրագիրը դեռևս մշակման փուլում է, և հանրային քննարկումներ անցկացնելու նպատակահարմարությունը կորոշվի ծրագրի նախագիծն ավարտին հասցնելուց հետո: Այդուհանդերձ, Ոստիկանության գործունեության ոլորտում բարեփոխումների ծրագիրը ՀՀ ոստիկանության պաշտոնական կայքում տեղադրվել է միայն դրա ընդունումից հետո:

- *Ճանաչել Մարդու իրավունքների պաշտպանի՝ Հայաստանի հասարակությունում կարևոր դերակատարի նշանակությունը:* - Կատարվել է մասնակի
- *Հզորացնել Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի ֆինանսական և նյութական ապահովությունը՝ իր լիազորություններն ավելի արդյունավետորեն կատարելու համար հնարավորություն ստեղծելու նպատակով:* - Կատարվել է մասնակի

Ինչպես արդեն նշվել է, ընդունված ՄԻ ազգային ռազմավարությունից բխող միջոցառումների ծրագրի համաձայն՝ Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանության

«մենաշնորհը» վերապահված է ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանին, սակայն վերջինս չունի իր լիազորությունները լիարժեքորեն իրականացնելու համար անհրաժեշտ լծակները: Ավելին, չնայած ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի դերի մեծացմանը, նույնիսկ մարզերում վերաբացվելիք ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակների (մարզային գրասենյակները փակվել են մեկ տարվա ընթացքում ֆինանսավորման բացակայության պատճառով) նախնական թիվը փոխվել է՝ 6-ից կրճատվելով 3-ի՝ շահագործման ծախսերը նվազեցնելու համար:

- *Վերանայել «Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքում նախատեսվող փոփոխությունների և լրացումների նպատակահարմարությունը*: - Կատարվել է
- *Փոփոխությունների վերանայման անհրաժեշտության պարագայում ապահովել, որ մշտական հանձնաժողովը և Մարդու իրավունքների պաշտպանն անցկացնեն հանրային լսումներ «Հասարակական կազմակերպությունների մասին» օրինագծի շուրջ, և որ հաշվի առնվի քաղաքացիական հասարակության կարծիքը:* - Կատարվել է

Օրենքի փոփոխությունները մերժվել են ՔՀԿ-ների ազդեցությամբ:

- *«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» օրենքում առաջարկվող փոփոխություններում և լրացումներում լիարժեք կերպով արտացոլել քաղաքացիական հասարակության և միջազգային փորձագետների առաջարկները*: - Չի կատարվել
- *Վերանայել «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» օրենքում 2010 թվականին կատարած փոփոխությունները և լրացումները՝ նպատակ ունենալով լիարժեքորեն խորհրդակցելու ներպետական կառույցների բոլոր շահագրգիռ ներկայացուցիչների, ինչպես նաև միջազգային փորձագետների և դիտորդների հետ:*

Մասնավորապես, փոփոխությունները և լրացումները պետք է վերանայվեն՝ ՁԼՄ-ների ազատության հարցերով ԵԱՀԿ ներկայացուցչի առաջարկներն ընդունելու նպատակով: - Չի կատարվել

- *Ընդունել օրենսդրական կանոնակարգեր՝ ապահովելու, որպեսզի Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովը լիովին անկախ լինի կառավարությունից, այդ թվում՝ հանձնաժողովի անդամների նշանակումը հանձնաժողովի ֆինանսավորումը և դրա գործունեությունն ապաքաղաքականացնելու միջոցով:* - Չի կատարվել
- *Հստակ արդյունավետ քայլեր ձեռնարկել՝ խրախուսելու ՁԼՄ-ների և լրատվական գործակալությունների սեփականատիրության բազմազանությունը, այդ թվում՝ հեռարձակող լրատվամիջոցների արտոնագրման գործող կարգի վերանայման և նոր արտոնագրերի տրամադրման կասեցումը վերացնելու միջոցով:* - Չի կատարվել

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» օրենքով դեռևս չի երաշխավորվում Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի անկախությունը: ՁԼՄ-ների սեփականատիրության վերաբերյալ տեղեկատվության բացահայտումը հստակ կարգավորված չէ, իսկ հեռարձակվող լրատվամիջոցները պատկանում են իշխող վերնախավին, ինչն էլ ինքնաբերաբար բացառում է ՁԼՄ-ների շրջանում բազմակարծությունը: 2015 թվականին նախատեսված ռադիոհեռուստատեսային հեռարձակման թվային համակարգին անցնելու հայեցակարգն արժանացել է ՔՀԿ-ների և լրատվամիջոցների քննադատությանը ՁԼՄ-ների բազմազանությունը և մտքի ազատությունը սահմանափակելու պատճառով:

- *Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ համատեղ վերանայել ՀՀ քրեական և քաղաքացիական օրենսգրքերում 2010 թվականին կատարված փոփոխությունները և լրացումները՝ կապված վիրավորանքի և զրպարտության ապաքրեականացման հետ՝ նպատակ ունենալով պատշաճ հավասարակշռություն*

ապահովել հեղինակության իրավունքի պաշտպանության և ազատ արտահայտվելու ու մամուլի ազատության իրավունքի միջև և ՀՀ օրենսդրության դրույթները համապատասխանեցնել միջազգային լավագույն ընթացակարգերին: - Կատարվել է մասնակի

ՀՀ քրեական և քաղաքացիական օրենսգրքերում 2010 թվականի մայիսին կատարված փոփոխությունների արդյունքում զրպարտությունը և վիրավորանքն ապաքրեականացվել են, նշված իրավախախտումների համար սահմանված առավելագույն տուգանքը չափազանց մեծ է և կիրառվում է լրատվամիջոցների նկատմամբ ճնշում գործադրելու նպատակով: ԶԼՄ-ների դեմ ներկայացված հայցերի թիվը նվազել է 2012 թվականին՝ Սահմանադրական դատարանի կողմից խոսքի ազատության ավելի լայն մեկնաբանության ընդունումից հետո: Դատարանը արձանագրել է, որ պետական կամ այլ պաշտոն զբաղեցնող անձինք պետք է ավելի հանդուրժող լինեն իրենց անձի նկատմամբ հնչած քննադատության նկատմամբ և պակաս պաշտպանված են վիրավորանքից, զրպարտությունից և քննադատությունից: Արդյունքում, պաշտոնատար անձինք ավելի են դժվարանում հիմնավորել լրագրողների դեմ ներկայացրած դատական հայցերը: 2013 թվականին վիրավորանքի և զրպարտության հիմքերով լրագրողների և ԶԼՄ-ների դեմ ներկայացված հայցերի թիվը կրկին աճել է (26 դատական հայց):

Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ ներկայացված առաջարկների իրագործում

Ըստ ՀՔԱ Վանաձորի գրասենյակի գնահատման ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանին ներկայացված առաջարկություններից՝

- Կատարվել է – 1 առաջարկություն
- Կատարվել է մասնակի – 2 առաջարկություն

≈ Չի կատարվել – 1 առաջարկություն

ՀՔԱ Վանաձորի գրասենյակը Մարդու իրավունքների պաշտպանին խնդրել է տեղեկատվություն տրամադրել առաջարկությունների վերաբերյալ ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի կողմից իրականացված գործողությունների մասին: Պատասխանների ամփոփումը ներկայացված է ստորև:

- *Հայերեն թարգմանել մարդու իրավունքների պաշտպանների վերաբերյալ հռչակագիրը և ապահովել տարածումը:* - Կատարվել է մասնակի

Հռչակագրի հայերեն թարգմանությունը ՀՀ կառավարության կողմից ներկայացվել է Մարդու իրավունքների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակ[47]: Ըստ ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի՝ հռճակագիը տեղադրված է Պաշտպանի պաշտոնական կայքում:

- *ՀՀ Ազգային ժողովի մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովին ներկայացնել մարդու իրավունքների պաշտպանների վերաբերյալ հռչակագրի տեղայնացման ներդաշնակեցման վերաբերյալ օրենքի նախագիծ:* - Չի կատարվել

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի (այսուհետ՝ Պաշտպան) կողմից այդ իրավակարգավորումները բարելավելու ուղղությամբ իրականացվել են մի շարք աշխատանքներ ինչպես համապատասխան իրավական ակտերի նախագծերին համապատասխան դիտողություններ և առաջարկություններ ներկայացնելու, այնպես էլ խնդրահարույց հարցերը տարբեր հարթություններում բարձրացնելու միջոցով:

Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչներն ունեցել են հանդիպումներ Աժ մի շարք պատգամավորների հետ, որոնց

[47] Իրավապաշտպանների վերաբերյալ ՄԱԿ-ի հռչակագրի թարգմանությունը տարբեր լեզուներով՝
http://www.ohchr.org/EN/Issues/SRHRDefenders/Pages/Translation.aspx

ընթացքում քննարկվել են տարբեր օրենսդրական նախաձեռնություններ և Աժ օրակարգում ներառված օրենքի նախագծեր: Պաշտպանի աշխատակազմի կողմից կազմակերպվել են մի շարք կլոր-սեղան քննարկումներ, որոնց հրավիրվել են Աժ պատգամավորներ, Աժ աշխատակազմի ներկայացուցիչներ, Արդարադատության նախարարության, Գլխավոր դատախազության, ՀՀ ստիկանության, Փաստաբանների պալատի, Դատական դեպարտամենտի և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ, ինչպես նաև ոլորտի այլ մասնագետներ: Կլոր-սեղան քննարկումներից մեկի ընթացքում բարձրացվել է իրավապաշտպան գործունեությամբ զբաղվող անձանց օրինական գործունեությանը խոչընդոտելը, որպես քրեորեն հետապնդելի արարք նախատեսման անհրաժեշտությունը՝ հաշվի առնելով առանձին անհատների կողմից իրավապաշտպան գործունեությամբ զբաղվող անձանց նկատմամբ բռնության ու ծեծի ենթարկելու դեպքերը: Պաշտպանի կողմից նաև բարձրացվել է արհեստակցական միությունների, աշխատողների կողմից գործադուլներ կազմակերպելու և իրականացնելու իրավունքի սահմանափակման խնդիրը՝ իրենց սոցիալ-տնտեսական շահերի պաշտպանության համար, որը կապված է պետական մարմինների գործողությունների հետ:

Պաշտպանի կողմից ՀՀ արդարադատության նախարարություն է ներկայացվել նաև օրենսդրական առաջարկ լրագրողական գործունեության անհրաժեշտ երաշխիքների ամրագրման ուղղությամբ, մասնավորապես՝ նրանց կողմից իրենց տեղեկատվության աղբյուրները պաշտպանելու վերաբերյալ: Պաշտպանը նաև դիմումներ է ներկայացրել ՀՀ Սահմանադրական դատարան, որոնց հիմնական նպատակն է եղել ՀՀ Սահմանադրությանը չհամապատասխանող նորմերի կիրառման բացառումը, օրինակ՝ փաստաբաններն այլևս ստիպված չեն լինի ստանալ քննիչի թույլտվությունը իրենց միջնորդությամբ իրականացվող քննչական և այլ դատավարական գործողություններին մասնակցելու համար, ինչպես նաև կվերացվի դատավարական գործողություններին փաստաբանների

մասնակցության ոչ իրավաչափ ժամանակային սահմանափակումը և այլն:

- *Քաղաքացիական հասարակության հետ համագործակցության առումով հենվել իրավապաշտպանների վրա:* - Կատարվել է մասնակի

Պաշտպանը դեռևս 2011թ. «Քաղաքացիական հասարակություն» խորագրով մի շարք ֆորումներ է կազմակերպել, որի արդյունքում հասարակական կազմակերպությունները ներկայացրել են իրենց գործունեության ուղղությունները, տարբեր ոլորտներում իրականացվող ծրագրերը և մարդու իրավունքների պաշտպանության առկա հիմնախնդիրները: Պաշտպանը համագործակցության հուշագրեր է կնքել ավելի քան 60 հասարակական կազմակերպությունների հետ՝ տեղեկատվության փոխանակման և արդյունավետ համագործակցության հիմքեր ստեղծելու նպատակով: Հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ համատեղ՝ ըստ ահազանգերի, այցելություններ են կատարվել ոստիկանության ստորաբաժանումներ, քրեակատարողական հիմնարկներ, ձերբակալված և կալանավորված անձանց պահման, հավաքների և ապօրինի շինարարության իրականացման և այլ վարեր: Հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ պարբերաբար քննարկվել են վերոնշյալ ուղղություններով Պաշտպանի գործունեության կատարելագործման հնարավոր տարբերակները՝ հաշվի առնելով նրանց առաջարկություններն ու նկատառումները:

Պաշտպանը, հանդիսանալով Կանխարգելման անկախ ազգային մեխանիզմ, քաղաքացիական հասարակությանը ներգրավվելու նպատակով, ստեղծել է Փորձագիտական խորհուրդ, որի կազմում ներգրավված են հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, անկախ փորձագետներ: Փորձագիտական խորհրդի անդամների հետ պարբերաբար իրականացվում են քննարկումներ մարդու իրավունքների ոլորտում, մասնավորապես փակ և կիսափակ

հաստատություններում, հնարավոր բարեփոխումների առաջարկների վերաբերյալ՝ հաշվի առնելով միջազգային փորձը և միջազգային կազմակերպությունների կողմից ՀՀ-ին տրված հանձնարարականները: Ազգային կանխարգելման մեխանիզմը, մի շարք հասարակական կազմակերպությունների հետ համատեղ, 2013թ. ընթացքում իրականացրել են 212 այցելություններ քրեակատարողական հիմնարկներ, ոստիկանության բաժիններ, ձերբակալված անձանց պահման վայրեր, զորամասեր, հոգեբուժարաններ, մանկատներ, հատուկ դպրոցներ, տուն-ինտերնատներ, գիշերօթիկ հաստատություններ: Այցելություններ ի արդյունքում բացահայտվել և/կամ վերհանվել են մի շարք մտահոգիչ խնդիրներ: Բացահայտված խախտումների մասին պատշաճ ձևով տեղյակ են պահվել համապատասխան իրավասու մարմինները, և դրանց կապակցությամբ ներկայացվել են առաջարկություններ:

Պաշտպանի աշխատակազմի կողմից մշակվում է «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ, որի նպատակն է ՀՀ-ում օրենսդրությամբ ամրագրել փաստացի գործող «Օմբուդսմեն-պլ|ուս» Կանխարգելման անկախ ազգային մեխանիզմի մոդելը՝ դրանով իսկ լիարժեքորեն ապահովելով քաղաքացիական հասարակության ներգրավվածությունը Պաշտպանի՝ որպես Կանխարգելման անկախ ազգային մեխանիզմի, գործունեության աշխատանքներում: Նախագծի նախնական տարբերակը ուղարկվել է հասարակական կազմակերպություններին՝ կարծիքի:

- *Բարձրացնել քաղաքացիական հասարակության, մասնավորապես իրավապաշտպանների և ՀԿ-ների հետ համագործակցությունը՝ պարբերաբար խորհրդակցելով քաղաքացիական հասարակության հետ՝ իրավապաշտպանների գործունեության վրա պոտենցիալ ազդեցություն ունեցող օրինագծերի մասին իշխանությանը ներկայացվող առաջարկությունների վերաբերյալ: - <u>Կատարվել է</u>*

Կարևորելով քաղաքացիական հասարակության և իրավապաշտպան կազմակերպությունների հետ համագործակցությունը՝ Պաշտպանը աշխատակազմում ստեղծել էր նաև խոցելի խմբերի պաշտպանության և հասարակական կազմակերպությունների հետ համագործակցության վարչություն: Հետագայում, Պաշտպանը նշանակել է ոլորտային պատասխանատու խորհրդականներ, որոնք իրականացրել են գործառույթներ քաղաքացիական հասարակության, իրավապաշտպանների և իրավապաշտպան կազմակերպությունների հետ համագործակցության ուղղությամբ:

Իրավապաշտպան կազմակերպությունների հետ քննարկումներ, հանդիպումներ, կլոր սեղաններ և մամլո ասուլիսներ են իրականացվել ընտանեկան բռնության, խտրականության դեմ, բժշկական սպասարկման, հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և սոցիալական ներառման վերաբերյալ օրինագծերի մշակման և քննարկման ուղղությամբ, ինչպես նաև իրավակիրառ պրակտիկայում համակարգային խնդիրների բարձրաձայնման և լուծման ուղղությամբ: Պաշտպանը հայտարարություններ է արել կանանց իրավապաշտպանների դեմ կատարված քայլերի /հայտարարություն, հետապնդում, հրապարակային վիրավորանք/ վերաբերյալ՝ դատապարտելով նման արարքները և կոչ անելով իրավապահ մարմիններին պատշաճ կերպով քննել նման դեպքերը: Միաժամանակ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության և երկրում մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների խախտման մասին տարեկան զեկույցը մշակելիս Պաշտպանը համագործակցում է համապատասխան հասարակական կազմակերպությունների և իրավապաշտպանների հետ՝ տարբեր ոլորտներում արձանագրված օրենսդրական և համակարգային խախտումների ու բացերի վերհանման նպատակով: Բացի այդ, Պաշտպանը ստանալով պետական մարմիններից տարբեր օրենսդրական նախագծերը՝ կարծիք ներկայացնելու նպատակով, խորհրդականների միջոցով մի շարք դեպքերում քննարկումներ է իրականացնում ոլորտային հասարակական

կազմակերպությունների և իրավապաշտպանների հետ՝ առաջացած խնդիրների վերհանման և լուծումներ ստանալու նպատակով:

Մարդու իրավունքների պաշտպանության ռազմավարության և ռազմավարության գործողությունների ծրագրի քննարկումների ժամանակ մշտապես հաշվի են առնվել հասարակական կազմակերպությունների առաջարկները, դիտողություններն ու նկատառումները: Իրավապաշտպան մի շարք հասարակական կազմակերպությունների հետ քննարկումների արդյունքում, քվեարկությամբ ընտրվել են առանձին հասարակական կազմակերպություններ, որոնք ներգրավվել են մարդու իրավունքների ազգային ռազմավարության իրականացման հանձնաժողովում՝ կատարման գործընթացի նկատմամբ վերահսկողություն իրականացնելու նպատակով:

Իրավապաշտպաններին ներկայացված առաջարկների իրագործում

Ըստ ՀՔԱ Վանաձորի գրասենյակի գնահատման իրավապաշտպաններին ներկայացված առաջարկություններից՝

- ≈ Կատարվել է – 1 առաջարկություն
- ≈ Կատարվել է մասնակի – 1 առաջարկություն

- *Բարելավել իրավապաշտպանների, մասնավորապես՝ մայրաքաղաքից դուրս գործող իրավապաշտպանների պաշտպանության ամրապնդմանն ուղղված ցանցերի համակարգումը: - Կատարվել է*

Ներկայումս գոյություն ունեն մի շարք պաշտոնական և ոչ պաշտոնական ցանցեր (օրինակ՝ Մարդու իրավունքների ցանց), որոնց միջոցով ապահովվում է ՀԿ-ների, այդ թվում՝ իրավապաշտպանների կարողությունների զարգացումը և նրանց միջև տեղեկատվության փոխանակումը: Այսպես, ՀԿ-ները համագործակցում են տարբեր համատեղ ծրագրերի

շրջանակներում: Ցավոք, իրավապաշտպանների դեմ ուղղված ոտնձգությունների դեպքերում նրանց գործունեությունը հիմնականում սահմանափակվում է այդ դեպքերի առթիվ հայտարարություններ կազմելով կամ նման հայտարարություններին միանալով:

Առկա համագործակցության հարթակներից ամենամեծը «Արևելյան գործընկերության Քաղաքացիական հասարակության ֆորումի» Հայաստանի ազգային պլատֆորմն է: Հայաստանի ազգային հարթակը հիմնադրվել է 2010 թվականի հունիսին՝ նպատակ ունենալով աջակցելու և խթանելու քաղաքացիական հասարակության ընդգրկումն Արևելյան գործընկերության գործընթացներում: Ժողովրդավարության, մարդու իրավունքների և արդյունավետ կառավարման հարցերով պլատֆորմի առաջին աշխատանքային խմբի մեկնարկային ժողովը գումարվել է 2012 թվականի հունվարին, որին հաջորդել են մարդու իրավունքներին նվիրված մի շարք ժողովներ՝ Արևելյան գործընկերության մեջ ընդգրկված երկրներից անդամ կազմակերպությունների և գործընկերների մասնակցությամբ: Այդուհանդերձ, ԵՄ-ի հետ Ասոցացման համաձայնագիր կնքելու շուրջ բանակցությունները դադարեցնելու մասին Սերժ Սարգսյանի որոշումից հետո պլատֆորմի անդամները հարցականի տակ են առել Հայաստանի ազգային պլատֆորմի դերը: Չնայած այն հիմնարար ենթադրությանը, թե պլատֆորմի մասնակիցները հետամուտ են Եվրոպական ինտեգրման նպատակների իրագործմանը, մի շարք անդամ կազմակերպություններ դժկամությամբ են ընդունում մարդու իրավունքների հետ կապված զգայուն հարցերի կարգավորման եվրոպական չափանիշները և խուսափում են ընդդիմանալ արտաքին հարաբերությունների շուրջ իշխանությունների պաշտոնական դիրքորոշմանը:

2003 թվականին մեկնարկած «Գործընկերություն հանուն բաց հասարակության» նախաձեռնությունը իրավապաշտպան կազմակերպությունների առավել ակտիվ ցանցերից է հանդիսանում: Նշված նախաձեռնությունը Հայաստանի քաղաքացիական հասարակության մի շարք շահագրգռված

գործիչների բաց կոալիցիա է: Այն ծառայում է որպես շահերի պաշտպանության հարթակ, ինչի շնորհիվ անդամ ՀԿ-ները ներկայացնում են իրենց այլընտրանքային զեկույցներն ու առաջարկությունները Հայաստանի ստանձնած միջազգային պարտավորությունների կատարման վերաբերյալ: Վերջերս «Գործընկերություն հանուն բաց հասարակության» նախաձեռնության անդամ ՀԿ-ները ներկայացրել են զեկույց՝ ՀՊԴ-ի շրջանակներում Հայաստանի ստանձնած պարտավորությունների վերաբերյալ, ներառելով՝ սույն զեկույցում տեղ գտած տեղեկությունները հավաքների ազատության մասին: Նախաձեռնությունը համախմբում է մարզերում գործող մի շարք իրավապաշտպան կազմակերպությունների, իսկ նրանց համատեղ գործունեությունը համակարգում է «Բաց հասարակության հիմնադրամներ» կազմակերպությունը:

2013 թվականը նշանավորեց նաև «Հյուման ռայթս հաուս Երևան» ՀԿ-ի հիմնումը, որը «Մարդու իրավունքների տուն» ցանցին (որի աշխատանքը համակարգում է «Մարդու իրավունքների պաշտպանության հիմնադրամը») անդամակցող հայկական իրավապաշտպան կազմակերպությունների ցանց է: «Հյուման ռայթս հաուս Երևան»-ը համախմբում է թվով 11 իրավապաշտպան կազմակերպությունների, այդ թվում՝ մարզերում գործող երկու կազմակերպությունների: Գրասենյակի բացումը ձգձգվում էր այն պատճառով, որ դրա անվանումը հայերեն թարգմանված տարբերակով արդեն կրում էր ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի տարածքում գործող տեղական ՀԿ-ներից մեկը: Նշված ՀԿ-ի հետ ապարդյուն բանակցություններ վարելուց հետո «Մարդու իրավունքների տուն Երևան» ցանցը գրանցվել է իր անգլերեն անվան տառադարձմամբ՝ «Հյուման ռայթս հաուս Երևան»: Ցանցին անդամակցող ՀԿ-ները նախկինում համագործակցել են ՀՀ-ում իրավապաշտպանների վիճակի վերաբերյալ 2011-2012թթ. զեկույցը կազմելու շրջանակներում և մոտ ապագայում՝ տարածք և այլ անհրաժեշտ տեխնիկական միջոցներ ձեռք բերելուց հետո,

իրագործելու են կարողությունների զարգացմանն ուղղված համատեղ ծրագրեր:

Նշված պաշտոնական նախաձեռնությունների հետ բացի՝ ակտիվիստները մշակել են մի շարք հաջողված նախաձեռնություններ նաև «Facebook» սոցիալական ցանցում, որոնք որոշակի հաջողության են հասել՝իրենց բողոքը փողոց դուրս բերելու և տևական բողոքի ակցիաներ իրականացնելու հարցում՝ չնայած ոստիկանության աշխատակիցների բազում խախտումներին, ապօրինի բերման ենթարկելու դեպքերին և այլ սպառնալիքներին: Կամայական ազատազրկման դեպքերի աճող թվի պայմաններում մի շարք իրավապաշտպան կազմակերպություններ համախմբվել են՝ ակտիվիստներին իրավաբանական օգնություն տրամադրելու նպատակով: Չնայած քաղաքացիական հասարակության մասնակցությունը և մարդու իրավունքների պաշտպանությունը խթանելու ջանքերին՝ նման նախաձեռնություններից շատ քչերն են տարածվել մարզերում:

Մարզերում գործող ՀԿ-ներից շատերը խուսափում են մարդու իրավունքների պաշտպանության հետ կապված զգայուն հարցերից, և արդյունքում՝ մայրաքաղաքի կամ մարզերի իրավապաշտպանները շարունակում են իրենց մասնագիտական ողջ գործունեությունը կենտրոնացնել միայն մայրաքաղաքում:

- *Ավելի ակտիվ համագործակցություն հաստատել Մարդու իրավունքների պաշտպանի հետ: - Կատարվել է մասնակի*

ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի խոսքով՝ նրա աշխատակազմը շարունակական համագործակցություն է հաստատել ՀԿ-ների հետ:

Փոխադարձ վստահության աճ է արձանագրվել նաև իրավապաշտպանների և ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի միջև, քանի որ վերջինս ավելի մեծ նախաձեռնությամբ է իրավապաշտպաններին ներգրավում առաջարկությունների շուրջ ծավալվող քննարկումներին և մարդու

իրավունքների խախտման մասին հաղորդում ստանալու դեպքում այցելում է ոստիկանության բաժիններ և կալանավայրեր:

Այնուամենայնիվ, ինչպես նշվեց, ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանը հակված է զգուշավորություն պահպանել զգայուն հարցերում և այնքան էլ պատրաստակամ չէ խթանելու օրինակ ԼԳԲՏԻ անձանց իրավունքների պաշտպանությունը: Այդ պատճառով ՀՀ Մարդու իրավունքների հետ համագործակցության հնարավորությունը միանշանակ չի ընդունվում:

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի առաջարկությունները Հայաստանի կառավարությանը

1. Իրականացնել ՄԱԿ-ի մարդու իրավունքների պաշտպանների հարցերով հատուկ զեկուցողի առաջարկությունները, որոնք հրապարակվել են 2010թ. Հայաստան կատարած նրա այցից հետո
2. Օրենսդրական և պրակտիկայի մակարդակում ընդունել և տեղայնացնել իրավապաշտպանների պաշտպանության ԵԱՀԿ ուղեցույցով նախատեսված միջոցառումները[48]
3. Ապահովել իրավապաշտպանների պաշտպանությունը, հատկապես նրանց, ովքեր պաշտպանում են խոցելի խմբերի, օրինակ ԼԳԲՏԻ անձանց իրավունքները
4. Վերանայել փաստաբանների գործունեության վերաբերյալ օրենքը՝ ապահովելով, որպեսզի փաստաբան չհանդիսացող անձինք հնարավորություն ունենան մարդու իրավունքների խախտումներից տուժողների շահերը ներկայացնել դատարանում
5. Ապահովել, որ իրավապաշտպանների նկատմամբ զրպարտության ու վարկաբեկման դեպքերը քննվեն արդյունավետ և թափանցիկ կերպով
6. Անցկացնել Հայաստանում իրավապաշտպանների վիճակի վերաբերյալ սույն և նախորդ զեկույցում ներկայացված դեպքերի անաչառ, թափանցիկ և արդյունավետ քննություն, ապահովել, որ այդ քննությունները կատարվեն անկախ մարմնի կողմից
7. ՀՀ մայրաքաղաքում և մարզերում կազմակերպել հանդիպումներ և երկխոսություններ մարդու իրավունքների ոլորտում աշխատող հասարակական կազմակերպությունների, հասարակության և պետական

[48] Իրավապաշտպանների պաշտպանության ուղեցույց, ԵԱՀԿ, http://www.osce.org/odihr/119633

մարմինների միջև՝ մարդու իրավունքների պաշտպանության մարտահրավերների և ազգային և միջազգային մեխանիզմների վերաբերյալ իրազեկվածության բարձրացման նպատակով:

8. Սահմանել իրավապաշտպանների և իրավապաշտպանական գործունեություն ծավալող կազմակերպությունների համար հանրային հեռուստատեսությամբ անվճար եթերաժամից օգտվելու հնարավորությունը
9. Ապահովել իրավապաշտպանների արդյունավետ մասնակցությունը Մարդու իրավունքների ռազմավարությունից բխող միջոցառումների իրականացման, գնահատման և վերանայման գործընթացներում:

Լրացուցիչ տեղեկություններ 2011-2012թթ. արձանագրված դեպքերի վերաբերյալ

2011-2012թթ. մարդու իրավապաշտպանների դեմ ուղղված հարձակումների և սպառնալիքների արձանագրված դեպքերի մեծ մասի առթիվ քրեական գործ չի հարուցվել:

«Դիայվայ» («D.I.Y») ակումբի պայթեցում [49]

2012 թվականի մայիսին «Դիայվայ» միասեռականների ակումբը պայթեցրած Համբիկ և Արամե Խամբազյաններն ընդհանուր իրավասության դատարանի վճռով դատապարտվել են մեկ տարի յոթ ամիս պայմանական ազատազրկման՝ 2 տարի փորձաշրջանով:[50] Վերաքննիչ դատարանի վճռով նրանք համաներմամբ ազատ են արձակվել:

Արման Վեզիրյան [51]

2013թ. փետրվարի 4-ին մեղադրող դատախազը միջնորդություն է ներկայացրել «Հելսինկյան ասոցիացիա» հասարակական կազմակերպության իրավապաշտպան Արման Վեզիրյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու, իսկ Տիգրան Մանուկյանին ծեծի համար մեղավոր ճանաչելու և տուգանքի ենթարկելու վերաբերյալ: 2013 թվականի փետրվարի 13-ին ընդհանուր իրավասության դատարանը բավարարել է նշված միջնորդությունը և Տիգրան Մանուկյանին տուգանել 30.000 դրամի ($73 ԱՄՆ դոլար) չափով Արման Վեզիրյանի նկատմամբ

---

[49] «Իրավապաշտպանների վիճակը Հայաստանում 2011-2012թթ.», էջ՝ 12, http://hcav.am/wp-content/uploads/2013/02/Report-Armenian1.pdf

[50] Դատավարության մասին լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս «ԼԳԲՏ անձանց իրավունքների իրավիճակը Հայաստանում 2013», էջ 5, «Փինք Արմենիա» ՀԿ, http://www.pinkarmenia.org/hy/2014/04/lgbtreport2013/

[51] «Իրավապաշտպանների վիճակը Հայաստանում 2011-2012թթ.», էջ՝ 15, http://hcav.am/wp-content/uploads/2013/02/Report-Armenian1.pdf

բռնություն գործադրելու համար: Վեզիրյանի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է:[52]

[52] «Ընտրություններ 2012. Արման Վեզիրյանն արդարացվեց», http://hetq.am/eng/news/23288/court-drops-beating-charges-against-helsinki-association-monitor-veziryan.html

2013 թ. դեպքեր

Դեպք 1. Խաղաղասիրության թեմայով դասընթաց ուսուցիչների համար

Ամսաթիվ՝ 2013 թ. փետրվարի 5

Նկարագրություն՝ 2013 թվականի փետրվարին ՀՔԱ Վանաձորի գրասենյակը Թուրքիայի ՀՔԱ գրասենյակի հետ համատեղ կազմակերպել է խաղաղասիրության դասընթաց դպրոցների ուսուցիչների համար: 2013թ. փետրվարի 5-ին ՀՔԱ Վանաձորի գրասենյակի աշխատակիցները պարզել են, որ Լոռու մարզային իշխանությունները ոչ պաշտոնական հրահանգ են տվել դպրոցների տնօրինությանը թույլտվություն չտալ ուսուցիչներին մասնակցելու դասընթացին:

Լրացուցիչ տեղեկություններ՝ ՀՔԱ Վանաձորի գրասենյակը հանդես է եկել հայտարարությամբ՝ դատապարտելով Լոռու մարզային իշխանությունների ենթադրյալ գործողությունները: Թեև մարզային իշխանությունները հերքել են հայտարարությունը, ուսուցիչները չեն կարողացել մասնակցել ծրագրին:

Վերաբերելի իրավունքներ. Հավաքների և միավորումների ազատություն, խտրականությունից զերծ մնալու իրավունք:

Դեպք 2. Նարինե Իսմայիլի և Արտակ Համբարձումյան

Ամսաթիվ՝ 2013թ. փետրվարի 18

Նկարագրություն՝ Նախագահական ընտրությունների օրն Արտաշատ քաղաքի թիվ 17/5 ընտրական տեղամասում լցոնումները խոչընդոտելու փորձի ժամանակ հասարակական կազմակերպության ներկայացուցիչ, միջազգային դիտորդ Նարինե Իսմայիլին և «Լրագրողներ հանուն իրավունքների» ՀԿ-ի լրագրող Արտակ Համբարձումյանը բռնության և սպառնալիքների են ենթարկվել ընտրատեղամասի պատասխանատուի և մի խումբ անծանոթ անձանց կողմից: Իսմայիլիի և Համբարձումյանի ներկայությամբ 25-30 տղամարդ մուտք են գործել ընտրատեղամաս և շրջապատել քվեատուփը: Իսմայիլիի հաղորդած տեղեկությունների համաձայն՝ ընտրատեղամասը հսկող ոստիկանության ծառայողն անտեսել է ընտրատեղամաս տասնհինգ հոգուց ավել մարդ չթողնելու (քվեարկության կանոններին համապատասխան) մասին իր պահանջը: Ընտրատեղամաս մուտք գործած խմբից մի քանի հոգի (ինչպես

պարզվել է, նրանցից մեկն Արտաշատի քաղաքապետի որդին էր) բռնել են Իսմայիլիի և Համբարձումյանի ձեռքերը՝ խոչընդոտելով նրանց տեղաշարժը, իսկ տեղամասի պատասխանատուն այդ ընթացքում հեռացրեց քվեատուփի կնիքը, որպեսզի խմբի տղամարդկանցից մեկը դատարկի քվեաթերթիկներով լի պարկը: Իսմայիլիի ահազանգով տեղամաս ժամանած ոստիկաններն ընտրախախտման վերաբերյալ հայտարարությունն արձանագրելու և քննելու փոխարեն Նարինե Իսմայիլիին հորդորեցին իրեն «լավ աղջկա» նման պահել և զերծ մնալ ԶԼՄ-ների ներկայացուցիչների հետ հաղորդակցվելուց:[53]

Լրացուցիչ տեղեկություններ՝ Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի (ԽԱՊԿ) հաղորդած տեղեկությունների համաձայն՝ այս դեպքի առնչությամբ ոստիկանությունում հավաքված նյութերը ներկայացվել են ՀՀ Հատուկ քննչական ծառայություն, որը փետրվարի 22-ին քրեական գործ է հարուցել ՀՀ Քրեական օրենսգրքի 149-րդ և 153-րդ հոդվածներով (համապատասխանաբար՝ ընտրական իրավունքի իրականացումը կամ զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցչի լիազորությունների իրականացմանը խոչընդոտելը և մեկից ավելի անգամ կամ այլ անձի փոխարեն քվեարկելը):

Միաժամանակ, հաղորդված տեղեկությունների համաձայն՝ ոստիկանությունից Իսմայիլիին հայտնել են, որ ոստիկանությունում գտնվում է նրա բնակարանում նկարահանված մի տեսանյութ, որտեղ նա իբր երևում է կիսամերկ վիճակում: Ըստ Իսմայիլիի և նրա փաստաբան Տիգրան Եգորյանի՝ տեսանյութը նկարահանվել է Իսմայիլիի բնակարանի դիմացի շենքից, սակայն տեսանյութից դատելով՝ այդ պնդումը չի հաստատվել: Ոստիկանության կողմից փաստերի հնարավոր նենգափոխումից խուսափելու համար Տիգրան Եգորյանը պնդել է Իսմայիլիի մասնակցությամբ քննչական գործողությունները ձայնագրելու պահանջը, սակայն քննչական մարմինը և գործի մյուս կողմերը խիստ առարկել են: ՀՀ Հատուկ քննչական ծառայությունը դիմել է Փաստաբանների պալատ՝փաստաբան Տիգրան Եգորյանի նկատմամբ միջոցներ ձեռնարկելու հայցով,

[53] Փաստաթուղթ – Հայաստանը. Իշխանությունները պետք է քննեն ընտրությունների հետ կապված մարդու իրավունքների խախտումները, Amnesty International, http://www.amnesty.org/en/library/asset/EUR54/001/2013/en/b0f4d9d4-d9ce-4fe2-9858-27f04443d92b/eur540012013en.html

քանի որ վերջինս խոչընդոտում էր քննչական մարմնի աշխատանքը՝ փորձելով ձայնագրել առերեսումը:[54]

Հուլիսի 26-ին այս գործով վարույթը կարճվել է, քանի որ հանցագործի ինքնությունը չի պարզվել: Գործով մեղադրվող երկու անձինք, որոնցից մեկն Արտաշատի քաղաքապետ Գագիկ Մուրադյանի որդին էր, արդարացվել են: Դատավճիռը չի բողոքարկվել:[55]

Վերաբերելի իրավունքներ՝ Ընտրական իրավունքներ, Արդար դատաքննության իրավունք, Անձնական կյանքը հարգելու իրավունք, Խոշտանգումից և անմարդկային կամ նվաստացնող վեաբերմունքից ու պատժից զերծ մնալու իրավունք

Դեպք 3. Մարինե Պետրոսյան և Նունե Արևշատյան

Ամսաթիվ՝ 2013թ. փետրվարի 18

Նկարագրություն՝ «Aravot.am» և «asparez.am» թերթերի լրագրողներ Մարինե Պետրոսյանը և Նունե Արևշատյանը սպառնալիքների են ենթարկվել Գյումրի քաղաքի թիվ 35/22 տեղամասում ընտրությունները լուսաբանելու ընթացքում: Նրանք նկատել են ընտրատեղամասի մոտ կայանված մի քանի մեքենա: Մեքենաներից մեկում («Նիվա» մակնիշի մեքենա, որն այնուհետև հեռացավ) ընտրակաշառք էին բաժանում: Երբ լրագրողները սկսեցին լուսանկարել, նրանց սպառնացել են, որ «կկտրեն նրանց վիզը», եթե համարձակվեն նկարահանել ընտրատարածքում ներկա գտնվող մարդկանց և ընտրախախտումները:

Լրացուցիչ տեղեկություններ՝ ՀՀ Գլխավոր դատախազության մամլո ծառայության տարածած հաղորդագրության համաձայն՝ ոստիկանության Ծիրակի մարզի քննչական բաժինը քննել է միջադեպի մասին հաղորդումը և դրան առնչվող նյութերը, սակայն քրեական գործ չի հարուցել հանցագործության դեպքի բացակայության հիմքով:[56]

Վերաբերելի իրավունքներ՝ Ընտրական իրավունքներ, Արդար դատաքննության իրավունք

---

[54] ՀՔԾ-ն դիմել է փաստաբանների պալատին՝ խնդրելով քննարկել Տիգրան Եգորյանին պատասխանատվության ենթարկելու հարցը, http://www.pastinfo.am/hy/node/9727

[55] Արտաշատի քաղաքապետի՝ ընտրակեղծիքի մեջ մեղադրվող որդին արդարացվեց, http://www.ilur.am/news/view/17877.html

[56] Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի 2013թ. տարեկան զեկույց, էջ 8, http://khosq.am/reports/2013-թ-տարեկան-զեկույց/

Դեպք 4. Մարինե Խառատյան և Գայանե Սարիբեկյան

Ամսաթիվ՝ 2013թ. փետրվարի 18

Նկարագրություն՝ «www.1in.am» լրատվական կայքի լրագրող Մարինե Խառատյանը և «Հրապարակ» օրաթերթի լրագրող Գայանե Սարիբեկյանը հարձակման են ենթարկվել Երևանում Խորենացի փողոցում գտնվող գործող նախագահ Սերժ Սարգսյանի նախընտրական շտաբի շենքի մոտ: ԽԱՊԿ-ի հաղորդած տեղեկությունների համաձայն՝ մի խումբ անձինք նախ խոչընդոտել են նրանց մուտքը նախընտրական շտաբ, իսկ այնուհետև խլել են նրանց տեսախցիկները և լուսանկարչական սարքավորումները և պահանջել են հեռանալ տարածքից:

Լրացուցիչ տեղեկություններ՝ ՀՀ Գլխավոր դատախազության մամլո ծառայության տարածած հաղորդագրության համաձայն՝ նշված դեպքին առնչվող նյութերը պատրաստվել են ոստիկանության Էրեբունի քննչական բաժնում, և դրանց կցվել է նաև «www.1in.am» լրատվական կայքում տեղադրված միջադեպի տեսագրությունը: ՀՀ Հատուկ քննչական ծառայությունը քրեական գործ է հարուցել ՀՀ քրեական օրենսգրքի 149-րդ հոդվածով (զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցչի լիազորությունների իրականացմանը խոչընդոտելը): ՀՀ Հատուկ քննչական ծառայության անցկացրած առերեսման արդյունքում պարզվել է, որ լրագրողների աշխատանքն առավելապես խոչընդոտել է ՀՀ Տրանսպորտի և կապի նախարար Գագիկ Բեգլարյանի կրտսեր եղբայր Հակոբ Բեգլարյանը: Մարտի 15-ին Հատուկ քննչական ծառայությունը կարճել է գործը հանցակազմի բացակայության հիմքով:[57]

Վերաբերելի իրավունքներ՝ Խոսքի և արտահայտման ազատություն, Արդար դատաքննության իրավունք

Դեպք 5. Մարինե Մարտիրոսյան և Հռիփսիմե Ջեբեջյան

Ամսաթիվ՝ 2013թ. փետրվարի 18

Նկարագրություն՝ Նորագյուղ թաղամասում նույն շենքում գտնվող թիվ 9/27 և թիվ 9/28 ընտրատեղամասերում խոչընդոտել

[57] Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի 2013թ. տարեկան զեկույց, էջ 7, http://khosq.am/reports/2013-թ-տարեկան-զեկույց/

են «www.168.am» և «www.aravot.am» լրատվական կայքերի լրագրողներ Մարինե Մարտիրոսյանի և Հռիփսիմե Ջեբեջյանի աշխատանքը: Երկու տեղամասային հանձնաժողովների նախագահներն արգելել են լրագրողներին լուսանկարել կամ նկարահանել ընտրատեղամասեր խմբով բերված կանանց: Հանձնաժողովի անդամներից մեկը պահանջել է, որ Մարինե Մարտիրոսյանը ջնջի իր տեսանյութը: Ըստ Հռիփսիմե Ջեբեջյանի՝ նրանց մոտեցել են մի խումբ ոստիկաններ և ոչ բարեխղճորեն գործելու մեղադրանքով պահանջել ցույց տալ իրենց տեսանյութը:

Լրացուցիչ տեղեկություններ՝ ՀՀ Գլխավոր դատախազության մամլո ծառայության տարածած հաղորդագրության համաձայն՝ քրեական գործի հարուցումը մերժվել է հանցագործության դեպքի բացակայության հիմքով:[58]

Վերաբերելի իրավունքներ՝ Խոսքի և արտահայտման ազատություն, Արդար դատաքննության իրավունք

Դեպք 6. Ծովինար Նազարյան

Ամսաթիվ՝ 2013թ. փետրվարի 18

Նկարագրություն՝ Արտաշատի թիվ 17/4 ընտրական տեղամասի հանձնաժողովի նախագահը սպառնացել է սպանել Նյու Յորքի լուսանկարչության ինստիտուտի թղթակից Ծովինար Նազարյանին և մեղադրել է նրան հիստերիկ պահվածք դրսևորելու համար, երբ վերջինս փորձում էր նկարահանել ընտրախախտման մի դեպք: Միջադեպի տեսանյութը տեղադրվել է «www.youtube.com» կայքում: Ինչպես հաղորդվում է, տարածքային ընտրական հանձնաժողովի (ՏԸՀ) նախագահը Ծովինար Նազարյանին և դիտորդ Տաթևիկ Բարսեղյանին զգուշացրել է, որ եթե նրանք բարկացնեն ընտրատարածքային հանձնաժողովին, նա որևէ պատասխանատվություն չի կրելու նրանց դեմ գործադրված բռնության համար:

Լրացուցիչ տեղեկություններ՝ Ծ. Նազարյանը բողոք է ներկայացրել ՏԸՀ իր դեմ ուղղված մահվան սպառնալիքի վերաբերյալ, սակայն նրա բողոքը մերժվել է: 2013թ. մարտի 20-ին Ծովինար Նազարյանը ընտրատեղամասային հանձնաժողովի նախագահի կողմից իրեն հասցված վիրավորանքի առնչությամբ բողոք է ներկայացրել Արարատի և Վայոց Ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարան: 2013թ. հունիսի 25-ին

[58] Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի 2013թ. տարեկան զեկույց, էջ 7, http://khosq.am/reports/2013-թ-տարեկան-զեկույց/

դատարանը մերժել է Ծովինար Նազարյանի բողոքը վիրավորանքի հրապարակային և կանխամտածված լինելու ապացույցի բացակայության հիմքով: 2013թ. հուլիսի 25-ին հայցվորը դիմել է վերաքննիչ դատարան, որը նույն թվականի օգոստոսի 14-ին վերադարձրել է բողոքը՝ բացթողումները շտկելու համար: Այդուհանդերձ, սահմանված երկշաբաթյա ժամկետում բողոքը կրկին չի ներկայացվել դատարան:[59]

Վերաբերելի իրավունքներ ՝Կյանքի իրավունք, Ընտրական իրավունքներ, Արդար դատաքննության իրավունք, Անձնական կյանքը հարգելու իրավունք

Դեպք 7. Ուսանողների դասադուլ

Ամսաթիվ ՝ 2013թ. փետրվարի 27

Նկարագրություն՝ Նախագահական ընտրություններից հետո սկիզբ առած բողոքներն ուղեկցվել են քաղաքացիական անհնազանդության մի շարք ապակենտրոնացված դրսևորումներով: Ակտիվիստները և մի քանի համալսարանների և ուսումնարանների ուսանողները դասադուլ են հայտարարել և երթ կազմակերպել Երևանում՝ խրախուսելով այլ ԲՈՒՀ-երի ուսանողներին միանալ իրենց: Նման երթերից մեկի ժամանակ Երևանի պետական համալսարանի (ԵՊՀ) մոտ ցուցարարների և ԵՊՀ ուսանողական խորհրդի ղեկավարների միջև վիճաբանություն է ծագել: Վիճաբանության ընթացքում ԵՊՀ ռեկտորի օգնականը վիրավորել է ցուցարարներին և կարգադրել առաջ բերել «զորքը»՝ նկատի ունենալով ախալքալաքցի (Վրաստանի Ախալքալաք քաղաք) ուսանողներին:

Լրացուցիչ տեղեկություններ՝ Ռեկտորի օգնականի խիստ հակազդեցությունը մեկնաբանել է կրթության և գիտության նախարարը, ում պնդմամբ՝ ակտիվիստները խափանում էին դասերը և ուսանողներին հարկադրում դասադուլ անել: Նա հայտնել է նաև, որ ակտիվիստները մեծամտությամբ էին վերաբերվում մարզերից եկած ուսանողներին օտար լեզու չիմանալու պատճառով:[60] Ակտիվիստները և ուսանողները պահանջեցին ռեկտորի օգնականի հրաժարականը, սակայն ապարդյուն:

---

[59] Տե՛ս նախորդ նշումը

[60]«Աշոտյանին վրդովեցրել է քաղաքացիական հասարակությունը», http://www.1in.am/arm/armenia_politics_164263.html

Ինչպես հայտնում են, ռեկտորի օգնականն աշխատանքից ազատվել է 2014թ. հունիսին՝ ախալքալաքցի ուսանողների հետ կապված մեկ այլ միջադեպի հետևանքով:[61]

Վերաբերելի իրավունքներ՝ խոսքի և արտահայտման ազատություն, Հավաքների և միավորումների ազատություն, Խտրականությունից զերծ մնալու իրավունք

Դեպք 8. Երդմնակալության օր

Ամսաթիվ՝ 2013թ. ապրիլի 9

Նկարագրություն՝ 2013թ. ապրիլի 9-ին Սերժ Սարգսյանի երդմնակալության պաշտոնական արարողության ընթացքում ցուցարարները կազմակերպեցին Ռաֆֆի Կ. Հովհաննիսյանի այլընտրանքային երդմնակալությունը:[62] Արարողությունից հետո մի խումբ քաղաքացիական ակտիվիստներ Ազատության հրապարակից երթով շարժվեցին դեպքի Բաղրամյանի պողոտա, որտեղ երթևեկությունը արգելափակված էր: Ոստիկանությունը դաժանորեն ցրեց երթը՝ ծեծի ենթարկելով ցուցարարներին, այդ թվում՝ «ժառանգություն» կուսակցությունից Աժ նախկին պատգամավոր Արմեն Մարտիրոսյանին (Երևանի քաղաքապետի նախկին թեկնածու): Բաղրամյանի պողոտայից բերման են ենթարկել մի քանի ակտիվիստներ, այդ թվում՝ բնապահպան ակտիվիստ Եղիա Ներսիսյանը, Մարիամ Սուխուդյանը,[63] Ռուզաննա Գրիգորյանը, քաղաքացիական ակտիվիստներ Վարդգես Պետրոսյանը, Կարեն Հարությունյանը և մի քանի այլ ակտիվիստներ:[64]

Լրացուցիչ տեղեկություններ՝ Բերման ենթարկված ակտիվիստները մի քանի ժամից ազատ են արձակվել: Արմեն Մարտիրոսյանի դեմ ուղղված ոստիկանության գործողությունները քննելու համար Հատուկ քննչական ծառայության հարուցած

---

[61] «Սկանդալ ԵՊՀ-ում. ախալքալաքցիները «տղայականով» պատժել են ռեկտորի օգնականին», http://hraparak.am/news/view/57266.html

[62]«Արդյո՞ք հայտնի ակտիվիստ Եղիա Ներսիսյանը ձերբակալված է», http://www.arminfo.am/index.cfm?objectid=F11E7860-A114-11E2-9893F6327207157C

[63]«Մարիամ Սուխուդյանը նույնպես բերման է ենթարկվել», http://www.ecolur.org/hy/news/electionspoliticsecology/activist-mariam-sukhudyan-detained/4763/

[64] «Ոստիկանները բերման են ենթարկել Մարիամ Սուխուդյանին և Եղիա Ներսիսյանին», http://iravaban.net/30247.html

գործի վարույթն առանց պատշաճ հիմնավորման կասեցվել է 2013 թվականի սեպտեմբերին:[65]

Վերաբերելի իրավունքներ՝ Հավաքների և միավորումների ազատություն, Ազատության և անձեռնմխելիության իրավունք, խոշտանգումից և անմարդկային կամ նվաստացնող վեաբերմունքից ու պատժից զերծ մնալու իրավունք, Արդար դատաքննության իրավունք

Դեպք 9. Վարդգես Գասպարի, Ոստիկանապետ 1

Ամսաթիվ՝ 2013 թ. ապրիլի 20

Նկարագրություն՝ Ապրիլի 20-ի առավոտյան Վարդգես Գասպարին «ոստիկան ստախոս, ոստիկան սրիկա» պաստառով միայնակ բողոքի ակցիա է անցկացրել ՀՀ ոստիկանապետի տան դիմաց: Երկու ոստիկան նրան բռնությամբ տարել են ոստիկանություն, ոտես Գասպարիին սպառնացել է ՀՀ ոստիկանապետ Վլադիմիր Գասպարյանը, ով ասել է, թե «կգլխատի նրան» և «ոսկորները փոշի կանի»:[66]

Լրացուցիչ տեղեկություններ՝ Գասպարին որոշ ժամանակ պահվել է ոստիկանությունում ապա նույն մեքենայով տարվել Իսահակյան փողոց:

Վերաբերելի իրավունքներ՝ Խոսքի և արտահայտման ազատություն, Ազատության և անձեռնմխելիության իրավունք, խոշտանգումից և անմարդկային կամ նվաստացնող վեաբերմունքից ու պատժից զերծ մնալու իրավունք

Դեպք 10. Հակոբ Կարապետյան

Ամսաթիվ՝ 2013թ. ապրիլի 23

Նկարագրություն՝ Երևանի ավագանու ընտրություններին ընդառաջ Նոր Նորքի վարչական շրջանում ապրիլի 23-ին Հանրապետական կուսակցության ծավալած քարոզարշավը լուսաբանելու ընթացքում բռնության է ենթարկվել «www.ilur.am» լրատվական կայքի թղթակից Հակոբ Կարապետյանը: Հենց որ Կարապետյանը սկսեց նկարահանել քարոզարշավի ընթացքում

---

[65] Արմեն Մարտիրոսյանին ծեծի ենթարկելու գործը կարճվել է, http://168.am/2013/09/17/276459.html

[66] Վարդգես Գասպարի. Ոստիկանապետն սպառնաց, թե «քեզ կգլխատեմ», http://news.am/arm/news/149901.html

անցկացվող հանդիպման նախապատրաստումը, մի խումբ մարդիկ պահանջեցին, որպեսզի նա դադարեցնի նկարահանումը՝ սպառնալով ֆիզիկական բռնություն գործադրել նրա նկատմամբ: Վիճաբանության ընթացքում Երևանի գործող ավագանու անդամ Աշոտ Պապայանը (ում անձը պարզվել է ավելի ուշ) մոտեցել է լրագրողին և բռունցքով հարվածել նրա դեմքին: Քաշքշուկի ընթացքում անհայտ մի անձ խլել է լրագրողի տեսախցիկը: Ոստիկանը և ներկաներից ոչ ոք չի միջամտել կամ միջադեպը կանխելու համար որևէ գործողություն չի ձեռնարկել: Կարճ ժամանակ անց, երբ Կարապետյանի տեսախցիկը վերադարձվել է, բոլոր տեսագրությունները ջնջված էին հիշողությունից: Կարապետյանը միայն հասցրել է վերադարձված տեսախցիկով նկարահանել իրեն հարվածած անձին, միջադեպին ներկա ոստիկանին և տեսախցիկը վերադարձնող անձին:

Լրացուցիչ տեղեկություններ՝ Նույն օրը «www.ilur.am» լրատվական կայքի գլխավոր խմբագիրը դիմել է Երևանի ոստիկանություն: Միջադեպին ներկա ոստիկանը կարգապահական տույժի է ենթարկվել, նրա անմիջական ղեկավարին հայտարարվել է խիստ նկատողություն, իսկ ոստիկանության Նոր Նորքի բաժնի պետի ծառայության գծով տեղակալը ազատվել է զբաղեցրած պաշտոնից:.[67]

Ապրիլի 27-ին դեպքի առթիվ հարուցվել է քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 164-րդ հոդվածի 1-ին մասով՝ լրագրողի մասնագիտական օրինական գործունեությանը խոչընդոտելը կամ նրան տեղեկություններ տարածելուն կամ տարածելուց հրաժարվելուն հարկադրելը: Մի շարք իրավապաշտպան և լրագրողական կազմակերպություններ դատապարտել են միջադեպը:

Հունիսի 20-ին Աշոտ Պապայանը հրապարակավ ներողություն է խնդրել իր գործողությունների համար: Հարուցված քրեական գործը կարճվել է լրագրողի համաձայնությամբ:

Վերաբերելի իրավունքներ՝ Խոսքի և արտահայտման ազատություն, Կյանքի իրավունք, Սեփականության իրավունք, Խտրականությունից զերծ մնալու իրավունք, Արդար դատաքննության իրավունք

[67] ԽԱՊԿ 2013թ. Տարեկան զեկույց, էջ՝ 9, http://khosq.am/en/reports/annual-report-2013/

Դեպք 11. Թամարա Յայլոյան

Ամսաթիվ՝ 2013թ. ապրիլի 23

Նկարագրություն՝ Ոստիկանության Գյումրու բաժնի բարձրաստիճան պաշտոնյաները սպառնացել են փաստաբան Թամարա Յայլոյանին, որ եթե ինքը շարունակի զբաղվել որոշ գործերով, իրեն կեղծ մեղադրանք կառաջադրվի, և ինքը մեծ խնդիրներ կունենա:[68]

Լրացուցիչ տեղեկություններ՝ 2013թ. մայիսի 1-ին տեղի ունեցած մամլո ասուլիսի ժամանակ Յայլոյանը ՁԼՄ-ների ներկայացուցիչներին հայտնել է, որ դեպքի մասին դատախազություն չի հաղորդել, բայց տեղեկացրել է Փաստաբանների պալատի նախագահին: Մի խումբ փաստաբաններ իրենց աջակցությունն են հայտնել Յայլոյանին և կոչ են արել պատասխանատվության ենթարկել նշված պաշտոնյաներին:[69]

Վերաբերելի իրավունքներ՝ Արդար դատաքննության իրավունք, Անձնական կյանքը հարգելու իրավունք

Դեպք 12. Կարեն Հարությունյան և Ռուզան Գրիգորյան

Ամսաթիվ՝ 2013թ. մայիսի 5

Նկարագրություն՝ Երևանի ավագանու ընտրությունների օրը Կարեն Հարությունյանը («www.asparez.am» լրատվական կայքի և «Գյումրի-Ասպարեզ» օրաթերթի թղթակից) և Ռուզան Գրիգորյանը («Թրանսփերենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ-ի դիտորդ) նկարահանել են Հանրապետական կուսակցության պատգամավոր Սամվել Ալեքսանյանին, ով եկել է տեղամաս՝ համոզվելու որ ամեն ինչ այնպես է ինչպես հարկն է: Անմիջապես պատգամավորի հեռանալուց հետո մի խումբ հանրապետականներ ներխուժել են թիվ 8/08 ընտրատեղամասային կենտրոն և պահանջել, որ դիտորդը և լրագրողը լքեն տեղամասը: Խմբի անդամները գողացել են նրանց

---

[68]Թամարա Յայլոյան. «Սպառնացել են, որ ինձ վնաս կտան, գլխիս կսարքեն», http://www.asparez.am/news-hy/tamara_yayloyanin_sparnacel_en-hy/

[69]«Ո՞վ է սպառնացել փաստաբանին», http://galatv.am/hy/news/v-e-sparnacel-pastabanin-er-anci-vanadorci-gyumreci-pastabannery-pahanjum-en-ostikannerin-patasxanatvutyan-entarkel/

տեսախցիկի լիցքավորիչը, հարձակվել դիտորդի վրա, սպառնացել և հայհոյել նրանց:[70]

Լրացուցիչ տեղեկություններ՝ ԽԱՊԿ հաղորդած տեղեկությունների համաձայն՝ այս գործը քննող ՀՀ Ոստիկանության Մալաթիայի բաժանմունքի աշխատակիցները չեն կարողացել գտնել գողին:[71]

Վերաբերելի իրավունքներ՝ Ընտրական իրավունքներ, Սեփականության իրավունք, Ազատության և անձեռնմխելիության իրավունք, Արդար դատաքննության իրավունք

Դեպք 13. Հռիփսիմե Ջեբեջյան, ավագանու ընտրություններ

Ամսաթիվ՝ 2013թ. մայիսի 5

Նկարագրություն՝ Երևանի ավագանու ընտրությունների օրը «Առավոտ» օրաթերթի լրագրող Հռիփսիմե Ջեբեջյանը թիվ 6/23 ընտրատեղամասի բակի մոտ նկատել է մի քանի կանանց՝ ընտրացուցակները ձեռքերին: Երբ լրագրողը սկսեց նկարահանել կանանց, նրանցից մեկը ծածկեց տեսախցիկը և պահանջեց, որ լրագրողը դադարեցնի նկարահանումը:

Լրացուցիչ տեղեկություններ՝ ՀՀ ոստիկանության Մաշտոցի բաժինը դեպքի առթիվ հարուցել է դատական գործ, և Հռիփսիմե Ջեբեջյանը լրացուցիչ բացատրություններ է տվել միջադեպի վերաբերյալ: Այդուհանդերձ, ոստիկանությունը ոչինչ չի բացահայտել, և կարճել է գործը:[72]

Վերաբերելի իրավունքներ՝ Ընտրական իրավունքներ, Խոսքի և արտահայտման ազատություն, Անձնական կյանքը հարգելու իրավունք

Դեպք 14. Լյուքս Ստեփանյան

Ամսաթիվ՝ 2013թ. մայիսի 18

Նկարագրություն՝ 2013թ. մայիսի 15-ին բանակում սպանված զինվորի ծնողները, բարեկամները և

---

[70] «Ահազանգեր. Երևանի ավագանու ընտրություններ», http://www.asparez.am/news-hy/yerevan-10-11am/

[71] ԽԱՊԿ 2013թ. Տարեկան զեկույց, էջ՝ 10, http://khosq.am/reports/2013-թ-տարեկան-զեկույց/

[72] ԽԱՊԿ 2013թ. Տարեկան զեկույց, էջ՝ 10, http://khosq.am/reports/2013-թ-տարեկան-զեկույց/

համագյուղացիները մայիսի 18-ին փորձել են նրա դին երթով տանել Պաշտպանության նախարարության մոտ՝ ի նշան բողոքի բանակում բազմաթիվ մահվան դեպքերի թերի քննության: ՀՀ ոստիկանության և ռազմական ոստիկանության ծառայողները փակել են Սևան-Երևան մայրուղին և բռնություն կիրառել, որպեսզի քաղաքացիների խումբը չկարողանա հասնել մայրաքաղաք:[73] Ըստ Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակի արձանագրության՝ արգելափակելով բողոքի ակցիայի մասնակիցների ճանապարհը և չթույլատրելով նրանց շարունակել հավաքը՝ ոստիկանությունը ֆիզիկական բռնության և հոգեբանական ահաբեկման է ենթարկել նրանց և սահմանափակել նրանց հավաքների ազատության իրավունքը: Զինված ուժերի ստորաբաժանումների օգտագործումը խաղաղ հավաքի մասնակիցների դեմ համարվում է սահմանադրական նորմերի խախտում:

Լրացուցիչ տեղեկություններ՝ ՀՔԱ Վանաձորի գրասենյակը հարցում է ուղարկել Պաշտպանության նախարարություն՝ դեպքի վայր զորք բերելու անհրաժեշտության հիմնավորման վերաբերյալ: Ըստ ռազմական ոստիկանության տրամադրած տեղեկությունների՝ Սևանի ռազմական ոստիկանության զորքերը դեպքի վայր են բերվել կանխելու մայրուղու տարածքի հնարավոր արգելափակումը, եթե կարիք լիներ մայրուղու վրա զորավարժություններ անցկացնել: ՀՔԱ Վանաձորի գրասենյակը հայց է ներկայացրել ընդդեմ Սևանի ռազմական ոստիկանության ծառայողների: ՀՀ վարչական դատարանն անընդունելի է համարել հայցը՝ պնդելով, որ խնդրո առարկա ոստիկանության գործողություններով չեն խախտվել ՀՔԱ Վանաձոր ՀԿ-ի կամ ՀԿ-ի անդամների սուբյեկտիվ իրավունքները, ուստիև կազմակերպությունը չի կարող հանդես գալ որպես դատավարության կողմ:

Վերաբերելի իրավունքներ՝ Հավաքների և միավորումների ազատություն, Արդար դատաքննության իրավունք, Ազատ տեղաշարժի իրավունք, Խոշտանգումից և անմարդկային կամ նվաստացնող վեաբերմունքից ու պատժից զերծ մնալու իրավունք,

[73] «Զինված ուժերի օգտագործումը բողոքի ակցիայի մասնակիցների նկատմամբ հանցագործություն է», http://hcav.am/events/զինված-ուժերի-օգտագործումը-բողոքի-ակ/

Դեպք 15. Վարդգես Գասպարի, Հարսնաքար

Ամսաթիվ՝ 2013թ. հուլիսի 4

Նկարագրություն՝ 2013թ. հուլիսի 4-ին ակտիվիստները պիկետ են անցկացրել «Հարսնաքար» ռեստորանի մոտ, որտեղ ռեստորանի սեփականատեր, ԱԺ նախկին պատգամավոր Ռուբեն Հայրապետյանի թիկնապահները 2012 թվականին ծեծելով սպանել են զինվորական բժշկի: Ակտիվիստները բողոքել են ռեստորանում կայանալիք երգիչների հարսանիքի դեմ: Պիկետի ընթացքում ակտիվիստ Վարդգես Գասպարին ձեռքին պահել էր «Նեմեց[74] մարդասպան, Նեմեց սրիկա… սպանդանոց, այստեղ սպանվել է Վահե Ավետյանը» գրառումով պաստառ: Ըստ պարոն Գասպարիի՝ նախ՝ քաղաքացիական հագուստով մի անձ հափշտակեց իր պաստառը, դրանից անմիջապես հետո էլ մի խումբ ոստիկաններ, բռնելով նրա ձեռքերն ու ոտքերը, հեռացրին նրան տարածքից: Գասպարին վերադարձավ և կանգնեց նույն տեղում, և ոստիկանությունը բերման ենթարկեց նրան:[75]

Լրացուցիչ տեղեկություններ՝ Գասպարիին ազատ են արձակել ժամը 24:00-ին: Ոստիկանությունը նրան ենթարկել է վարչական տուգանքի 30 000 դրամի չափով՝ հետիոտների և տրանսպորտային միջոցների երթևեկությունը խոչընդոտելու համար:[76] Գասպարին չի բողոքարկել ոստիկանության որոշումը, սակայն ևս մեկ պիկետ է անցկացրել ՀՀ ոստիկանապետի տան մոտ:[77]

Վերաբերելի իրավունքներ՝ Հավաքների և միավորումների ազատություն, Ազատության և անձեռնմխելիության իրավունք, Արդար դատաքննության իրավունք, Կյանքի իրավունք

Դեպք 16. Վարդգես Գասպարի, Ոստիկանապետ 2

Ամսաթիվ՝ 2013թ. հուլիսի 5

Նկարագրություն՝ Ի պատասխան հուլիսի 4-ին ոստիկանության ձեռնարկած գործողություններին՝ Վարդգես

---

[74] Նշում. Ռուբեն Հայրապետյանի կեղծանունը

[75] «Գասպարին ոստիկանապետին կպատասխանի «Հերիք է լպստեք օլիգարխների կոշիկները» ակցիայով», http://www.epress.am/2013/07/05/գասպարին-ոստիկանապետին-կպատասխանի-«.html

[76]Նշում. «Aravot.am» լրատվական կայքի հաղորդած տեղեկությունների համաձայն՝ ոստիկանությունը Գասպարիին տուգանել է նախ 35 000 դրամի չափով, այնուհետև՝ ևս 50 000 դրամի չափով: Այդուհանդերձ, հոդվածում նշված միջադեպի ամսաթիվը սխալ է, ուստիև տեղեկատվությունը չի կարող միանշանակ հավաստի լինել, http://www.aravot.am/2014/05/08/458528/

[77] Տե՛ս նշում 75:

Գասպարին ևս մեկ պիկետ է անցկացրել ՀՀ ոստիկանապետի տան մոտ: Գասպարին ձեռքում պահել էր «Հերիք է լպստեք օլիգարխների կոշիկները» գրառումով պաստառ: Պիկետից հետո անհայտ անձինք, հետևելով Գասպարիին, նրա վրա նետել են լոլիկ և ձու:[78]

Լրացուցիչ տեղեկություններ՝ Դեպքի առնչությամբ Գասպարին ոստիկանների է հրավիրել, ովքեր ժամանել և կատարվածի մասին զրուցել են նաև հարևանների հետ: Գասպարին նմանօրինակ հարձակման է ենթարկվել նաև 2 օր անց, սակայն հրաժարվել է ոստիկաններին դեպքի առնչությամբ բացատրություն տալ՝ ասելով, որ իրականում և՛ լոլիկ շպրտողները, և՛ բողոք ընդունողները նույն մարդիկ են:[79]

Վերաբերելի իրավունքներ՝ Խոսքի և արտահայտման ազատություն, Արդար դատաքննության իրավունք, Խտրականությունից զերծ մնալու իրավունք

Դեպք 17. Վարդգես Գասպարիի տուն

Ամսաթիվ՝ 2013թ. հուլիսի 11

Նկարագրություն՝ 2013թ. հուլիսի 11-ի առավոտյան ակտիվիստ Վարդգես Գասպարին իր բնակարանի դռան դիմաց մի կույտ թրիք է հայտնաբերել: Գասպարին հավատացած է, որ թրիքի հայտնվելն անմիջական կապ է ունեցել նախորդ օրը նախագահական նստավայրի մոտ իր անցկացրած պիկետի հետ:[80]

Լրացուցիչ տեղեկություններ՝ Գասպարին զանգահարել է նախագահական նստավայր և ոստիկանություն՝ պահանջելով, որպեսզի գան և մաքրեն թրիքը: Հեռախոսազանգից հետո թրիքը մաքրել էին:

Վերաբերելի իրավունքներ՝ Անձնական կյանքը հարգելու իրավունք, Արդար դատաքննության իրավունք, Խտրականությունից զերծ մնալու իրավունք

---

[78]«Ակտիվիստի վրա լոլիկ ու ձու են նետել. նա կպատասխանի Սերժ Սարգսյանի տան մոտ», http://www.epress.am/2013/07/08/ակտիվիստի-վրա-լոլիկ-ու-ձվեր-են-նետել-հա.html

[79] Տե՛ս նախորդ նշումը:

[80]«Գասպարիի տան դիմաց թրիք են դրել. նա ոստիկանապետից պահանջում է բաց գործել», www.epress.am/2013/07/11/գասպարիի-տան-դիմաց-թրիք-են-դրել-նա-ոստի.html

Դեպք 18. Միսակ Համբարձումյան

Ամսաթիվ՝ 2013թ. հուլիսի 20

Նկարագրություն՝ Անհայտ մի քաղաքացի կանգառում սկսել է վիճել ակտիվիստների հետ՝ պահանջելով, որ նրանք դադարեցնեն ավտոբուսների և երթուղային տաքսիների վրա տրանսպորտի ուղեվարձի բարձրացման դեմ թռուցիկներ փակցնելու գործընթացը: Քաղաքացին վիրավորել է ակտիվիստներին, այնուհետև կանգնեցրել ոստիկանության մեքենան՝ խնդրելով այդ տարածքում վերականգնել հասարակական կարգը և ձերբակալել ակտիվիստներին մասնավոր սեփականություն հանդիսացող գույքի վրա թռուցիկներ փակցնելու համար: Ավելի ուշ պարզվել է, որ այդ քաղաքացին Երևանի քաղաքապետարանի «Երևանտրանս» ՓԲԸ-ի տնօրեն Միսակ Համբարձումյանն էր:[81] Ակտիվիստները նաև հայտնել են, որ մեկ այլ կանգառում նրանց գործողությունները խոչընդոտել է մի երիտասարդ, ով, ինչպես պարզվել է, Համբարձումյանի որդին էր:[82] Նույն օրն ավելի ուշ ձերբակալվեն են ակտիվիստներ Դավիթ Հարությունյանը, Սոնյա Մսրյանը և Արսեն Օհանյանը ենթադրաբար մասնավոր սեփականություն հանդիսացող գույքի վրա թռուցիկ փակցնելու համար: Ակտիվիստները ստիպված էին բացատրություն տալ ոստիկանությունում, որ մասնավոր տների վրա թռուցիկ չեն փակցրել:[83] Անհայտ հիմքերով ձերբակալվել են նաև ակտիվիստներ Վահագն Մինասյանը և Տարոն Հարությունյանը:

Լրացուցիչ տեղեկություններ՝ Մի քանի ժամվա ընթացքում բոլոր ակտիվիստներն ազատ են արձակվել: 2013թ. հուլիսի 26-ին մի քանի ակտիվիստներ անժամկետ նստացույց են հայտարարել՝ պահանջելով աշխատանքից ազատել Միսակ Համբարձումյանին և Երևանի քաղաքապետարանի տրանսպորտի վարչության պետ Հենրիկ Նավասարդյանին: Նստացույցը շարունակվել է մինչև 2013թ. հոկտեմբերի 30-ը: Այդ ընթացքում ակտիվիստները մի քանի անգամ բերման և ոտնձգությունների են ենթարկվել, իսկ նրանց պահանջներն այդպես էլ չեն բավարարվել:

---

[81] «Ակտիվիստներին խոչընդոտողը քաղաքապետարանի պաշտոնյա՞ է», http://www.aravot.am/2013/07/20/268244/

[82] «Որդին հոր փոխարե՞ն է խանգարում թանկացման դեմ բողոքող ակտիվիստներին», http://www.aravot.am/2013/07/21/268458/

[83] «Տրանսպորտի թանկացման դեմ թռուցիկներ բաժանող ակտիվիստներին տարել են ոստիկանություն», http://www.ilur.am/news/view/16348.html#sthash.Q8weuMyw.dpuf

Վերաբերելի իրավունքներ՝ Հավաքների և միավորումների ազատություն, Ազատության և անձեռնմխելիության իրավունք, Արդար դատաքննության իրավունք

Դեպք 19. Հենրիկ Նավասարդյան

Ամսաթիվ՝ 2013թ. հուլիսի 21

Նկարագրություն՝ 2013թ. հուլիսի 21-ին տրանսպորտի ուղեվարձի բարձրացման դեմ ուղղված բողոքի ակցիայի անցկացման վայրի մոտակայքում գտնվելով՝ Երևանի քաղաքապետարանի տրանսպորտի վարչության պետ Հենրիկ Նավասարդյանը վիրավորել է «ilur.am» լրատվական կայքի թղթակցին, ով փորձել է հարց ուղղել նրան: Նույն օրը միջադեպն արձանագրող տեսանյութը տեղադրվել է «YouTube» կայքում: Հաջորդ օրը Երևանի քաղաքապետարանի հասարակայնության հետ կապի և լրատվության բաժնի պետը հայտարարել է, որ այդ տեսանյութը մոնտաժված էր՝ Նավասարդյանին վարկաբեկելու նպատակով:[84]

Լրացուցիչ տեղեկություններ՝ Նշված վիրավորանքը դարձավ 2013թ. հուլիսի 26-ին Երևանի քաղաքապետարանի մոտ մի քանի ակտիվիստների կազմակերպած նստացույցի դրդապատճառներից մեկը: Նրանք պահանջում էին Հենրիկ Նավասարդյանի և Երևանի քաղաքապետարանի «Երևանտրանս» ՓԲԸ-ի տնօրեն Միսակ Համբարձումյանի հրաժարականը: Ինչպես նշվել է, նստացույցը շարունակվել է մինչև 2013թ. հոկտեմբերի 30-ը:

Վերաբերելի իրավունքներ՝ Խոսքի և արտահայտման ազատություն, Արդար դատաքննության իրավունք

Դեպք 20. Լայնածավալ ակցիա քաղաքապետարանի դիմաց

Ամսաթիվ՝ 2013թ. հուլիսի 23

Նկարագրություն՝ 2013թ, հուլիսի 23-ին ակտիվիստները տրանսպորտի ուղեվարձի թանկացման դեմ ուղղված ևս մեկ լայնածավալ բողոքի ակցիա են անցկացրել Երևանի քաղաքապետարանի շենքի մոտ: Ակցիայի մեկնարկից ի վեր

[84] տեսանյութը մոնտաժված է. Հենրիկ Նավասարդյան, http://hayeli.am/article/334705/

ձերբակալվել է մի քանի ակտիվիստ: Ըստ ակտիվիստ Վահե Մելքոնյանի հաղորդած տեղեկությունների՝ իրեն հարցաքննել են որպես նախորդ օրն ակցիայի ժամանակ արձանագրված միջադեպի վկա: Վահե Մելքոնյանի խոսքով՝ ինքն ասել է, որ չի կարող վկայություն տալ, քանի որ այդ ակցիային ներկա չի եղել: Ակտիվիստներ Արեգ և Սարգիս Գևորգյանները ձերբակալվել են ոստիկանության հրամաններին չենթարկվելու համար: Ոստիկանները թույլ չէին տալիս ակտիվիստներին մոտենալ քաղաքապետարանին, իսկ Երևանի փոխոստիկանապետը զգուշացրել է, որ ոստիկանները շարունակելու են բերման ենթարկել ակտիվիստներին, եթե վերջիններս «խախտեն կարգը»: Մինչ ժամը 16:15 ազատ են արձակվել նաև մնացած 4 ակտիվիստները:[85]

Լրացուցիչ տեղեկություններ՝ Աժ պատգամավոր Նիկոլ Փաշինյանի խոսքերով՝ ակտիվիստներին մեղադրանք է առաջադրվելու ՀՀ քրեական օրենսգրքի 185-րդ (գույքը դիտավորությամբ ոչնչացնելը կամ վնասելը) և 316-րդ (իշխանության ներկայացուցչի նկատմամբ բռնություն գործադրելը) հոդվածներով:[86] Ոստիկանությունը նաև հայց է ներկայացրել ակտիվիստների դեմ ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 182-րդ հոդվածով: Դատաքննությունը շարունակվում է:

Վերաբերելի իրավունքներ՝ Հավաքների և միավորումների ազատություն, Ազատության և անձեռնմխելիության իրավունք, Արդար դատաքննության իրավունք

Դեպք 21. Վրաններ

Ամսաթիվ՝ 2013թ. օգոստոսի 1

Նկարագրություն՝ 2013թ. օգոստոսի 1-ին ոստիկանները բռնությամբ երեք վրաններ են առգրավել ակտիվիստներից, ովքեր փորձել են դրանք տեղադրել Երևանի քաղաքապետարանի մոտ նստացույցի մասնակիցների համար: Վրաններից երկուսը վերադարձվել է ակտիվիստ Անի Կաղինյանին: Իսկ մյուս վրանը, որը պատկանում էր Արգիշտի Կիվիրյանին, այդպես էլ չի վերադարձվել: Ա. Կիվիրյանի խոսքերով՝ թեև Հայաստանում չկա վրանի տեղադրումն արգելող որևէ օրենսդրական ակտ,

[85]«Ազատ արձակված ակտիվիստները պատմել են՝ ինչու են իրենց բերման ենթարկել», http://www.epress.am/2013/07/23/234607.html
[86] Տե՛ս նախորդ նշումը

ոստիկանները միշտ ամեն կերպ փորձում են խոչընդոտել բողոքի մասնակիցների՝ վրան տեղադրելու բոլոր փորձերը՝ խլելով կամ վնասելով այն:[87]

Լրացուցիչ տեղեկություններ՝ Հատուկ քննչական ծառայության կայքում հաղորդած տեղեկությունների համաձայն՝ գլխավոր դատախազը քրեական գործ է հարուցել վրանն առգրավելիս ՊՊԾ գնդի ոստիկանների կողմից դիտավորությամբ իրենց լիազորությունները չարաշահելու և Արգիշտի Կիվիրյանի նկատմամբ բռնություն գործադրելու փաստի առթիվ (ՀՀ քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով): Դատաքննությունը շարունակվում է:[88]

Վերաբերելի իրավունքներ՝ Հավաքների և միավորումների ազատություն, Արդար դատաքննության իրավունք, Սեփականության իրավունք

Դեպք 22. Ընդդեմ վճարովի կայանատեղերի

Ամսաթիվ՝ 2013թ. օգոստոսի 8

Նկարագրություն՝ 2013թ օգոստոսին մեկնարկել են Երևանում վճարովի ավտոկանգառների մասին որոշման դեմ ակտիվիստների կազմակերպած բողոքի ակցիաները: Ակտիվիստների համոզմամբ վճարովի ավտոկանգառներն անօրինական են և չեն բխում հանրային շահից, քանի որ շահույթի 70 տոկոսը ստանալու է մասնավոր ընկերությունը, որն արդեն ունի մեքենայատեր քաղաքացիների տվյալների բազան և ազատ կարող է տեսանկարահանել կայանված մեքենաները և տուգանել ՀՀ քաղաքացիներին, ինչը ՀՀ Սահմանադրության խախտում է: Ի նշան որոշման դեմ բողոքի՝ ակտիվիստները պնդել են, որ եթե ինչ-որ մասնավոր ընկերություն կարողանում է հանրային տարածքները մասնավորեցնել և դրանից եկամուտ ստանալ, ապա կարելի է մասնավորեցնել նաև քաղաքապետարանի դիմացի կայանատեղին:[89] Ակտիվիստները կարմիր գծեր են ներկել քաղաքապետարանի դիմացի

---

[87]«Արգիշտի Կիվիրյան. «Ոստիկանությունը տառապում է վրանացավով», http://www.aravot.am/2014/06/16/471337/

[88]«Ոստիկանները դեռ չեն վերադարձրել Արգիշտի Կիվիրյանի վրանը», http://www.aravot.am/2013/08/19/277714/

[89]«Ակտիվիստները կարմիր գծեր են ներկել քաղաքապետարանի ավտոկայանատեղում», http://www.ilur.am/news/view/17059.html#sthash.GjX7vYYv.dpuf

ավտոկայանատեղիի տարածքում: Վահե Գևորգյանի խոսքերով՝ ակցիան իրականացրել են 4 ակտիվիստներ՝ Վահե Գևորգյանը, Սևակ Մամյանը, Դավիթ Գևորգյանը և Սոնա Մսրյանը: Գծերը ներկելուց քիչ անց ոստիկանները բերման են ենթարկել Սևակ Մամյանին և Վահե Գևորգյանին:[90] Երևանի փոխոստիկանապետի հայտարարության համաձայն՝ ակտիվիստները բերման են ենթարկվել հանրային գույք վնասելու համար: Իսկ ակտիվիստներ Վահագն Մինասյանը և Գոռ Առաքելյանը, ովքեր մասնակցել են քաղաքապետարանի մոտ անցկացվող նստացույցին, հրավիրվել են ոստիկանություն՝ պարզելու՝ արդյոք նրանք կապ ունեն վերոհիշյալ ակցիայի հետ, թե՞ ոչ:[91]

Լրացուցիչ տեղեկություններ՝ Ակտիվիստ Վահե Գևորգյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 182-րդ հոդվածի հատկանիշներով: Նա հակընդդեմ հայց է ներկայացրել իր ազատ արտահայտվելու իրավունքի, հավաքների ազատության, ազատ տեղաշարժվելու իրավունքի, անձի ազատության և անձեռնմխելիության իրավունքի խախտումը և ոստիկանության պաշտոնատար անձանց գործողությունները ոչ իրավաչափ ճանաչելու մասին:[92]

2014թ. մայիսին ՀՀ Վարչական դատարանը բավարարեց ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության հայցը՝ ընդդեմ Վահե Գևորգյանի և տուգանեց նրան 50.000 ՀՀ դրամի չափով:[93] Ընդդեմ Սևակ Մամյանի ոստիկանության ներկայացված հայցը բավարարվել է, նրա նկատմամբ նշանակվել է 50.000 ՀՀ դրամի չափով տուգանք: Սևակ Մամյանի հակընդդեմ հայցը մերժվել է: Որոշումը բողոքարկվում է վերաքննիչ դատարանում:[94]

Վերաբերելի իրավունքներ՝ Ազատության և անձեռնմխելիության իրավունք, Խոսքի և արտահայտման ազատություն, Արդար դատաքննության իրավունք

---

[90]«Դատական նիստերի ընթացքում ոստիկանները հայտնվում են զավեշտալի վիճակում», http://www.aravot.am/2014/05/07/458082/

[91]«Բերման ենթարկված երկու ակտիվիստները վարչական տույժի կենթարկվեն և 3 ժամից ազատ կարձակվեն», http://www.ilur.am/news/view/17051.html#sthash.1dC8OYj8.dpuf

[92] Տե՛ս նախորդ նշումը

[93]«Դատարանում ՀՀ ոստիկանությունը հաղթեց քաղաքացիական ակտիվիստին. քաղաքական որոշո՞ւմ», http://www.aravot.am/2014/05/22/463038/

[94] Սևակ Մամյանի հայցի քննություն http://datalex.am/dl_case_view_page.php?caseType=5&courtID=137&caseID=38562071809774257

Դեպք 23. Կարեն Հարությունյանի ավտոմեքենան

Ամսաթիվ՝ 2013թ. օգոստոսի 18

Նկարագրություն՝ 2013թ. օգոստոսի 18-ի երեկոյան ակտիվիստ Կարեն Հարությունյանը հայտնաբերել է, որ իր ավտոմեքենայի դիմապակին կոտրել են: Նա մեքենայի մոտ նկատել է իրար կապած 2 մարզագնդեր (հանտելներ), որոնք էլ, ըստ Հարությունյանի, գործածվել են դիմապակին կոտրելու համար:[95] Հարությունյանն այս միջադեպը կապում է բողոքի ակցիաների և Երևանի քաղաքապետարանի մոտ անցկացվող նստացույցի հետ:[96]

Լրացուցիչ տեղեկություններ՝ Կարեն Հարությունյանը միջադեպի մասին հաղորդում է ներկայացրել ոստիկանությանը: Նա վնասված մեքենան կայանել է Երևանի քաղաքապետարանի դիմաց՝ համոզված լինելով, որ անվտանգության տեսախցիկներով վերահսկվող այդ տարածքն ավելի ապահով է: Հարձակում գործողները դեռևս չեն հայտնաբերվել:

Վերաբերելի իրավունքներ՝ Սեփականության իրավունք, Արդար դատաքննության իրավունք

Դեպք 24. Շողիկ Մելքոնյան

Ամսաթիվ՝ 2013թ. օգոստոսի 21

Նկարագրություն՝ Օգոստոսի 21-ին Երևանի Կոմիտասի 5 հասցեի հարակից շենքերի բնակիչները և ակտիվիստները շարունակել են իրենց բողոքն արտահայտել շենքի բակում ապօրինի շինարարության կապակցությամբ: Այդ օրվա իրադարձություններն արտացոլող համացանցում տեղադրված լուսանկարներից մեկում երևում է, թե ինչպես է ոստիկանության ծառայող Հակոբ Խաչատրյանն ամուր գրկել կին ակտիվիստ Շողիկ Մելքոնյանին և ենթադրաբար համբուրում նրա պարանոցը: Մեկ այլ դրվագում երևում է, թե ինչպես են մի քանի ոստիկաններ հարձակվում ակտիվիստի վրա և նրան տանում ոստիկանության մեքենա, և ինչպես է Արաբկիրի ոստիկանության բաժնի պետի տեղակալ Արայիկ Պետրոսյանը սեռական բնույթի հայհոյանք շշնջում նրա ականջին, որը նա բարձրաձայն կրկնեց, որպեսզի

---

[95] «Զգուշացե՛ք քաղաքապետարանի «գանտելներից». կոտրել են ակտիվիստի մեքենայի դիմապակին», http://www.panorama.am/am/law/2013/08/19/mayor-k-harutyunyan/

[96] «Վնասել են ակտիվիստի մեքենան», http://news.am/arm/news/167441.html

բոլորն իմանան, որ նրան սպառնացել են սեռական ոտնձգությունների ենթարկել ոստիկանության բաժնում:[97]

Նույն օրը մի ոստիկան դաժանաբար գետնին է տապալել մի տարեց կնոջ:[98]

Լրացուցիչ տեղեկություններ՝ Ավելի ուշ մամլո ասուլիսի ընթացքում ակտիվիստը հայտնել է, որ այդ օրն ինքը ոչինչ չի զգացել, և միայն տեսել է լուսանկարները: Այդուհանդերձ, նշված ոստիկանը հետևում էր նրան ամբողջ օրը՝ ձևանալով հոգատար: Ոստիկանն առաջարկել է կին ակտիվիստին հեռացնել փողոցից՝ նկատելով, որ նա իրեն լավ չէր զգում: Մելքոնյանը պնդել է, որ ոստիկանը հեռու մնա իրենից, իսկ հետո ընկերներից մեկի օգնությամբ հեռացել է տարածքից: Ակտիվիստը հայտնել է նաև, որ ոստիկաններն ուժ են գործադրել ակտիվիստների նկատմամբ և անընդունելի վարք դրսևորել: Մելքոնյանը հայտնել է նաև, որ ինքը դիտավորյալ է բարձրաձայն կրկնել Արայիկ Պետրոսյանի խոսքերը, որպեսզի ապահովի իր անվտանգությունը: Մելքոնյանը և մեկ այլ ակտիվիստ Տաթևիկ Մայիլյանը հայտնել են, որ օգոստոսի 17-ին Արայիկ Պետրոսյանը և ոստիկանության այլ ծառայողներ մոտենում էին կանանց և նրանց ականջին սեռական բնույթի հայհոյանք ասում:

Ոստիկանության գործած բռնությունների դեմ բողոքի ցույցի ժամանակ Երևանի փոխոստիկանապետ Վալերի Օսիպյանն արդարացրել է Խաչատրյանի արարքը՝ լրագրողներին ասելով հետևյալը. «Ես նորմալ երևույթ եմ դա համարում, դե գիտեք ինչ, չկա էդպիսի բան, եթե աղջիկը մնում ա էնքան աղջիկ, մինչև որ նա կդիտարկվի որպես իրավախախտ աղջիկ, բոլորը հավասար են ինքը, արդեն երբ որ օրենք է խախտում, դառնում է իրավախախտ: Հասկանու՞մ եք, և ոստիկանության գործողությունները այս դեպքում օրինաչափ էին և համաչափ էին, իսկ եթե դուք ունեք այլ մեթոդ առանց դիպչելու, կպնելու ասեք, ես ինքս նաև շատ մոտ եմ եղել կանգնած կանանց, աղջիկներին, մեկի ձեռքը բռնած, մեկի կողքը բռնած հնարավոր ա… »:[99]

---

[97]«Կարմիր բերետավորն օգտվել է աղջկա թուլությունից», http://www.aravot.am/2013/08/27/280119/

[98]«Տարեց կնոջը հրած ոստիկանը կենթարկվի կարգապահական տույժի», http://armenpress.am/arm/news/730672/

[99]«ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ԱՅ ՔԵԶ ԽԱՅՏԱՌԱԿՈՒԹՅՈՒՆ», http://hcav.am/events/hh-ոստիկանություն-այ-քեզ-խայտառակու/

Միջադեպի ներքին հետաքննությունից հետո Հակոբ Խաչատրյանն ազատվել է աշխատանքից,[100] սակայն դեկտեմբերին վերականգնվել է իր պաշտոնում:[101] Արաբկիրի ոստիկանության բաժնի պետի տեղակալ Արայիկ Պետրոսյանն ազատվել է աշխատանքից:

Տարեց կնոջը հրած ոստիկանը ենթարկվել է կարգապահական տույժի:

Վերաբերելի իրավունքներ՝ Հավաքների և միավորումների ազատություն, Անձնական կյանքը հարգելու իրավունք, Արդար դատաքննության իրավունք, Խտրականությունից զերծ մնալու իրավունք

Դեպք 25. Կանանց ռեսուրսային կենտրոն

Ամսաթիվ՝ 2013թ. օգոստոսի 20

Նկարագրություն՝ 2013թ. օգոստոսի 24-ին Կանանց Ռեսուրսային Կենտրոնի տնօրեն Լարա Ահարոնյանը լրատվամիջոցներին հայտնել է, որ վեջին մի քանի օրվա ընթացքում կազմակերպությունը մի շարք սպառնալիքներ է ստացել, այդ թվում՝ գրասենյակը պայթեցնելու վերաբերյալ: Նման սպառնալիքների քանակը կտրուկ աճել է «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների մասին» օրենքում գործածվող «գենդեր» եզրույթի դեմ ծավալված բողոքի ակցիաների ընթացքում:[102]

Լրացուցիչ տեղեկություններ՝ Լ. Ահարոնյանը դիմել է ոստիկանություն՝ կազմակերպության աշխատակազմի և գրասենյակի անվտանգությունն ապահովելու խնդրանքով:

Վերաբերելի իրավունքներ՝ Կյանքի իրավունք, Խտրականությունից զերծ մնալու իրավունք, Հավաքների և միավորումների ազատություն

---

[100] «Ակտիվիստին համբուրած ոստիկանը փորձում է արդարանալ», http://news.am/arm/news/168708.html

[101] «Այլ բան չէր էլ կարելի սպասել այդ կեղտոտ համակարգից», http://news.am/arm/news/185028.html

[102] Գենդերային հավասարության մասին օրենքի պատճառով ՀԿ-ներին սպառնում են «տրաքացնել», http://www.epress.am/2013/08/24/հկ-ներին-սպառնում-են-«տրաքացնել»-գենդ.html

Դեպք 26. Տիգրան Խզմալյան և Անուշավան Գրիգորյան

Ամսաթիվ՝ 2013թ. օգոստոսի 21

Նկարագրություն՝ 2013թ. օգոստոսի 21-ին Կոմիտասի 5ա, 3 և 7 շենքերի բնակիչները շրջապատել են շինհրապարակի մուտքը՝ այդպիսով փորձելով դիմագրավել շինարարության վերսկսմանը, որը, ըստ բնակիչների, անօրինական է: Ոստիկանությունը բերման է ենթարկել կինոռեժիսոր Տիգրան Խզմալյանին շինհրապարակ մուտք գործելու համար: Ակտիվիստ Անուշավան Գրիգորյանը, ով մեկ ժամ էր տվել ոստիկաններին տեխնիկան հեռացնելու համար, կտրել է երակները:[103]

Լրացուցիչ տեղեկություններ՝ Անուշավան Գրիգորյանը ստացել է առաջին օգնություն և նույն օրը դուրս է գրվել հիվանդանոցից: Տիգրան Խզմալյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 182-րդ հոդվածով: Խզմալյանի գործով դատաքննությունը շարունակվում է:

Վերաբերելի իրավունքներ՝ Հավաքների և միավորումների ազատություն, Ազատության և անձեռնմխելիության իրավունք, Արդար դատաքննության իրավունք, Կյանքի իրավունք

Դեպք 27. Անուշավան Գրիգորյան

Ամսաթիվ՝ 2013թ. օգոստոսի 22

Նկարագրություն՝ Ակտիվիստ Անուշավան Գրիգորյանը, ով օգոստոսի 21-ին ի նշան բողոքի կտրել էր երակները, դաժան ծեծի է ենթարկվել քաղաքացիական հագուստով մի խումբ անհայտ անձանց կողմից կին ակտիվիստի պաշտպանելու փորձից հետո:

Լրացուցիչ տեղեկություններ՝ Բողոքի ակցիայի մասնակիցների խոսքերով՝ քաղաքացիական հագուստով մարդիկ Երևանի փոխքաղաքապետ Դավիթ Օհանյանի անվտանգության աշխատակիցներն էին:[104] Միջադեպի քննության ընթացքի վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ չեն հաղորդվում:[105]

Վերաբերելի իրավունքներ՝ Կյանքի իրավունք, Արդար դատաքննության իրավունք

---

[103]«Լարված իրավիճակ Կոմիտաս 5-ում», http://www.ilur.am/news/view/17461.html#sthash.Mdqi7PdP.dpuf

[104]«Կոմիտաս 5-ի ակցիայի ժամանակ անհայտ անձինք ակտիվիստի են ծեծել», http://www.epress.am/2013/08/22/կոմիտաս-5-ի-ակցիայի-ժամանակ-անհայտ-անձի.html

[105]Նշում. Անուշավան Գրիգորյանը 2013թ. նոյեմբերի 5-ին ձերբակալված ակտիվիստներից է (Դեպք 46):

Դեպք 28. Ֆլեշմոբ՝ առաջին փորձ

Ամսաթիվ՝ 2013թ. օգոստոսի 23

Նկարագրություն՝ 2013թ. օգոստոսի 23-ին ոստիկանությունը բերման է ենթարկել մի քանի ակտիվիստների, ովքեր պատրաստվում էին ֆլեշմոբ անցկացնել Երևանի քաղաքապետարանի մոտ: Ըստ լրատվամիջոցների հաղորդած տեղեկությունների՝ ոստիկանները հարձակվեցին քաղաքացիների վրա՝ իրենց գործողությունները պատճառաբանելով նրանով, որ «քաղաքապետարանը ֆլեշմոբ անելու տեղ չի»: Ակտիվիստներին բերման ենթարկելը հիմնավորելու համար հողում է կատարվել հաճախակի մեջբերվող ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 182-րդ հոդվածին: Ոստիկանները ենթադրաբար եզրակացրել են, որ քաղաքապետարանի աստիճաններին նստելով քաղաքացիները խախտում են հասարակական կարգը և խոչընդոտում երթևեկությունը:

Միևնույն ժամանակ ակտիվիստները նկատել են, որ որոշ ակտիվիստների բերման ենթարկելուց հետո ոստիկանների շղթայից կազմված պատնեշի հետևում՝ աստիճանների վրա նստած կամ կանգնած են մնացել մի քանի մարդիկ: Այսպիսով, ոստիկանները կա՛մ աչք էին փակում շարունակվող իրավախախտման վրա կա՛մ էլ ակտիվիստներին բերման ենթարկելու մասին որոշումը կամայական և անօրինական էր:[106]

Լրացուցիչ տեղեկություններ՝ 2014թ. գարնանը և ամռանը դատարանները մերժել են ակտիվիստների դեմ ոստիկանության ներկայացրած հայցերը և ոչ իրավաչափ են ճանաչել 2013թ. օգոստոսի 23-ին ոստիկանների ձեռնարկած գործողությունները:[107,108]

Վերաբերելի իրավունքներ՝ Ազատության և անձեռնմխելիության իրավունք, Խոսքի և արտահայտման ազատություն, Խտրականությունից զերծ մնալու իրավունք

---

[106]«Շուրջ 10 քաղաքացի է բերման ենթարկվել», http://www.ilur.am/news/view/17550.html#sthash.QzLZzjBu.dpuf

[107]«Դատարանը մերժեց ոստիկանության հայցն ընդդեմ ակտիվիստի», http://www.aravot.am/2014/05/23/463618/

[108]Վահագն Մինասյանի, Սուրեն Սահակյանի դեմ հարուցած գործեր, http://datalex.am/dl_case_view_page.php?caseType=5&courtID=0&caseID=38562071809775998

Դեպք 29. Կոմիտաս 5. Արգիշտի Կիվիրյան

Ամսաթիվ՝ 2013թ. օգոստոսի 24

Նկարագրություն՝ Երևանում Կոմիտաս 5 հասցեում շինարարության դեմ ուղղված բողոքի ցույցի մասնակիցների և ոստիկանների հերթական բախման ժամանակ ոստիկանները բերման են ենթարկել և ոստիկանության մեքենայում դաժանաբար ծեծել «Armenia Today» լրատվական գործակալության համակարգող, ակտիվիստ Արգիշտի Կիվիրյանին: Կիվիրյանը ծանր վնասվածքներ է ստացել և պետք է ոստիկանության բաժնից տեղափոխվեր հիվանդանոց:[109]

Ոստիկանները փորձել է բերման ենթարկել նաև ակտիվիստ Եղիա Ներսիսյանին: Սակայն քաշքշուկի ընթացքում Ներսիսյանի առողջական վիճակը վատթարացավ, և նրան տեղափոխեցին մայթ՝ առաջին օգնություն ցուցաբերելու համար: Ռոպեներ անց ակտիվիստների վրա հարձակվեց հատուկ գումարտակի ոստիկանների մի մեծ խումբ և բերման ենթարկեց Ներսիսյանին: Մի քանի քաղաքացի և ակտիվիստ փակեցին ճանապարհը, նրանցից մի քանիսն անգամ պառկել էին ոստիկանության մեքենայի անիվների տակ, սակայն նրանց բռնությամբ հեռացրեցին, իսկ Ներսիսյանին տարան մեքենայով:[110] Բերման են ենթարկվել նաև ակտիվիստներ Վարդան Հակոբյանը, Արմեն Միքայելյանը, Մարիամ Սուխուդյանը և այլոք:[111]

Նույն օրը ոստիկանության ծառայող Վահան Վրթանեսյանը ոստիկանության Արաբկիրի բաժնում հայտարարել է, որ փողոցի երթևեկելի մասն ազատելու մասին ոստիկանության ծառայողի օրինական պահանջը չկատարելու համար Արգիշտի Կիվիրյանին Կոմիտաս 5 հասցեից ոստիկանության բաժին բերման ենթարկելու ժամանակ վերջինս հայհոյել է նրան,

---

[109] Արգիշտի Կիվիրյանին մեղադրանք է առաջադրվել, http://civilnet.am/2013/11/07/artgishti-kiviryan-accusation

[110] Բողոքողները փակել են Կոմիտասը. ոստիկանը հորդորում էր «քշել», http://www.epress.am/2013/08/24/բողոքողները-փակել-են-կոմիտասը-ոստիկա.html

[111] Ոստիկանություն են տարվել Մարիամ Սուխուդյանը, Վարդան Հակոբյանը և ուրիշներ, http://www.aysor.am/am/news/2013/08/24/mariam-sukhudyan-komitas5/

բռունցքով հարվածել նրա թևի նախաբազկին, այնուհետև կծել այն:[112]

Ոստիկանությունից հայտնել են, որ Եղիա Ներսիսյանը խաթարել է երթևեկությունը, չի կատարել ոստիկանության ծառայողների օրինական պահանջները և ենթարկվելու է վարչական պատասխանատվության: Ոստիկանությունից հայտնել են նաև, որ Ներսիսյանը դիմում է ներկայացրել այն մասին, որ նույն օրը ոստիկանության աշխատակիցն իրեն քարշ տալով պառկեցրել է գետնին, ինչի հետևանքով ինքը ստացել է մարմնական վնասվածք: [113]

Լրացուցիչ տեղեկություններ՝ Օգոստոսի 24-ին ոստիկանության Արաբկիրի բաժնում քրեական գործ է հարուցվել Արգիշտի Կիվիրյանի դեմ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով՝ «Իշխանության ներկայացուցչի կամ նրա մերձավորի նկատմամբ կյանքի կամ առողջության համար ոչ վտանգավոր բռնություն գործադրելը կամ դա գործադրելու սպառնալիքը՝ կապված նրա կողմից իր ծառայողական պարտականությունները կատարելու հետ, ինչպես նաև իշխանության ներկայացուցչին՝ օրենքով նրա վրա դրված պարտականությունները կատարելու ժամանակ խոչընդոտելը»: Արգիշտի Կիվիրյանն իր հերթին հակընդդեմ հայց է ներկայացրել ոստիկանների ապօրինությունների վերաբերյալ:

2013թ. օգոստոսի 27-ին մի քանի ակտիվիստներ բողոքի ակցիա են կազմակերպել ոստիկանների բռնությունների դեմ: Արգիշտի Կիվիրյանը, ով ծեծի է ենթարկվել ոստիկանության աշխատակիցների կողմից, հայտարարել է. «Ոստիկանությունը փորձ է անում մեկուսացնել ակտիվ քաղաքացիներին, փորձ է կատարում հասարակության մեջ սերմանել վախի մթնոլորտ….: Այս ամենը համակարգված գործողություններ են, այս ամբողջը գալիս է ռեժիմի ծրագրված գործողություններից բնաջնջել ակտիվիստներին….: Ո՞վ է այսօր կանգնած որպես ռեժիմի հիմնասյուն, դա մի կառույց է, որը ոստիկանություն չի, դա սեռական անբավարարությամբ տառապող մի ոհմակ է, որի գործողությունները երևացին Կոմիտաս 5-ում»:[114]

---

[112] Տեղեկատվություն՝ բռնություն գործադրելու վերաբերյալ ակտիվիստներից ստացված հաղորդումների վերաբերյալ
http://www.lragir.am/print/arm/0/right/print/87552
[113] Տե՛ս նախորդ նշումը
[114]«ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ԱՅ ՔԵԶ ԽԱՅՏԱՌԱԿՈՒԹՅՈՒՆ», http://hcav.am/events/hh-ոստիկանություն-այ-քեզ-խայտառակու/

2013թ. օգոստոսի 31-ին ոստիկանությունը բերման է ենթարկել «Նախախորհրդարանի» անդամ ակտիվիստ Դմիտրի Հարությունյանին: Նրան նախ ոստիկանություն են կանչել որպես վկա, իսկ ավելի ուշ մեղադրանք են առաջադրել ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով: 2013թ. սեպտեմբերի 3-ին արձակվել է Դմիտրի Հարությունյանին երկու ամսով կալանավորելու կարգադրություն: Թեև մեկ շաբաթ չանցած՝ նա ազատ է արձակվել, նրա կամայական կալանավորումը և ազատ արձակումը որևէ կերպ չի հիմնավորվել: [115]

ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանն անկախ հետաքննություն է անցկացրել և ներկայացրել տեղի ունեցածի մանրամասն վերլուծությունը: Նա եզրակացրել է, որ օգոստոսի 25-ին ոստիկանությունը գործել է ոչ իրավաչափ՝ դրսևորելով անհամբերություն և անհանդուրժողականություն: Բացի այդ, հավաքի առանձին միջադեպեր ուսումնասիրելուց հետո Մարդու իրավունքների պաշտպանը եզրակացրել է, որ ոստիկանությունը խախտել է մարդկանց իրավունքներն ու ազատությունները: Մարդու իրավունքների պաշտպանը եզրակացրել է նաև, որ ոստիկանության ծառայողները Արգիշտի Կիվիրյանի նկատմամբ կիրառել են ֆիզիկական ուժ նույնիսկ վերջինիս կողմից դիմադրության բացակայության պարագայում: Ըստ պաշտպանի դիտարկումների՝ ոստիկանության կողմից կիրառվել է ֆիզիկական ուժ և դրսևորվել անհարկի ագրեսիվ վերաբերմունք նաև այն ցուցարարների նկատմամբ, ովքեր արդեն չեզոքացվել էին և չէին խախտում օրենքը, հատկապես՝ նշված անձանց ոստիկանության ծառայողական մեքենա նստեցնելիս... և նման ուժ կիրառող ոստիկանները պետք է ենթարկվեն պատասխանատվության: Մարդու իրավունքների պաշտպանը դատապարտել է նաև քաղաքացիների հասցեին վիրավորական արտահայտությունների օգտագործումը՝ պնդելով, որ նույնիսկ այն դեպքերում, երբ քաղաքացիները վիրավորում են ոստիկանին, ոստիկանները պետք է ոչ թե հակադարձեն հայհոյանքներով և վիրավորանքներով, այլ անձին օրենքով սահմանված կարգով ենթարկեն պատասխանատվության: Մարդու իրավունքների պաշտպանն անդրադարձել է նաև կին ակտիվիստների դեմ ուղղված սեռական ոտնձգություններին և կոչ է արել իրավական հետևանքներով պատասխանատվության ենթարկել նման արարք գործած ոստիկանին: ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանը

[115] Նախախորհրդարանի անդամ. «Իշխանություններն ընտրել են նահանջի մարտավարությունը», http://www.aravot.am/2013/09/09/383470/

հիշեցրել է նաև, որ «հասարակական կարգի պահպանության ապահովմանը մասնակցելիս ոստիկանության զորքերի զինծառայողները պարտավոր են կրել սահմանված ձևի համազգեստ, որի վրա տեսանելի մասում փակցվում են ոստիկանության զորքերի զինծառայողին անձնապես նույնականացնելու հնարավորություն տվող տարբերանշաններ: Նման պահանջ սահմանված է նաև ԵԱՀԿ/ԺՄԻԳ-ի կողմից հրատարակած «Խաղաղ հավաքների ազատության ուղեցույց»-ում, որտեղ նշվում է, որ իրավապահ մարմինների ներկայացուցիչները պետք է լինեն հստակորեն և անհատապես ճանաչելի»:[116]

2013թ. նոյեմբերի 6-ին ՀՀ Հատուկ քննչական ծառայության քննիչը որոշում է կայացրել Կիվիրյանին բերման ենթարկելիս նրա նկատմամբ բռնություն գործադրելու առթիվ քրեական հետապնդում չիրականացնելու մասին: ՀՔԾ քննիչի որոշումը բողոքարկվել է ընդհանուր իրավասության և վերաքննիչ դատարաններում, սակայն մերժվել է:[117] 2013թ. նոյեմբերի 7-ին Կիվիրյանին առաջադրեցին ևս մեկ մեղադրանք՝ ՔՕ 333-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով՝ սուտ մատնություն, որը զուգորդվել է ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության մեջ մեղադրելով: 2014թ. հունվարի 13-ին այդ մեղադրանքը հանվել է,[118] իսկ առաջին մեղադրանքով դատաքննությունը շարունակվում է:

Վերաբերելի իրավունքներ ՝ Հավաքների և միավորումների ազատություն, Ազատության և անձեռնմխելիության իրավունք, Խոշտանգումից և անմարդկային կամ նվաստացնող վեաբերմունքից ու պատժից զերծ մնալու իրավունք, Սեփականության իրավունք, Արդար դատաքննության իրավունք

Դեպք 30. Ֆլեշմոբ՝ երկրորդ փորձ

Ամսաթիվ ՝ 2013թ. օգոստոսի 24

---

[116] Օմբուդսմեն. Կոմիտաս 5-ում ոստիկանությունը գործել է ոչ իրավաչափ, դրսևորել է անհամբերություն և անհանդուրժողականություն, http://ombuds.am/library/view_news/article/1085

[117] Արգիշտի Կիվիրյանը՝ իր վերաքննիչ բողոքի մերժման մասին. «Իմ դեմ իրականացվում է քաղաքական հետապնդում», http://www.aravot.am/2014/06/04/467636/

[118] Արգիշտի Կիվիրյանի գործով դատական նիստը հետաձգվեց, http://civilnet.am/argishti-kiviryan-trial-session-canceled/

Նկարագրություն՝ Օգոստոսի 24-ի երեկոյան ակտիվիստները փորձել են անցկացնել նախորդ օրը ոստիկանների կողմից խոչընդոտած ֆլեշմոբը: «Lragir.am» լրատվական կայքի տարածած տեսանյութի համաձայն՝ ոստիկանությունը բռնությամբ բերման է ենթարկել մի քանի ակտիվիստի: Այդ ընթացքում ոստիկանները վնասել են քաղաքապետարանի մոտ կայանված մեքենաներից մեկը, այնուհետև բերման են ենթարկել մեկ այլ ակտիվիստի՝ նրա վրա բարդելով մեքենան վնասելու մեղքը: Ոստիկաններն ակտիվիստներին բերման ենթարկելու անհրաժեշտությունը հիմնավորել են Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 182-րդ հոդվածով և հայտնել են, որ ակտիվիստները պետք է նախապես թույլտվություն ստանային ներկայացումը ցուցադրելու համար:[119] Այդպես էլ անհասկանալի մնաց, թե ինչու ցուցարարները պետք է թույլտվություն ստանային և հասարակական կարգի պահպանման ինչ կանոններ են նրանք խախտել:

Բերման ենթարկված ակտիվիստներից Արսեն Օհանյանը հայց է ներկայացրել ընդդեմ իրեն բերման ենթարկելու ժամանակ իր դեմ բռնություն գործադրած ոստիկանների:

Լրացուցիչ տեղեկություններ՝ 2013թ. օգոստոսի 30-ին Գլխավոր դատախազության կողմից տարածված հայտարարության համաձայն՝ Ա. Օհանյանը դատաբժշկական փորձաքննություն է անցել, և միջադեպի կապակցությամբ կատարվում էր նախաքննություն:[120] 2014 թ. հուլիսի 25-ին ՀՀ վարչական դատարանը ակտիվիստների նկատմամբ ոստիկանության գործողությունները ճանաչեց ոչ իրավաչափ և ոստիկանությանը պարտավորեցրեց ընդհանուր առմամբ 600 հազար դրամ փոխհատուցում վճարել ակտիվիստներին:[121]

Վերաբերելի իրավունքներ՝ Ազատության և անձեռնմխելիության իրավունք, Արդար դատաքննության իրավունք, Հավաքների և միավորումների ազատություն, Սեփականության իրավունք

---

[119]«Քաղաքապետարանի մոտ 2-րդ անգամ արգելվեց թատերական ներկայացումը», http://www.lragir.am/index/arm/0/videos/view/87283

[120]«Բռնություն վերաբերյալ 9 հաղորդում-ահազանգ է ստացվել», http://www.aysor.am/am/news/2013/08/30/genproc/

[121] ՀՀ ոստիկանությունը քաղաքացիական ակտիվիստներին կվճարի 600 հազար դրամ, http://www.aravot.am/2014/07/25/483055/

Դեպք 31. Միհրան Մարգարյան և Բաբկեն Տեր-Գրիգորյան

Ամսաթիվ՝ 2013թ. օգոստոսի 25

Նկարագրություն՝ Օգոստոսի 25-ին ժամը 01:30-ին մի խումբ անհայտ անձինք հարձակվել և ծեծի են ենթարկել ակտիվիստներ Միհրան Մարգարյանին և Բաբկեն Տեր-Գրիգորյանին: Հարձակվողներն ակտիվիստներին հարցրել են, թե արդյոք իրենք մասնակցել են նստացույցին, և ստանալով դրական պատասխան՝ բռնություն են գործադրել նրանց հանդեպ:[122]

Լրացուցիչ տեղեկություններ՝ Դեպքից մեկ ամիս անց ոստիկանությունը քրեական գործ է հարուցել Ս. Բաբայանի և Ս. Փուրտոյանի դեմ ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով (ծեծ): Միհրան Մարգարյանը ոստիկանությունում առերեսման ժամանակ չի ճանաչել իրենց ծեծելու մեջ կասկածվող անձանց՝ նշելով, որ առերեսմանը ներկա անձինք որևէ կերպ չեն մասնակցել հարձակմանը: Մարգարյանի խոսքերով՝ կասկածյալները չեն կարողացել նկարագրել մյուս ծեծվածին՝ Բաբկեն Տեր-Գրիգորյանին, ով չի մասնակցել առերեսմանը:[123] Բաբայանը և Փուրտոյանն ազատ են արձակվել չհեռանալու մասին ստորագրությամբ: Այս գործով որևէ այլ տեղեկություն չի հաղորդվել:[124]

Վերաբերելի իրավունքներ՝ Կյանքի իրավունք, խտրականությունից զերծ մնալու իրավունք, Արդար դատաքննության իրավունք

Դեպք 32. Մկրտիչ Տոնոյան

Ամսաթիվ՝ 2013թ. օգոստոսի 25

Նկարագրություն՝ 2013թ. օգոստոսի 25-ին Երևանի «Հաղթանակ» կամրջի վրա երեք անհայտ անձինք հարձակվել և ծեծի են ենթարկել քաղաքացիական ակտիվիստ Մկրտիչ Տոնոյանին, ով այդ պահին տուն էր վերադառնում Երևանի քաղաքապետարանի հարակից տարածքից, որտեղ

---

[122]«Արարատ հյուրանոցի մոտ 10 հոգով ծեծի են ենթարկել ակտիվիստներ Միհրան Մարգարյանին ու Բաբկեն Տեր-Գրիգորյանին», http://operativ.am/?p=34697/Արարատ-հյուրանոցի-մոտ-10-հոգով-ծեծի-են-ենթարկել-ակտիվիստներ-Միհրան-Մարգարյանին-ու-Բաբկեն-Տեր-Գրիգորյանին

[123]«Ակտիվիստը չի ճանաչել իրեն ծեծելու մեջ կասկածվողներին», http://www.azatutyun.am/content/article/25122249.html

[124]«Ծեծողները ազատության մեջ», http://www.armtimes.com/hy/read/47976

ակտիվիստները նստացույց էին կազմակերպել՝ պահանջելով քաղաքապետարանի երկու աշխատակիցների հրաժարականը:

Լրացուցիչ տեղեկություններ՝ Մկրտիչ Տոնոյանը մշտապես բնակվում է Կանադայում: Նա մեկնել է Հայաստանից սեպտեմբերին և ոստիկանությանը խնդրել հետաքննության ընթացքում իր լիազորված ներկայացուցիչ համարել Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակի նախագահ Արթուր Սաքունցին:[125] Ոստիկանությունը մերժել է Տոնոյանի խնդրանքը՝ պնդելով, որ նա չի ներկայացրել պատշաճ կարգով կազմված լիազորագիր: Ոստիկանությունը դեպքի առթիվ գործ է հարուցել ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով (ծեծ): 2013թ. հոկտեմբերին դատախազը հայտնել է Տոնոյանին իր հետ վեճի բռնված անձանց անունները՝Ա. Թումանյան, Վ. Ոսկանյան և Վ. Վարդանյան: Ըստ դատախազի՝ հետաքննությամբ պարզվել է, որ վեճը հրահրել է Ա. Թումանյանը, ով խոստովանել է, որ վիճել է Տոնոյանի հետ և մեկ հարված է հասցրել նրան: Թումանյանն ազատ է արձակվել չհեռանալու մասին ստորագրությամբ, իսկ հետաքննությունը շարունակվում է:

Վերաբերելի իրավունքներ՝ Կյանքի իրավունք, Արդար դատաքննության իրավունք, Խտրականությունից զերծ մնալու իրավունք

Դեպք 33. Քնելու համար բերման ենթարկում

Ամսաթիվ՝ 2013թ. օգոստոսի 27

Նկարագրություն՝ Օգոստոսի 27-ի գիշերը՝ ժամը 1-ի սահմաններում ոստիկանությունը բերման է ենթարկել 4 ակտիվիստի, ովքեր գիշերն անցկացնում էին Երևանի քաղաքապետարանի աստիճանների վրա: Ակտիվիստ Ռուզան Գրիգորյանի խոսքերով՝ Վահագն Մինասյանը, Սուրեն Սահակյանը և Գոհար Սարոյանը բերման են ենթարկվել քաղաքապետարանի աստիճաններին պառկելու համար, իսկ Կարեն Հարությունյանը՝ բերման ենթարկելու իրավական հիմնավորումները պահանջելու համար:[126]

Լրացուցիչ տեղեկություններ՝ Մի քանի ժամից ակտիվիստներին ազատ են արձակել: Ոստիկանությունը հայց է

---

[125]«Բաց նամակ. ծեծի ենթարկված ակտիվիստը Կանադայում է և պատրաստ է համագործակցել ոստիկանության հետ», http://news.am/arm/news/173642.html

[126]«Գիշերը 4 ակտիվիստի բերման են ենթարկել քաղաքապետարանի մոտից», http://www.epress.am/2013/08/27/գիշերը-4-ակտիվիստի-բերման-են-ենթարկել-ք.html

ներկայացրել նրանց դեմ ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 182-րդ հոդվածով: Հայցերի դատաքննությունը շարունակվում է:

Վերաբերելի իրավունքներ՝ Ազատության և անձեռնմխելիության իրավունք, Հավաքների և միավորումների ազատություն

Դեպք 34. Արթուր Սաքունց

Ամսաթիվ՝ 2013թ. օգոստոսի 28

Նկարագրություն՝ 2013թ. սեպտեմբերին «Youtube» կայքի «Armenian Grants» («Հայերին տրամադրվող դրամաշնորհներ») նոր ալիքով տեղադրվել է 2 տեսանյութ, որտեղ պատմվում է ՀՔԱ Վանաձորի գրասենյակի նախագահ Արթուր Սաքունցի և կազմակերպության կողմից ստացված դրամաշնորհների մասին: Երկու տեսանյութերն էլ պարունակում են այն ուղերձը, որ կազմակերպությունը մեծ գումարներ է ստանում՝ օտարերկրյա դոնորների շահերին ծառայելու համար:[127]

Լրացուցիչ տեղեկություններ՝ Տեսանյութերը լայնորեն տարածվել են համացանցում, սակայն թերևս որոշիչ ազդեցություն չեն գործել ինչպես կազմակերպության կողմնակիցների, այնպես էլ ընդդիմադիրների վրա:

Վերաբերելի իրավունքներ՝ Խտրականությունից զերծ մնալու իրավունք, Հավաքների և միավորումների ազատություն

Դեպք 35. Վարդգես Գասպարիի բջջային հեռախոսը

Ամսաթիվ՝ 2013թ. օգոստոսի 31

Նկարագրություն՝ Երևանի «Փակ շուկայի» մոտ տեղի ունեցած բողոքի ակցիաներից մեկի ժամանակ «Հայ ազգային կոնգրեսի» ակտիվիստ Վարդգես Գասպարին նկատեց, որ իր կողքին կանգնած անձը փորձում է գողանալ իր բջջային հեռախոսը: Գասպարին բարձրաձայն հայտարարել է այդ մասին, և ոստիկանները նրան առաջարկել են գնալ բաժին և հաղորդում ներկայացնել.[128]

---

[127]«Գրանտակերները (մաս 1 և մաս 2)», https://www.youtube.com/channel/UCHiE6pfki4oZclt7I5zdw5g/videos

[128]«Վարդգես Գասպարին հրավիրվել է ոստիկանություն՝ հաղորդում տալու», http://www.tert.am/am/news/2013/08/31/gaspari/

Լրացուցիչ տեղեկություններ՝ Ոստիկանության բաժնում Գասպարին պարզել է, որ իր բջջային հեռախոսը գողանալու փորձ անող անձը քաղաքացիական հագուստով ոստիկանության ծառայող էր:[129] Միջադեպը թողնվել է անհետևանք:

Վերաբերելի իրավունքներ՝ Արդար դատաքննության իրավունք, Սեփականության իրավունք, Հավաքների և միավորումների ազատություն

Դեպք 36. Բողոքի ակցիա Մաքսային միության դեմ

Ամսաթիվ՝ 2013թ. սեպտեմբերի 4

Նկարագրություն՝ Մաքսային միությանը միանալու պատրաստակամության մասին ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի հայտարարությունից հետո մի շարք ակտիվիստներ նախագահի նստավայրի առջև անցկացրել են ինքնաբուխ բողոքի ակցիա: Ցուցարարները փորձել են մոտենալ նախագահականին, իսկ ակտիվիստներից ոմանք՝ նստել Բաղրամյան փողոցում, սակայն ոստիկաններին հաջողվել է քաղաքացիներին ամբողջությամբ հեռացնել փողոցից և շարքով փակել մայթը: Երևանի փոխոստիկանապետը հայտնել է, որ ոստիկանության և ցուցարարների միջև ընդհարումների ընթացքում տարբեր քաղաքական կուսակցությունների և քաղաքացիական նախաձեռնությունների ակտիվիստներ բերման են ենթարկել հասարակական կարգը խախտելու համար: Երևանի փոխոստիկանապետը հղում է արել Հավաքների ազատության մասին օրենքին, ըստ որի՝ հավաքները պետք է անցկացվեն ռազմավարական նշանակության օբյեկտներից, ինչպիսին հանդիսանում է նախագահի նստավայրը, ողջամիտ հեռավորության վրա: [130]

Ակտիվիստների հետ ընդհարումների ընթացքում ոստիկանները գետնին են տապալել «ՍիվիլՆեթի» լրագրող Արփի Մախսուդյանին:[131]

Լրացուցիչ տեղեկություններ՝ Ակտիվիստներն ազատ են արձակվել իրենց գործունեության մասին գրավոր ցուցմունք

---

[129]Նշում. Գասպարին այդ մասին նշել է իր ֆեյսբուքյան էջում:

[130] Ընդհարում ոստիկանների և ցուցարարների միջև՝ Բաղրամյան 26-ում, http://www.irakan.info/full_news.php?id=4039#sthash.I1eVw4EF.dpuf

[131] Բողոքի ակցիա նախագահականի դիմաց. բերման է ենթարկվել 3 քաղաքացի, http://civilnet.am/2013/09/04/ բողոքի-ակցիա-նախագահականի-դիմաց-բերմ/

տալուց հետո:[132] Մի շարք ՀԿ-ների ներկայացուցիչներ և ակտիվիստներ մտահոգություն են հայտնել լրագրողների նկատմամբ աճող բռնության առնչությամբ:

Վերաբերելի իրավունքներ՝ Հավաքների և միավորումների ազատություն, խոշտանգումից և անմարդկային կամ նվաստացնող վեաբերմունքից ու պատժից զերծ մնալու իրավունք, Ազատ տեղաշարժի իրավունք

Դեպք 37. Արման Ալեքսանյան

Ամսաթիվ՝ 2013թ. սեպտեմբերի 4

Նկարագրություն՝ 2013թ. սեպտեմբերի 4-ին Երևանի քաղաքապետարանի մոտ անցկացվող բողոքի ակցիայից հետո 10-15 անհայտ անձինք ծեծի են ենթարկել ակտիվիստ Արման Ալեքսանյանին:

Լրացուցիչ տեղեկություններ՝ Ոստիկանությունից հայտնել են, որ 2013թ. դեկտեմբերին որոշվել է կարճել քրեական գործը, քանի որ տուժողն այդպես է չի ներկայացել հարցաքննության, և չնայած ձեռնարկված այլ միջոցառումների՝ ոստիկանության աշխատակիցներին չի հաջողվել պարզել հանցագործների ինքնությունը: Ալեքսանյանն իր հերթին լրատվամիջոցների ներկայացուցիչներին հայտնել է, որ դեպքի վայրում գործել են մի քանի անվտանգության տեսախցիկներ, ուստիև, ցանկության դեպքում ոստիկանությունը կարող էր հեշտությամբ բացահայտել հանցագործներին: Հաշվի առնելով այդ ամենը՝ Ալեքսանյանն անիմաստ է համարել ժամանակ վատնել ոստիկանություն գնալու համար: [133]

Վերաբերելի իրավունքներ՝ Կյանքի իրավունք, Արդար դատաքննության իրավունք, Հավաքների և միավորումների ազատություն

Դեպք 38. Տուժած տարեց կին

Ամսաթիվ՝ 2013թ. սեպտեմբերի 5

Նկարագրություն՝ 2013թ. սեպտեմբերի 5-ին Կոմիտաս 5 հասցեում վերսկսվել են շինարարությունը և բողոքի ակցիաները: Ծենքի տարեց բնակչուհի Էմմա Արիստակեսյանը պառկել է բակի

---

[132] Բողոքի ակցիա նախագահականի առջեւ Մաքսային միությանը միանալու դեմ, http://news.am/arm/news/169652.html

[133]«Ծեծողները ազատության մեջ», http://www.armtimes.com/hy/read/47976

դարպասների առջև՝ արգելափակելով մեքենաների մուտքը շինհրապարակ: Հաղորդած տեղեկությունների համաձայն՝ ոստիկանները, տարեց կնոջը դարպասներից հեռացնելով, գետնին են տապալել նրան, ինչի արդյունքում, Արիստակեսյանը կորցրել է գիտակցությունը:[134]

Լրացուցիչ տեղեկություններ՝ Տկն Արիստակեսյանը բժշկական օգնություն է ստացել, սակայն հրաժարվել է հիվանդանոց գնալուց:

Վերաբերելի իրավունքներ՝ Հավաքների և միավորումների ազատություն, Ազատության և անձեռնմխելիության իրավունք

Դեպք 39. Հայկակ Արշամյան և Սուրեն Սաղաթելյան

Ամսաթիվ՝ 2013թ. սեպտեմբերի 5

Նկարագրություն՝ 2013թ. սեպտեմբերի 5-ի երեկոյան 6-7 անհայտ անձինք հարձակվել են ակտիվիստներ Հայկակ Արշամյանի և Սուրեն Սաղաթելյանի վրա, երբ վերջիններս տուն էին վերադառնում Մաքսային միությանը Հայաստանի անդամակցության որոշման դեմ բողոքի ակցիայից հետո: Դատաբժշկական փորձաքննության արդյունքում պարզվել է, որ Հայկակ Արշամյանը և Սուրեն Սաղաթելյանը բազմաթիվ վնասվածքներ են ստացել: Հայկակ Արշամյանը ներկայացնում է Երևանի մամուլի ակումբը, իսկ Սուրեն Սաղաթելյանը՝ «Վորլդ Վիժն Հայաստան» կազմակերպությունը: Երկու կազմակերպություններն էլ ակտիվ մասնակցություն են ունեցել ԵՄ Արևելյան գործընկերության քաղաքացիական հասարակության ֆորումին:[135]

Լրացուցիչ տեղեկություններ՝ 2013թ. սեպտեմբերի 16-ին ոստիկանության տարածած հաղորդագրության համաձայն՝ «Սեպտեմբերի 13-ին ոստիկանության Կենտրոնականի բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 113-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ և 6-րդ կետերով և 118-րդ հոդվածի հատկանիշներով հարուցվել է քրեական գործ և կատարվում է նախաքննություն»:[136]

2014թ. սեպտեմբերի 1-ի դրությամբ ակտիվիստների վրա հարձակում գործողները չեն բացահայտվել:

---

[134]«Կոմիտաս 5-ում շարունակվում է շինարարությունը», http://www.irakan.info/full_spec.php?id=4085#sthash.4kis7S6k.dpuf

[135] «Ռեժիմը նորից սկսում է ջղաձգվել», http://www.asparez.am/news-hy/haykak-suren/

[136] «Բռնությունները բացահայտվում են», http://www.police.am/en/news/view/բռնությունները-բացահայտվում-են.html

Վերաբերելի իրավունքներ՝ Ազատության և անձեռնմխելիության իրավունք, Կյանքի իրավունք, Արդար դատաքննության իրավունք

Դեպք 40. Ավագանու նիստի մասնակցությունը խոչընդոտվել է

Ամսաթիվ՝ 2013թ. սեպտեմբերի 10

Նկարագրություն՝ 2013թ. սեպտեմբերի 10-ին ժամը 11:00-ի սահմաններում ոստիկանները բերման են ենթարկել 7 ակտիվիստների՝ Սուրեն Սահակյանին, Կարեն Հարությունյանին, Ռուզաննա Գրիգորյանին, Հասմիկ Գրիգորյանին, Վահագն Մինասյանին, Սոնա Մսրյանին և Գոհար Սարոյանին, ովքեր փորձում էին մուտք գործել Երևանի քաղաքապետարան ավագանու նիստին մասնակցելու նպատակով:[137]

Լրացուցիչ տեղեկություններ՝ Ժամը 15:00-ին բոլոր 7 ակտիվիստներն ազատ են արձակվել: Նրանց մեղադրանք է առաջադրվել ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 182-րդ հոդվածի հատկանիշներով, այն է՝ոստիկանների օրինական պահանջը չկատարելը: Ակտիվիստները հակընդդեմ հայցեր են ներկայացրել իրենց խոսքի և արտահայտվելու ազատության, հավաքների և միավորումների ազատության, ազատ տեղաշարժվելու իրավունքի, անձի ազատության և անձեռնմխելիության իրավունքի խախտման վերաբերյալ: Նրանք հայտնել են, որ նրանց դեմ ուղղված ոստիկանների գործողություններն իրավաչափ չէին: Միջադեպի դատաքննությունը շարունակվում է:

Վերաբերելի իրավունքներ՝ Ազատության և անձեռնմխելիության իրավունք, Ազատ տեղաշարժի իրավունք, Խոսքի և արտահայտման ազատություն, Որոշումների կայացմանը մասնակցելու իրավունք, Տեղեկատվության ազատություն

Դեպք 41. Ակտիվիստների մեքենաները վնասվել են

Ամսաթիվ՝ 2013թ. սեպտեմբերի 19

---

[137] «Քաղաքապետարանի մոտից ակտիվիստների են բերման ենթարկել, շենք չեն թողնում անգամ լրագրողներին», http://www.epress.am/2013/09/10/քաղաքապետարանի-մոտից-ակտիվիստների-ե.html

Նկարագրություն՝ Քանի որ Երևանի քաղաքապետարանի մոտ անցկացվող նստացույցի մասնակիցներին չի թույլատրվել վրաններ տեղադրել, նրանք որպես պատսպարան օգտագործել են իրենց մեքենաները: Սեպտեմբերի 19-ի գիշերը քաղաքապետարանի դիմաց կայանված մասնակիցների երկու մեքենաներին խորհրդային արտադրության «Զիլ» բեռնատար է բախվել:[138]

Լրացուցիչ տեղեկություններ՝ Բեռնատարի վարորդն ասել է, որ այդ պահին աչքը կպել է, և ինքը չի կարողացել վերահսկել մեքենայի ընթացքը: 2013թ. սեպտեմբերի 21-ին ոստիկանության ծառայողները ակտիվիստներ Սուրեն Սահակյանից և Վահագն Մինասյանից պահանջել են տեղափոխել քաղաքապետարանի դեմ կայանված իրենց ավտոմեքենաները: Վահագն Մինասյանը հրաժարվել է տեղափոխել մեքենան, ինչի արդյունքում մեքենան քարշակով տեղափոխել են տուգանային հրապարակ: Քիչ անց տեղափոխել են նաև Սուրեն Սահակյանի մեքենան: Վահագն Մինասյանը և Սուրեն Սահակյանը բերման են ենթարկվել ոստիկանի օրինական պահանջին չենթարկվելու համար (Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 182-րդ հոդված):[139] Ակտիվիստները նույն օրն ազատ են արձակվել: Արգելելով քաղաքապետարանի մոտ ակտիվիստների մեքենաների կայանումը՝ ոստիկանները նրանց զրկել են միակ կացարանից:[140]

Վերաբերելի իրավունքներ՝ Հավաքների և միավորումների ազատություն, Սեփականության իրավունք,

Դեպք 42. Վոլոդյա Ավետիսյան

Ամսաթիվ՝ 2013թ. սեպտեմբերի 20

Նկարագրություն՝ 2013թ. մայիսին Վոլոդյա Ավետիսյանը նստացույց է հայտարարել՝ բարձրաձայնելով Արցախյան պատերազմի վետերաններին մտահոգող սոցիալական խնդիրները: Նրան սատարել են մի քանի այլ վետերաններ, ովքեր մասնակցել են Երևանում անցկացված բողոքի ակցիաներին և անգամ նրա հետ մեկնել են տարբեր քաղաքներ՝ իրենց

---

[138] «Զարդուփշուր են արել ակտիվիստների մեքենան», http://www.aravot.am/2013/09/19/387225/

[139] «Ակտիվիստներին քաղաքապետարանի մոտից տեղափոխել են ոստիկանություն», http://www.epress.am/2013/09/21/ակտիվիստներին-քաղաքապետարանի-մոտից.html

[140] «Ոստիկանները քաղաքապետարանի դիմաց խիստ վերահսկողություն են սկսել», http://www.aravot.am/2013/09/23/388807/

աջակիցներին համախմբելու և նրանց ձայնը լսելի դարձնելու համար: Կառավարության ներկայացուցիչներին հետ հանդիպումից հետո Վոլոդյա Ավետիսյանը համոզվել է, որ իրենց բարձրացրած խնդիրները լուծում չեն ստանա:[141] Նստացույցի ողջ ընթացքում Ավետիսյանին և նրա կողմնակիցներին ահաբեկել են և անգամ գումար են խոստացել նստացույցը դադարեցնելու դիմաց:

2013թ. սեպտեմբերի 19-ին, Վոլոդյա Ավետիսյանի ընտանիքին հեռախոսազանգով տեղեկացրել են, որ նա Ռազմական ոստիկանությունում է: Նույն թվականի սեպտեմբերի 20-ին Ավետիսյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով (խոշոր չափերով կատարված խարդախություն): Ըստ մեղադրական եզրակացության՝ Ավետիսյանը 2013թ. հուլիսի 29-ին Ա. Մաթոսյանից պահանջել է 500 ԱՄՆ դոլար գումար ԼՂՀ զորամասերից մեկում ծառայություն անցնող նրա որդուն նույն զորամասում համակարգչային օպերատոր նշանակելու համար:[142].

Ավետիսյանի կողմնակիցները համոզված են, որ նրան առաջադրված երկու մեղադրանքներն էլ կեղծ են, իսկ Ավետիսյանը քաղաքական բանտարկյալ է:

Լրացուցիչ տեղեկություններ՝ Չնայած գործով ենթադրյալ տուժողի և կալանքի համար բավարար հիմքերի բացակայությանը՝ նախաքննության ողջ ընթացքում Ավետիսյանին կալանքի տակ են պահել: Թեև պաշտոնական մեղադրական եզրակացության մեջ ներառված է միայն վերոնշյալ մեղադրական հոդվածը, որը մնացել է անփոփոխ, 2014թ. ապրիլի 2-ին մեղադրողն Ավետիսյանին ևս մեկ մեղադրանք է առաջադրել առ այն, որ նա իբր 2000 ԱՄՆ դոլար է ստացել Հ. Ձաքարյանից՝ նրա որդուն պարտադիր զինվորական ծառայությունից ազատելու համար:[143] Մինչ Ավետիսյանը կալանավորված էր, նրա որդիներից մեկը զորակոչվել է ծառայության՝ չնայած այն հանգամանքին, որ նրա առողջական վիճակը ծանր է, և նա նախկինում ճանաչվել է ժամկետային զինվորական ծառայության համար ոչ պիտանի: Ավետիսյանի ընտանիքի անդամները պնդում են, որ եթե

---

[141]«Ազատամարտիկ Վոլոդյա Ավետիսյանը ձերբակալվել է խարդախության մեղադրանքով», http://www.aysor.am/am/news/2013/09/20/volodya-avetisyan-1/

[142] Վոլոդյա Ավետիսյանի դատաքննությունը, http://datalex.am/dl_case_view_page.php?caseType=1&courtID=0&caseID=14918173765708800

[143]Ազատամարտիկ Վոլոդյա Ավետիսյանի գործով տուժող չկա, http://www.lrahos.com/ազատամարտիկ-վոլոդյա-ավետիսյանի-գործ-2/

Ավետիսյանը կարողանար որևէ մեկին ազատել ծառայությունից, նա կազատեր նաև իր որդուն, ով ծառայության անցնելուց անմիջապես հետո հայտնվել է զինվորական հոսպիտալում:

Մեղադրողը Վոլոդյա Ավետիսյանի համար 6,5 տարի ազատազրկում է պահանջել: 2014 թվականի հուլիսին Վոլոդյա Ավետիսյանը դատապարտվել է 6 տարի ազատազրկման:[144]

Վերաբերելի իրավունքներ՝ Հավաքների և միավորումների ազատություն, Ազատության և անձեռնմխելիության իրավունք, Արդար դատաքննության իրավունք

Դեպք 43. Փակ շուկա

Ամսաթիվ՝ 2013թ. հոկտեմբերի 9

Նկարագրություն՝ Հոկտեմբերի 9-ին ԱԺ ՀՀԿ խմբակցության պատգամավոր, գործարար Սամվել Ալեքսանյանին պատկանող Փակ շուկայի մոտ երկու ակցիա է տեղի ունեցել: Մեկը կազմակերպել է «Ազատագրենք հուշարձանը օլիգարխից» նախաձեռնությունը՝ պահանջելով նախկին տեսքի բերել պատմական հուշարձան հանդիսացող շենքը, իսկ մյուսը՝ Ալեքսանյանի համակիրները: Վերջիններս սուլել են և նախաձեռնության մասնակիցների հասցեին վանկարկել՝ «Թուրքեր հեռացեք», «Ո՛չ օտարերկրյա լրտեսներին», «Դավաճաններ», «Աշխատատեղ»:[145]

Բողոքի երկու ակցիաների մեկական մասնակից բերման է ենթարկվել: Նրանցից մեկն ակտիվիստ Արեն Մանուկյանն էր, իսկ մյուսը՝ հարակից շենքի բնակչուհի էր, ով, ըստ ակտիվիստների, մի քանի օր շարունակ սադրիչ գործողությունների է դիմել ցուցարարների շրջանում:[146]

Լրացուցիչ տեղեկություններ՝ Մի քանի ժամ անց ակցիաների երկու մասնակիցներն ազատ են արձակվել, նրանց որևէ մեղադրանք չի առաջադրվել:

---

[144]«Մեղադրողը պահանջեց Վոլոդյա Ավետիսյանին դատապարտել 6,5 տարվա ազատազրկման», http://www.pastinfo.am/hy/node/45343

[145] ՖՈՏՈՇԱՐՔ. Ակցիա ի պաշտպանություն պատգամավորական բիզնեսի, http://www.epress.am/2013/10/09/ֆոտոշարք-ակցիա-ի-պաշտպանություն-պատգ.html

«Թուրքեր հեռացեք». Օլիգարխի համակիրները «թշնամիներին» դիմավորեցին նորաբաց Փակ շուկայի մոտ, http://www.epress.am/2013/10/09/240888.html

[146] Ծածկած շուկայի մոտ ակցիայի մասնակիցներից 2-ին ոստիկանություն տարան, http://www.panorama.am/am/society/2013/08/31/closed2/

Վերաբերելի իրավունքներ՝ Հավաքների և միավորումների ազատություն, Խտրականությունից զերծ մնալու իրավունք, Ազատության և անձեռնմխելիության իրավունք

Դեպք 44. Մահացած զինծառայողների մայրեր

Ամսաթիվ՝ 2013թ. հոկտեմբերի 10

Նկարագրություն՝ 2013թ. հոկտեմբերի 10-ին նախագահական նստավայրի դիմաց բողոքի ակցիա են անցկացրել բանակում խաղաղ պայմաններում զոհված զինվորների մայրերը: Մոտակայքում գտնվող ոստիկանները հորդորել են կանանց հեռանալ, քանի որ այդտեղ կանգնել չէր կարելի: Սակայն կանայք հրաժարվեցին հեռանալ մինչև իրենց չհատկացվի օր՝ Սերժ Սարգսյանի հետ հանդիպելու համար: Այնուհետև ոստիկանները սկսել են հրել և քաշքշել կանանց, ինչի հետևանքով նրանցից մեկն ընկել է գետնին: Որոշ ժամանակ նա հրաժարվում էր ոտքի կանգնել:[147]

Լրացուցիչ տեղեկություններ՝ Միջադեպը մնացել է անհետևանք:

Վերաբերելի իրավունքներ՝ Հավաքների և միավորումների ազատություն, Խոշտանգումից և անմարդկային կամ նվաստացնող վեաբերմունքից ու պատժից զերծ մնալու իրավունք

Դեպք 45. Ակտիվիստներին չեն թույլատրել մասնակցել ավագանու նիստին

Ամսաթիվ՝ 2013թ. հոկտեմբերի 31

Նկարագրություն՝ Հինգշաբթի վաղ առավոտից «Հայ ազգային կոնգրես», «Ժառանգություն» և «Հայազն» կուսակցությունների երիտասարդական թևերի ակտիվիստները փորձել են մուտք գործել Երևանի քաղաքապետարան՝ մասնակցելու ավագանու նիստին: Թեև ավագանու նիստերը դռնբաց են, ոստիկանները թույլ չեն տվել նրանց ներս մտնել և բերման են ենթարկել Վահագն Մինասյանին և Դվին Իսանյանսին: Ակտիվիստները կազմել են հայտարարություն, որտեղ ներառել են այն բոլոր հարցերը, որոնք ցանկանում էին բարձրացնել ավագանու նիստին: Մասնավորապես, նրանք պահանջել են անհապաղ չեղյալ համարել տրանսպորտի ուղեվարձի

[147] Քաշքշուկ նախագահականի մոտ. զոհված զինվորների մայրերին հեռացրեցին, http://www.epress.am/2013/10/10/240946.html

թանկացման մասին որոշումը (որոշումն արդեն կասեցված էր) և աշխատանքից ազատել կոռումպացված պաշտոնյաներին:[148]

Լրացուցիչ տեղեկություններ՝ Երկու ժամ անց ակտիվիստներն ազատ են արձակվել:

Վերաբերելի իրավունքներ՝ Ազատության և անձեռնմխելիության իրավունք, Խոսքի և արտահայտման ազատություն, Որոշումների կայացմանը մասնակցելու իրավունք, Տեղեկատվության ազատություն

Դեպք 46. Շանթ Հարությունյան և մյուսներ

Ամսաթիվ՝ 2013թ. նոյեմբերի 5

Նկարագրություն՝ 2013թ. հոկտեմբերի 31-ին «Ցեղակրոն» կուսակցության նախագահ և Արցախյան պատերազմի վետերան Շանթ Հարությունյանն Ազատության հրապարակում հայտարարել է նստացույց «Ես սկսում եմ հեղափոխություն» կարգախոսով: Նա կոչ էր անում գործող վարչակարգը տապալելու հետ մեկտեղ հեղաշրջել նաև արժեքները: Արցախյան պատերազմի մի շարք այլ վետերաններ համերաշխություն են հայտնել Հարությունյանին և միացել նստացույցին:

Մեկ շաբաթ տևած նստացույցի ընթացքում Շանթ Հարությունյանը և նրա կողմնակիցները պատրաստել են Գայ Ֆոքսի միջազգային օրվան նվիրված նոյեմբերի 5-ի դիմակներով երթին: Երթից առաջ Հարությունյանը հայտարարել է, որ խումբը զինվել է քարերով, բենզինի շշերով, փայտերով և որոշ ինքնաշեն ձայնային պայթուցիկներով, որպեսզի ոստիկանները զենք չօգտագործեն նրանց դեմ, իսկ հակառակ դեպքում կենդանի մնացածները կվերադառնան հրազենով:

Շանթ Հարությունյանի այդ հայտարարությունից հետո ոստիկանները չփորձեցին որևէ կերպ խոչընդոտել երթը կամ վերոնշյալ նյութերի կամ իրերի օգտագործումը: Փոխարենը, քաղաքացիական հագուստով ոստիկաններ վեճ հրահրեցին Մաշտոցի պողոտայում, ինչի արդյունքում ցուցարարները հարկադրված էին կռիվ սկսել և օգտագործել ձայնային պայթուցիկները և փայտերը: Պայթյուններից հետո սկսվեց ոստիկանների և ցուցարարների ընդհարումը: Հարությունյանի

[148] Ուղեվարձի կռիվ. ակտիվիստները բողոքում են տրանսպորտի ուղեվարձի բարձրացման դեմ, երկուսը բերման են ենթարկվել, http://www.armenianow.com/hy/news/49669/armenia_public_transport_yerevan_fares_protest

որդի Շահենի խոսքերով՝ առաջին պայթյունն իր հոր գրպանում եղավ, և նա պատկերացում անգամ չուներ պայթյունի մասին՝ համոզված լինելով, որ երթն անցնելու է խաղաղ պայմաններում:

Տասնչորսամյա Շահենը նստացույցի առաջին օրերից հոր մոտ էր և խոսելով նոյեմբերի 5-ի իրադարձությունների մասին՝ հայտնեց, որ հիշում է միայն այն դրվագը, թե ինչպես էր փորձում ոստիկանների մահակներից պաշտպանել երիտասարդ աղջկա, հարվածներ ստացել գլխին և դեմքին և այնուհետև ինչպես են ոստիկանները բռնի ուժով նրան նստեցրել տաքսի և դաժան ծեծի ենթարկել ոստիկանության բաժին գնալու ճանապարհին:

Ոստիկանությունը բերման է ենթարկել 38 մարդու, որոնցից կալանավորվել են՝ Շանթ Հարությունյանը, Վահե Մկրտչյանը, Լիպարիտ Պետրոսյանը, Ալեք Պողոսյանը, Միսաք Առաքելյանը, Ալբերտ Մարգարյանը, Հայկ Հարությունյանը, Արմեն Հովհաննիսյան, Վարդան Վարդանյանը, Սևակ Մնացականյանը, Ավետիս Ավետիսյանը, Անուշավան Գրիգորյանը, Տիգրան Պետրոսյանը, և Մկրտիչ Հովհաննիսյանը:[149]

Լրացուցիչ տեղեկություններ՝ ԱԺ պատգամավոր Նիկոլ Փաշինյանը հանդիպել է կալանավորված Շանթ Հարությունյանին և պարզել, որ նրան ծեծի են ենթարկել ոստիկանապետը և փոխոստիկանապետը: Քրեակատարողական հաստատություններում հասարակական դիտորդների խմբի փորձագետ, իրավապաշտպան Արթուր Սաքունցի հետ զրույցում Շանթ Հարությունյանը նույնպես հաստատել է ծեծի ենթարկվելու փաստը: Այդուհանդերձ, ոստիկանությունը հերքել է մեղադրանքները: Ի դեպ, Փաշինյանին կամայականորեն արգելել են տեսակցել բանտարկյալին քրեակատարողական հիմնարկ այցելելու իր առաջին օրը՝ չնայած ԱԺ պատգամավորներն ունեն նման հաստատություններ ցանկացած պահի անխափան մուտք գործելու իրավունք:

2013թ. նոյեմբերի 21-ին Շանթ Հարությունյանին տեղափոխել են Նուբարաշենի հոգեբուժական կլինիկա՝ դատահոգեբուժական փորձաքննություն անցկացնելու նպատակով, ինչը տևել է 24 օր: Քննիչը պնդել է նման փորձաքննության անցկացման անհրաժեշտությանը, քանի որ Շանթ Հարությունյանը մասնակցել է 2008 թվականի նախագահական ընտրություններին հաջորդած բողոքի ցույցերին,

[149]«Բախում Երևանի կենտրոնում. Բազմաթիվ քաղաքացիներ բերման են ենթարկվել», http://www.azatutyun.am/content/article/25159068.html

ձերբակալվել է մարտի 1-ի գործով և ճանաչվել է անմեղսունակ: Դատահոգեբուժական փորձաքննության են ուղղորդել նաև ցուցարար Անուշավան Գրիգորյանին:

Շանթ Հարությունյանի կինը և ինքը Շանթն իր տեղափոխումը հոգեբուժական հաստատություն համարում են պատժամիջոց, և ամենայն հավանականությամբ այդտեղ սադրանքների միջոցով փորձելու էին ապացուցել նրա անգործունակությունը: Թեև վերջին տարիների ընթացքում արձանագրվել են բազմաթիվ դեպքեր, երբ մարդկանց տեղափոխում են հոգեբուժական հաստատություն և անգործունակ ճանաչում որոշակի սոցիալական և տնտեսական դրդապատճառներով, շատ հնարավոր է, որ Հարությունյանին և Գրիգորյանին հոգեբուժական կլինիկա են տեղափոխել՝ փորձելով դիմել հոգեբուժության հնարքների միջոցով այլախոհներին լռեցնելու գործելաոճին, որը ներկայումս վերածնունդ է ապրում հետխորհրդային ավտորիտար վարչակարգը պահպանած մի շարք երկրներում: Դատահոգեբուժական փորձաքննությամբ Շանթ Հարությունյանը ճանաչվել է գործունակ և կրկին տեղափոխվել է քրեակատարողական հաստատություն: Անուշավան Գրիգորյանը ճանաչվել է անգործունակ:

2013թ. դեկտեմբեի 24-ին Շանթ Հարությունյանը և մի քանի այլ կալանավորներ հացադուլ են հայտարարել՝ պահանջելով թույլատրել ընտանիքի անդամների հետ տեսակցությունը: Ի վերջո, տեսակցության արգելքը վերացվել է, սակայն այդ ընթացքում Շանթ Հարությունյանի առողջական վիճակը վատթարացել է:

Շանթ Հարությունյանի գործով դատաքննությունը սկսվել է 2014թ. հունիսի 12-ին, իսկ Անուշավան Գրիգորյանի գործը քննվում է առանձին վարույթով:

Վերաբերելի իրավունքներ՝ Հավաքների և միավորումների ազատություն, Ազատության և անձեռնմխելիության իրավունք, Խոշտանգումից և անմարդկային կամ նվաստացնող վեաբերմունքից ու պատժից զերծ մնալու իրավունք

Դեպք 47. Խուդոյանների ընտանիքը

Ամսաթիվ՝ 2013թ. դեկտեմբերի 2

Նկարագրություն՝ 2013թ. դեկտեմբերի 2-ի վաղ առավոտյան առանց համազգեստի և տարբերանշանների մի խումբ ոստիկաններ նախագահական նստավայրի դիմացի տարածքից բռնությամբ հեռացրել են Աշոտ Խուդոյանին, նրա

կնոջը՝ Հեղինե Խուդոյանին և նրանց երեխաներին: Խուդոյանների ընտանիքը նստացույց էր հայտարարել դեռևս 2013թ. նոյեմբերի 28-ին: Ոստիկաններն այնքան էին շտապում ազատել տարածքը, որ մոռացել էին փողոցում ստվարաթղթե արկղում քնած Խուդոյանների ծծկեր երեխային: Ակտիվիստներին հաջողվել է տեսանկարել, թե ինչպես ոստիկանները վերադարձան և վերցրին երեխային ի նշան բողոքի նույն տարածքում նստացույց հայտարարած տարեց կնոջ ձեռքերից: Այնուհետև Խուդոյանների ընտանիքը տեղափոխեցին Վաղարշապատ քաղաքում գտնվող իրենց տունը, և ըստ էության, տնային կալանքի ենթարկեցին:[150]

Լրացուցիչ տեղեկություններ՝ Ընտանիքն օգնության է դիմել ՀՔԱ Վանաձորի գրասենյակ: 2014 թվականի փետրվարին ՀՔԱ Վանաձորի գրասենյակը հանցագործության մասին հաղորդում է ներկայացրել ՀՀ հատուկ քննչական ծառայություն: Հանցակազմի բացակայության հիմքով ՀՔԾ քննիչը հրաժարվել է քրեական գործ հարուցել: Քննիչի որոշումը բողոքարկվել է դատարանում, սակայն բողոքարկման դիմումը մերժվել է: ՀՔԱ Վանաձորի գրասենյակը դիմել է նաև ՀՀ վարչական դատարան ոստիկանների գործողությունների իրավաչափության, ինչպես նաև ազատ տեղաշարժվելու իրավունքի և անձի ազատության ու անձեռնմխելիության իրավունքի խախտման մասին որոշում կայացնելու հայցով: Իրավունքների խախտման մասով դիմումը չի ընդունվել: Ոստիկանների գործողությունների իրավաչափության մասին հայցի դատաքննությունը շարունակվում է:

Վերաբերելի իրավունքներ՝ Խոսքի և արտահայտման ազատություն, Ազատության և անձեռնմխելիության իրավունք, Անձնական կյանքը հարգելու իրավունք, Ազատ տեղաշարժի իրավունք

Դեպք 48. Պուտինի այցը

Ամսաթիվ՝ 2013թ. դեկտեմբերի 2

Նկարագրություն՝ Ինչպես Վլադիմիր Պուտինի այցի, այնպես էլ նախապատրաստական աշխատանքների ընթացքում ոստիկանության և ազգային անվտանգության զորքերի ծառայողներն ապօրինի խուզարկություն էին կատարում

[150] «Բերման է ենթարկվել 110 քաղաքացի. ոստիկանություն», http://civilnet.am/2013/12/02/110-citizens-detained-police/

ակտիվիստների բնակարաններում, սահմանափակում էին քաղաքացիների ազատ տեղաշարժի իրավունքը Երևանում և Գյումրիում, որտեղ ՀՀ և ՌԴ նախագահները մասնակցելու էին հայ-ռուսական տնտեսական ֆորումին: Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինի՝ Հայաստանի կատարած պաշտոնական այցի օրը Երևանում մեծ թվով խաղաղ ցուցարարներ են դուրս եկել փողոց՝ բողոքելով Մաքսային միությանը, իսկ հետագայում նաև Եվրասիական միությանը Հայաստանի հարկադրական անդամակցության դեմ: Ցուցարարները շարժվել են ոստիկանությանը և քաղաքային իշխանություններին ուղարկված հրատապ ծանուցման մեջ նշված երթուղով, այսինքն՝ իշխանությունները տեղեկացվել են բողոքի ակցիայի և դրա խաղաղ բնույթի մասին:

Բողոքի երթուղու վրա տեղակայված ոստիկանության զորքը անհամաչափ ուժ է գործադրել ցուցարարների դեմ՝ առանց պատշաճ հիմքերի նրանց բերման ենթարկելով: Ցուցարարներից շատերին պարզապես առևանգել են տարածքից՝ բողոքի ակցիայի ընթացքը թուլացնելու և կազմակերպիչներին մեկուսացնելու նպատակով: Արդյունքում բռնի ուժով բերման են ենթարկվել 110 խաղաղ ցուցարար, ովքեր ութ ժամ մնացել են կալանքի տակ՝ զրկված իրավաբանական օգնության կամ փաստաբանի դիմելու հնարավորությունից: Այդ ցուցարարների շարքում էին հայտնի ակտիվիստներ և լրագրողներ Լևոն Բարսեղյանը, Զարուհի Հովհաննիսյանը, Դավիթ Սանասարյանը, Լալա Ասլիկյանը և շատ ուրիշներ: Իսկ «Hraparak.am» լրատվական կայքի թղթակից Վարդան Մինասյանին ոստիկանները դաժան ծեծի են ենթարկել:

Բողոքի երթի ընթացքում երթի մասնակից «Հայազն» կուսակցության անդամները մի քանի անգամ հարձակվել են ծիածանագույն դրոշը պարզած ակտիվիստների՝ Լալա Ասլիկյանի և Սևակ Կիրակոսյանի վրա:[151] Ոստիկանությունը ոչ միայն որևէ կերպ չի աջակցել Ասլիկյանին և Կիրակոսյանին, այլև երկուսին էլ բերման է ենթարկել: Լալա Ասլիկյանի տեսախցիկը ապօրինի առգրավվել է ոստիկանության կողմից:

Ոստիկանները բռնություն են գործադրել բերման ենթարկված ցուցարարների հանդեպ: Դեկտեմբերի 2-ին տեղի ունեցած իրադարձությունների ժամանակագրությունը ներկայացված է «Lragir.am» լրատվական կայքի լրագրող Թեհմինե Ենոքյանի և Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի

[151] Լալա Ասլիկյան. «ՄՄ-ին անդամակցող երկրներում ոտնահարվում են նույնասեռականների իրավունքները», http://www.aravot.am/2013/12/03/411334/

գրասենյակի կողմից պատրաստված վավերագրական տեսանյութում:[152]

Լրացուցիչ տեղեկություններ՝ Հաջորդ օրը ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանը տարածել է հայտարարություն, որտեղ իր մտահոգությունն է հայտնել դեկտեմբերի 2-ին ոստիկանության ձեռնարկված գործողությունների վերաբերյալ: Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի թեժ գծին ստացվել է 30 ահազանգ տասնյակ քաղաքացիներին բերման ենթարկելու վերաբերյալ:[153] Ոստիկանությունից հայտնել են, որ «ոստիկանության ծառայողի օրինական պահանջը չկատարելու» համար 43 քաղաքացի կենթարկվի վարչական պատասխանատվության (նշված իրավախախտման համար նախատեսվող վարչական տույժը կազմում է 50 000 դրամ): 62 քաղաքացի վարչական պատասխանատվության կենթարկվի «հավաքի բնական և խաղաղ ընթացքի ապահովմանն ուղղված ոստիկանության ծառայողի պահանջները չկատարելու» համար (վարչական տույժը կազմում է 50 000–100 000 դրամ): Մեկ քաղաքացու մեղադրանք կներկայացվի ինչպես ոստիկանության ծառայողի պահանջը չկատարելու (50 000 դրամ), այնպես էլ հավաքի մասնակցի օրենքով նախատեսված պարտավորությունները չկատարելու (50 000 – 200 000 դրամ) համար: 3 քաղաքացի կենթարկվեն վարչական տույժի 20 000–60 000 դրամի սահմաններում «հանրային տարածքի օգտագործման կանոնները խախտելու» համար: Ոստիկանության տարածած հայտարարությունում նշվում է, որ քաղաքացիները «մեկուսացվել են հավաքի վայրից, վարչական պատասխանատվության ենթարկելու նպատակով բերվել ոստիկանություն և կարճ ժամանակ անց ազատ արձակվել»: Իսկ քաղաքացիներն ու նրանց փաստաբանները պնդում են, որ իրականում ազատ տեղաշարժի, հավաքների ազատության և սահմանադրական մի շարք այլ իրավունքների խախտումներով հանդերձ, ոստիկանությունում մնացել են ավելի քան 6 ժամ:[154]

Ոստիկանությունը վարչական վարույթ է սկսել և հայցեր ներկայացրել ցուցարարների դեմ, բայց 2014 թվականի մարտին հետ է վերցրել որոշ հայցերը: Դատաքննությունը շարունակվում է

---

[152] Դեկտեմբերի 2-ի թղթապանակ, https://www.youtube.com/watch?v=8nSBvyKh08A

[153] «Օմբուդսմենը խորին մտահոգություն է հայտնում երեկ տեղի ունեցած միջադեպերի վերաբերյալ», http://ombuds.am/guard/view/article/427/type/1/page/119

[154] «Նախօրեին բերման ենթարկված քաղաքացիներին դրամական տուգանքներ են սպառնում», http://www.azatutyun.am/content/article/25188884.html

Վերաբերելի իրավունքներ՝ Ազատության և անձեռնմխելիության իրավունք, Արդար դատաքննության իրավունք, Հավաքների և միավորումների ազատություն

Դեպք 49. Գոռ Առաքելյան

Ամսաթիվ՝ 2013թ. դեկտեմբերի 4

Նկարագրություն՝ Ժամը 1:00-ի սահմաններում տուն վերադառնալու ճանապարհին ակտիվիստ Գոռ Առաքելյանը նկատեց մայթին կանգնած երեք անհայտ անձանց, ովքեր ակնհայտորեն իրեն էին սպասում: Նրանք սկսեցին հայհոյել և ծեծել Առաքելյանին: Առաքելյանը փորձեց հավաստիացնել անծանոթներին, որ խնդիր չունի նրանց հետ, և ավելի լավ է նրանք շարունակեն իրենց ճանապարհը: Սակայն անհայտ տղամարդիկ շարունակեցին ծեծել արդեն գետնին տապալված Առաքելյանին: Այնուհետև նա նկատեց մի քանի ոստիկանների, ովքեր հարձակվեցին իր վրա, ոլորեցին թևերը և հրահանգեցին հանգստանալ: Ոստիկանները բռնել էին Առաքելյանի թևերը, իսկ անհայտ անձինք շարունակում էին ծեծել նրան: Քիչ անց ոստիկաններից մեկը հրամայեց դադարեցնել ծեծը՝ ասելով՝ «ապե, լավ, ականջից արյուն ա գալիս արդեն»:[155]

Լրացուցիչ տեղեկություններ՝ Առաքելյանը ոստիկանություն չի դիմել, քանի որ անիմաստ է համարել դա: Նա չի գնացել նաև հիվանդանոց: Առաքելյանը Երևանի քաղաքապետարանի մոտ նստացույցը կազմակերպած ակտիվիստներից էր:[156]

Վերաբերելի իրավունքներ՝ Ազատության և անձեռնմխելիության իրավունք, խոշտանգումից և անմարդկային կամ նվաստացնող վեաբերմունքից ու պատժից զերծ մնալու իրավունք

Դեպք 50. Ամանորյա լույսեր

Ամսաթիվ՝ 2013թ. դեկտեմբերի 17

Նկարագրություն՝ Դեկտեմբերի 17-ին ժամը 19:00-ի սահմաններում քաղաքապետարանի կողմից կազմակերպված միջոցառման ժամանակ մի խումբ ակտիվիստներ «Տարո՛ն,

---

[155] «Ոստիկաններն ու քրեական տարրերը դիմել են փախուստի», http://forrights.am/?ln=1&id_=8&page_id=64

[156] Տե՛ս նախորդ նշումը

սիրուն չի», «Տարոն, թալանչի», «Ամոթ» վանկարկումներով փորձել են մոտենալ Երևանի քաղաքապետ Տարոն Մարգարյանին, ով այդ պահին վառում էր տոնածառի լույսերը:

Ակտիվիստ Գևորգ Սաֆարյանը բարձրախոսով հայտարարել է, որ «այսպես կոչված քաղաքապետը խայտառակում է Երևանը…: Հանցագործ քաղաքապետեր մեզ պետք չեն: Դու բացահայտ անօրինականություններ ես թույլ տալիս, իսկ ձեր հանցավոր լռությամբ այսօր մեր հուշարձաններն են քանդում: Դուք կարող եք միայն խոսել, իսկ գործել չեք կարող…»:

Հենց որ Տարոն Մարգարյանը հեռացավ հրապարակից, Գևորգ Սաֆարյանին և մեկ այլ ակտիվիստ Արմեն Միքայելյանին ուժ կիրառելով նստեցրել են ոստիկանական մեքենան ու տարել ոստիկանություն:[157]

Լրացուցիչ տեղեկություններ՝ Նույն օրը՝ ժամը 22:00-ի սահմաններում «Epress.am» լրատվական կայքի թղթակցին հաջողվել է զրուցել Գ. Սաֆարյանի հետ, ով նշել է, թե ինքն ու Ա. Միքայելյանը գտնվում են ոստիկանության Կենտրոնի բաժնում: Նա նշել է նաև, որ ոստիկանները չեն հայտնել, թե ինչու են իրենց տանում ոստիկանություն, իսկ բերման ենթարկելու ամբողջ ընթացքում իրենց հայհոյել ու հարվածել են: Ժամը 22:42-ի դրությամբ ակտիվիստներն ազատ են արձակվել: Ոստիկանությունում արձանագրություն է կազմվել՝ Վարչական օրենսգրքի 182 հոդվածի հատկանիշներով՝ «ոստիկանության ծառայողի կամ զինծառայողի օրինական կարգադրությանը կամ պահանջին չարամտորեն չենթարկվելը»:[158]

Վերաբերելի իրավունքներ՝ Խոսքի և արտահայտման ազատություն, Ազատության և անձեռնմխելիության իրավունք

Դեպք 51. Գազի գործարքն օրակարգում

Ամսաթիվ՝ 2013թ. դեկտեմբերի 20

Նկարագրություն՝ 2013թ. դեկտեմբերի 20-ին ակտիվիստները խաղաղ բողոքի ակցիա են անցկացրել ՀՀ Ազգային ժողովի շենքի դիմաց՝ պահանջելով Ազգային ժողովում քվեարկության մեկնարկից առաջ չեղյալ հայտարարել

[157]«Տարոն, թալանչի»՝ տոնածառի լույսերը վառելիս. ակտիվիստները բերման ենթարկվեցին, http://www.epress.am/2013/12/17/«տարոն-թալանչի»-տոնածառի-լույսերը-վա.html

[158]Տե՛ս նախորդ նշումը

Ռուսաստանի հետ կնքած գազի գործարքը: Ցուցարարները փորձել են կարճ ժամանակով արգելափակել Բաղրամյան պողոտան:[159] 12 ակտիվիստ բերման են ենթարկվել առանց պատշաճ հիմքերի: Ոստիկանները շղթա են կազմել ակտիվիստների և լրագրողների շուրջ՝ 40 րոպե արգելելով նրանց տեղաշարժը: Անտոն Իվչենկոյին բերման ենթարկելու ընթացքում ոստիկաններից մեկը հարվածել է նրա քթին: Արյունոտված քթով ակտիվիստին տարել են ոստիկանության Արաբկիրի բաժին: Բերման են ենթարկվել նաև ակտիվիստներ Արմեն Մկրտչյանը, Սիփան Փաշինյանը, Գոռ Առաքելյանը, Կարեն Հարությունյանը, Վիլեն Գաբրիելյանը, Վահագն Մինասյանը և Վարդգես Գասպարին:[160]

Լրացուցիչ տեղեկություններ՝ Մի քանի ժամ անց ակտիվիստներն ազատ են արձակվել: Սակայն ոստիկանությունն իր տարածած հայտարարության մեջ հերքել է ցուցարարներին բերման ենթարկելու մասին լուրերը, և պնդել է, որ բերման է ենթարկվել միայն երկու ցուցարար՝ Վարդգես Գասպարին և Անտոն Իվչենկոն: Անտոն Իվչենկոն ենթարկվել է վարչական տուգանքի՝ ոստիկանի օրինական պահանջին չենթարկվելու համար (Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 182-րդ հոդված), իսկ Վարդգես Գասպարին՝ ոստիկանության ծառայողին հրապարակայնորեն վիրավորելու համար (Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 172-րդ հոդված): [161]

Վերաբերելի իրավունքներ՝ Հավաքների և միավորումների ազատություն, Ազատության և անձեռնմխելիության իրավունք, Խոշտանգումից և անմարդկային կամ նվաստացնող վեաբերմունքից ու պատժից զերծ մնալու իրավունք

Դեպք 52. Գազի գործարքի ընդունում

Ամսաթիվ՝ 2013թ. դեկտեմբերի 23

Նկարագրություն՝ 2013 թ. դեկտեմբերի 23-ին անց է կացվել Ազգային ժողովի արտահերթ նիստ քննարկելու 2013թ դեկտեմբերի 2-ին Վլադիմիր Պուտինի՝ Հայաստան կատարած այցի ժամանակ երկու երկրների նախագահների միջև կնքված

---

[159] «Բերում է իրականացվել մի շարք քաղաքացիների նկատմամբ», http://civilnet.am/2013/12/20/protestors-detained/

[160] «Բերման ենթարկելիս ոստիկանները հարվածել են ակտիվիստի քթին», http://www.1in.am/239236.html

[161] «Ոստիկանության հայտարարությունը՝ բերման ենթարկվածների վերաբերյալ», http://civilnet.am/2013/12/20/police-clarification/

համաձայնագրերը: «ՀայՌուսգազարդի» բաժնետոմսերի մնացած մասը ռուսական «Գազպրոմին» կուտակված պարտքերի դիմաց փոխանցելու մասին վիճահարույց որոշումը բողոքի ալիք է բարձրացրել ինչպես Ազգային ժողովում, այդպես էլ դրա պատերից դուրս: Շուրջ հազար մարդ մասնակցում էր ԱԺ դարպասների մոտ անցկացվող բողոքի ցույցին: Իսկ քվեարկությունից առաջ ԱԺ դահլիճում 4 լրագրող բողոքի լուռ ակցիա են անցկացրել՝ պարզելով գազի գործարքի դեմ ուղղված բովանդակությամբ պաստառներ: ՀՀԿ խմբակցության ԱԺ պատգամավոր Առաքել Մովսիսյանը բարձրաձայն անարգել է լրագրողներին՝ նրանց անվանելով կապիկներ և կոպտորեն հրահանգելով նրանց հեռացնել տարածքից:[162]

Լրացուցիչ տեղեկություններ՝ Մի շարք լրատվամիջոցներ հանդես են եկել պատգամավորի պահվածքը դատապարտող հայտարարությամբ, իսկ հենց լրագրողները դիմել են Ազգային ժողովի Էթիկայի հանձնաժողով: 2014թ. հունիսի 2-ին Էթիկայի հանձնաժողովը եզրակացրել է, որ թեև լրագրողները լիազորված չեն եղել նիստը լուսաբանելուց բացի որևէ այլ գործունեություն իրականացնել Ազգային ժողովում, տվյալ ԱԺ պատգամավորն իսկապես խախտել է ԱԺ կանոնակարգով ամրագրված կանոնները և անհարգալից վերաբերմունք է ցուցաբերել ինչպես Ազգային ժողովում հարցի քննարկման մասնակիցների, այդպես էլ լրագրողների նկատմամբ: [163]

Վերաբերելի իրավունքներ՝ Խոսքի և արտահայտման ազատություն, Անձնական կյանքը հարգելու իրավունք

Դեպք 53. Զրպարտության մեղադրանք Վարդգես Գասպարիի դեմ

Ամսաթիվ՝ 2013թ. դեկտեմբերի 25

Նկարագրություն՝ Դատական նիստերից մեկի ժամանակ Վարդգես Գասպարին ասել է ոստիկանության աշխատակցին. «Դուք ավելի ստոր սրիկաներ եք, քան… մարմնավաճառները»: Գասպարին պնդել է, որ ի տարբերություն մարմնավաճառների, ովքեր վաճառում են իրենց մարմինը, ոստիկանները վաճառում են

---

[162] «Լրագրողներն Առաքել Մովսիսյանի հարցով դիմել են ԱԺ Էթիկայի հանձնաժողով», http://civilnet.am/2013/12/27/journalists-national-assembly-ethics-committee/

[163] ՀՀ ԱԺ Էթիկայի հարցերով հանձնաժողովի թիվ Է-2/2014 որոշում, http://parliament.am/committee_docs_5/Etika/02.06.2014_Lragroxner-A.Movsisyan.pdf

մարդկանց ճակատագրերը՝ կաշառքի դիմաց մեկի հանցանքը վերագրելով անմեղ մարդկանց: [164]2013 թվականի դեկտեմբերին, ոստիկան Աիդա Դեմիրխանյանը հայց է ներկայացրել Գասպարիի դեմ զրպարտության համար: Նա Գասպարիի խոսքերը համարել է անձնական վիրավորանք և պահանջել է նրանից 1 միլիոն դրամ բռնագանձել որպես փոխհատուցում:[165]

Լրացուցիչ տեղեկություններ՝ Գործի դատաքննությունը շարունակվում է:

Վերաբերելի իրավունքներ՝ Խոսքի և արտահայտման ազատություն

Դեպք 54. Տարոն Մարգարյանի դոկտորական թեզի պաշտպանությունը

Ամսաթիվ՝ 2013թ. դեկտեմբերի 26

Նկարագրություն՝ 2014 թ. դեկտեմբերի 26-ին մի շարք լրագրողներ փորձել են լուսաբանել Երևանի քաղաքապետ Տարոն Մարգարյանի դոկտորական թեզի պաշտպանությունը Երևանի պետական տնտեսագիտական համալսարանում: Թեև պաշտպանությունը հրապարակային էր, սակայն լրագրողներին չեն թույլատրել մուտք գործել լսարան և նրանց վիրավորանքներ են հասցրել մի խումբ երիտասարդներ, որոնք հրաժարվել են ներկայանալ: Երիտասարդների գործողություններին աջակցել են ներկա ոստիկաններն, ովքեր նույնպես խոչընդոտել են լրագրողների աշխատանքը: Համալսարանի ռեկտոր Կորյուն Աթոյանը պնդել է, որ լրագրողները չեն կարող մտնել լսարան և պնդել է, որ լրագրողները պաշտպանությունը շոուի են վերածում: [166]

Լրացուցիչ տեղեկություններ՝ Բազմաթիվ լրագրողական կազմակերպություններ հայտարարություն են տարածել՝ դատապարտելով երիտասարդների և ոստիկանության աշխատակիցների պահվածքը: Ըստ ոստիկանության միջադեպի վայրում հերթապահություն կատարող

---

[164] «Մարմնավաճառները վաճառում են իրենց մարմինը, ոստիկանները՝ մարդկանց ճակատագրերը». Գասպարին դատարանում պնդել է իր կարծիքը, http://news.am/arm/news/199403.html

[165] Տե՛ս նախորդ նշումը

[166] Ով է խոչընդոտել լրագրողների մուտքը Տարոն Մարգարյանի ատենախոսության պաշտպանությանը, http://m.media.am/Journalists-job-hindered-at-Taron-Margaryans-dissertation-defense

ոստիկաններին տրվել է խիստ նկատողություն: 2014 թ. օգոստոսին երիտասարդներին ուղղորդող անձը, ով ուսանողական խորհրդի նախագահն էր, նշանակվել է համալսարանի պրոռեկտոր:

Վերաբերելի իրավունքներ՝ Տեղեկատվության ազատություն

Ինդեքս

Ընտրական իրավունքներ. Դեպք 2, 3, 6, 12, 13

Հավաքների և միավորումների ազատություն. Դեպք 1, 7, 8, 14, 15, 18, 20, 21, 24, 25, 26, 29, 30, 33, 34, 35, 36, 37, 38, 41, 42, 43, 44, 46, 48, 51

Տեղեկատվության ազատություն. Դեպք 40, 45, 54

Ազատ տեղաշարժի իրավունք. Դեպք 8, 14, 36, 40, 47, 54

Խոսքի և արտահայտման ազատություն. Դեպք 4, 5, 7, 9, 10, 13, 16, 19, 22, 28, 40, 45, 47, 50, 52, 53

Սեփականության իրավունք. Դեպք 10, 12, 21, 23, 29, 30, 35, 41

Խտրականությունից զերծ մնալու իրավունք. Դեպք 1, 7, 10, 16, 17, 24, 27, 30, 31, 32, 34, 43

Խոշտանգումից և անմարդկային կամ նվաստացնող վեաբերմունքից ու պատժից զերծ մնալու իրավունք. Դեպք 2, 8, 9, 14, 29, 36, 44, 46, 49, 51

Արդար դատաքննության իրավունք. Դեպք 2, 3, 4, 5, 6, 8, 10, 11, 12, 14, 15, 16, 17, 18, 19, 20, 21, 22, 23, 24, 26, 27, 28, 29, 30, 31, 32, 35, 37, 39, 42, 48

Ազատության և անձեռնմխելիության իրավունք. Դեպք 8, 9, 12, 15, 17, 20, 22, 26, 28, 29, 30, 33, 38, 39, 40, 42, 43, 45, 46, 47, 48, 49, 50, 51

Կյանքի իրավունք. Դեպք 6, 10, 15, 25, 26, 27, 31, 32, 37, 39

Որոշումների կայացմանը մասնակցելու իրավունք. Դեպք 40, 45

Անձնական կյանքը հարգելու իրավունք. Դեպք 2, 6, 11, 13, 17, 24, 47, 52

Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակի մասին

Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակը /այսուհետ՝ ՀՔԱ Վանաձորի գրասենյակ/ ոչ քաղաքական, ոչ կրոնական, շահույթ չհետապնդող հասարակական կազմակերպություն է, որը միավորում է ժողովրդավարության, հանդուրժողության, բազմակարծության և մարդու իրավունքների գերակայության սկզբունքներն արժևորող անհատների:

ՀՔԱ Վանաձորի գրասենյակը հիմնադրվել է 1998 թվականին որպես ՀՔԱ Հայաստանի կոմիտեի մասնաճյուղ, գրանցվել է 2001 թվականին և վերագրանցվել է 2005 թվականին ՀՀ արդարադատության նախարարությունում: Կազմակերպության գլխավոր գրասենյակը գտնվում է Լոռու մարզկենտրոն Վանաձորում: Կազմակերպությունն ունի ներկայացուցչություններ Սպիտակ և Երևան քաղաքներում: Կազմակերպության գործունեության աշխարհագրությունը ընդգրկում է ինչպես Լոռու մարզը, այնպես էլ հանրապետության ողջ տարածքը:

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի տեսլականն է՝ մարդու արժանապատվության, ժողովրդավարության և խաղաղության գերակա արժեքներով ձևավորված հասարակություն,

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի առաքելությունն է՝ ազգային և տարածաշրջանային մակարդակներում քաղաքացիական նախաձեռնությունների աջակցությունն ու խթանումը, խաղաղասիրական ու իրավապաշտպանական գործունեության հզորացումը:

«Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ»
ՀՀ, ք. Վանաձոր 2001, Տիգրան Մեծի 59,
հեռ. **(+374 322) 4 22 68**; ֆաքս: **(+374 322) 4 12 36,**
Ինտերնետային կայքէջ**: www.hcav.am,** էլ. Փոստ**: hcav@hcav.am**

Վանաձոր 2014